

# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	4
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ.....	6
ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ.....	9
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....	10
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....	14
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ.....	32
ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....	34
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ.....	45
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	55
ՄՇԱԿՈՒՅԹ.....	59
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ.....	88
ՏՐԱՆՍՊՈՐՏ.....	93
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.....	98
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ.....	124
ԽԵԼԱՑԻ ԵՐԵՎԱՆ.....	144
ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵՂՄԱՆՆ ՈՒ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ.....	146
ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	151
ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	166
ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	183
ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	201
ԷՐԵՔՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	214
ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	225

ՄԱԼԱԹԻԱ-ՍԵՔԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	253
ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	281
ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	297
ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	305
ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	332
ՔԱՆԱՔԵՌ-ՉԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	348

**Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանման անվանումը**

h / h	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6

**ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1.	<p>Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով նշված ոլորտներում գործունեության կանոնների և դրանց կիրառման լրացուցիչ պայմանների մշակում</p>	<p>Առևտրի և ծառայությունների ոլորտի առանձին օրենսդրական ակտերի ոչ կատարելագործված, դրանցում ոլորտի նկատմամբ սահմանված կանոնների ու ներկայացվող պահանջների թերի լինելը բացասաբար են անդրադառնում աշխատանքների արդյունավետության ու որակի վրա և ավելացնում ոլորտում իրականացվող գործառույթներից բխող ռիսկերը: Մասնավորապես՝ Երևանի ավագանու կողմից առևտրի և ծառայությունների ոլորտի թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելուց հետո կկատարելագործվի թույլտվությունների տրամադրման գործընթացները:</p>	<p>Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և ծառայությունների վարչության կողմից մշակվել և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվել «Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N 632-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Երևան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին», «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող տարածքներում վաճառքի և վարձույթի նպատակով ավտոտրանսպորտային միջոցների կայանման վայրերի ցանկը հաստատելու մասին» և «Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 718-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Երևան</p>	<p>Առևտրի և ծառայությունների վարչություն, կատարման ժամկետը ամբողջ տարվա ընթացքում</p>	
----	--	---	---	---	--

			քաղաքի ավագանու որոշման նախագծերը, որոնք Երևան քաղաքի ավագանու կողմից ընդունվել են՝ N 719-Ն, 718-Ն, 816-Ն և 854-Ն որոշումներ:		
2.	Բացօթյա ապօրինի առևտրի կանխարգելում և արգելում, արդյունավետությունը բարձրացնելու նպատակով օրենսդրական փոփոխությունների կատարում	Օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարումն ապահովելու, սպառողների իրավունքներն ու շահերը պաշտպանելու, նրանց վերը նշված բացասական հետևանքներից զերծ պահելու նպատակով առաջիկա տարվա ընթացքում կտրուկ միջոցառումներ կձեռնարկվեն բացօթյա ապօրինի առևտրի արգելման ու կանխարգելման ուղղությամբ:	ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է համապատասխան օրենսդրական նախագծերի փաթեթ, ինչի արդյունքում լիազորություն է տրվում ՏԻՄ աշխատակիցներին առգրավել բացօթյա ապօրինի առևտուր իրականացնելու համար անմիջական գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկանները: Հսկողություն է իրականացվել բոլոր 12 վարչական շրջաններում և կազմվել է թվով 1225 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն և առգրավվել է 29800կգ ապրանք:	Առևտրի և ծառայությունների վարչություն, վարչական շրջանների առևտրի, ծառայությունների և գովազդի բաժիններ	
3.	Շաբաթ, կիրակի և տոն օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում	Երևան քաղաքի վարչական շրջաններում պահանջարկ առաջանալու դեպքում աշխատանքներ կտարվեն գյուղատնտեսական արտադրանքի նոր շուկաների կազմակերպման և գործունեության իրականացման ուղղությամբ:	Երևանի քաղաքապետարանը ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ յուրաքանչյուր շաբաթ և կիրակի օրերին Հրազդան մարզադաշտի հարակից տարածքում կազմակերպել է գյուղատնտեսական արտադրանքի տոնավաճառ:	Առևտրի և ծառայությունների վարչություն կատարման ժամկետը 2-4 եռամսյակներ	
4.	Հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայության կազմակերպման կանոնակարգում	Կմշակվի և Երևանի ավագանու քննարկմանը կներկայացվի հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայություն կազմակերպելու պայմանների ու սահմանափակումների վերաբերյալ որոշման նախագիծ, որի ընդունումից հետո նշված գործունեությունը էականորեն կկանոնակարգվի:	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և ծառայությունների վարչության կողմից մշակվել և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվել «Երևան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտա-	Առևտրի և ծառայությունների վարչություն կատարման ժամկետը 1-3 եռամսյակներ	

			գործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը, որը 14.02.2023 թվականին ընդունվել է՝ 718-Ն որոշում: 2023թ. թվով 156 տնտեսվարող սուբյեկտի տրվել է ամառային և 32 տնտեսվարող սուբյեկտի ձմեռային սեզոնի հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվություն:		
5.	Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում (մայթերում, կանաչապատման համար նախատեսված տարածքներում, ճանապարհների բանուկ մասերին կից հատվածներում) կրպակների, տաղավարների և ժամանակավոր այլ շինությունների թվաքանակի կրճատման և ապամոնտաժման, դրանց հետագա գործունեության նպատակահարմարության և օրինականության վերաբերյալ հարցերի ուսումնասիրություն և ապամոնտաժում	Մայրաքաղաքում քաղաքակիրթ առևտուր կազմակերպելու նպատակով առաջիկայում միջոցներ կձեռնարկվեն չգործող, լքյալ, ապօրինի, հողամասի վարձակալության ժամկետը լրացած, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և ծառայությունների ոլորտի կրպակների, ինչպես նաև ապօրինի տեղադրված ավտոմատ սարքավորումների ապամոնտաժման ուղղությամբ:	Ապամոնտաժվել է թվով 27 կրպակ և բենզալցակայան՝ Կորյունի փողոցի թիվ 11 շենքի և Տերյան փողոցի թիվ 42/1, Եգ. Կողբացի-Արամ խաչմերուկ, Եր. Քոչարի 1/1, Աբեյյան-Շինարարներ և Ջանիբեկյան-Շինարարներ խաչմերուկ, Շինարարների 35, Հերացու 2/5, Հերացու 12, Արշակունյաց 5, Ազատության 27, Մամիկոնյանց 40, Գյուլբենկյան-Ա. Խաչատրյան խաչմերուկ, Արշակունյաց պողոտա՝ Կոմիտասի անվան այգու դիմաց, Ազատամարտիկների 78, Արին Բերդի 14, Վիլնյուսի 35/7, Գյուրջյան 25/4, Գյուլիքևիյան 32/1, Օհանովի-Շերամ խաչմերուկ, Րաֆֆու 17, Զ. Սարկավազի 69/2, Արտաշիսյան-Շիրակ խաչմերուկ, Սոսեի 4, Վ. Շենգավիթ 2-րդ փողոց 24, Ա. Ավետիսյան-Գյուլբենկյան խաչմերուկ, Ա. Խաչատրյան- Հ. Հակոբյան խաչմերուկ հասցեներից:	Առևտրի և ծառայությունների վարչություն կատարման ժամկետը ամբողջ տարվա ընթացքում	

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**

6.	Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում	Նախատեսվում է ձեռքբերել ներքոթվարկյալ սարքավորումները. 1. աուդիոմետր՝ 5 հատ, 2. գաստրոսկոպ՝ 1 հատ, 3. կլինիկական անալիզատոր՝ 5 հատ, 4. կոագուլոմետր՝ 6 հատ, 5. կոլպոսկոպ՝ 2 հատ,			2023 թվականին կատարվել է ընկերությունների կարիքների վերազնահատում, նշված ծրագրով նախատեսված
----	---	---	--	--	---

		<p>6. համակարգչային տոմոգրաֆ՝ 1 հատ,  7. համակարգչային անգիոգրաֆ՝ 1 հատ,  8. ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք 3 տվիչով՝ 2 հատ,  9. ուլտրաձայնային դյուրակիր հետազոտման սարք 2 տվիչով՝ 1 հատ, ցենտրիֆուգ՝ 8 հատ:</p>			<p>Ֆինանսական միջոցները հողվածափոխվել են և որպես ֆինանսական աջակցություն տրամադրվել են Երևանի ենթակայության «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի ակնաբուժական ծառայությունը հագեցնելու համար նոր-ժամանակակից սարքավորումներ ձեռք բերելու նպատակով:</p>
7.	<p>Բնակչությանը դժվարամատչելի հետազոտությունների տրամադրում</p>	<p>Նախատեսվում է ձեռքբերել.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. կոմպյուտերային տոմոգրաֆիայի հետազոտություն մինչև 100 հատ,</li> <li>2. մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի հետազոտություն մինչև 100 հատ,</li> <li>3. կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգային ծառայություն-մինչև 100 անձի համար,</li> <li>4. կորոնոգրաֆիկ հետազոտություն մինչև 100 անձի համար,</li> <li>5. սրտի կորոնար անոթների ստենտավորում մինչև 65 անձի համար:</li> </ol>	<p>Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր  1.ԵԲ-ՄԱԾՁԲ-23/39  Ձեռք է բերվել  1) Կոնտրաստավորմամբ կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայություն՝ մինչև 55 անձի համար,  2) Առանց կոնտրաստավորման կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայություն՝ մինչև 67 անձի համար,  2.ԵԲ-ՄԱԾՁԲ-23/38  Առանց կոնտրաստավորման մագնիսա ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայություն՝ մինչև 102 անձի համար,  3.ԵԲ-ՄԱԾՁԲ-23/36  Կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգային ծառայություն՝ մինչև 107 անձի համար,</p>	<p>1.«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ  23.02.2023-  25.12.2023թթ.   2.«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ  23.02.2023-  25.12.2023թթ.</p>	

			<p>4.ԵՔ-ՄԱԾՁԲ-23/36</p> <p>1) Ախտորոշիչ կորոնարոգրաֆիայի ծառայություն՝ մինչև 125 անձի համար,</p> <p>2) Սրտի անոթների ստենտավորման ծառայություն 1 դեղապատ ստենտով՝ մինչև 104 անձի համար:</p> <p>25.12.2023թ. դրությամբ համայնքի բնակիչներին անվճար հիմունքներով մատուցվել են թվով 53 կոնտրաստավորմամբ կոմպյուտերային տոմոգրաֆիայի, թվով 45 առանց կոնտրաստավորման կոմպյուտերային տոմոգրաֆիայի, թվով 96 մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի, թվով 70 կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգային, թվով 915 ստենտավորման և թվով 125 ախտորոշիչ կորոնարոգրաֆիկ ծառայություն:</p>	<p>3. «Վ.Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ 22.02.2023-25.12.2023թթ.</p> <p>4.«Երևան» ԲԿ ՓԲԸ 22.02.2023-25.12.2023թթ.</p>	
8.	Երևանի ենթակայության բուժհաստատությունների շենքային պայմանների բարելավում*	Նախատեսվում է «Նոր Արաբկիր» ԱԿ, «Արշակունյաց պոլիկլինիկա», «Կարմիր Բլուր» պոլիկլինիկա, և «Թիվ 15 պոլիկլինիկա» և «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ների հիմնանորոգման աշխատանքների իրականացում:	Տես աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության հաշվետվություն /համակարգող ստորաբաժանում/:		
9.	Այլ աշխատանքներ	«Առողջության ապահովագրության» փաթեթի ձեռք բերում:	<p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր:</p> <p>ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/18</p> <p>Ձեռք է բերվել «Առողջության ապահովագրության» փաթեթ Երևանի քաղաքապետարանի /ներառյալ Երևանի վարչական շրջանները/, Երևան հիմնադրամի, գրադարանների, թանգարանների, թատրոնների, Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների ենթակայության մանկապարտեզների, շախմատի դպրոցների, երաժշտական դպրոցների, արվեստի դպրոցների, մարզադպրոցների, ման-</p>	<p>«Արմենիա Ինշուրանս» ԱՓԲԸ 19.06.2023-18.06.2024թթ.</p>	



			<p>կապատանեկան ստեղծագործության և գեղագիտական դաստիարակության կենտրոնների, մշակույթի կենտրոնների, այլ մշակութային կազմակերպությունների, «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի, «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի, «Ջրային կառույցներ» ՓԲԸ-ի, «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի, «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի, «Երքաղլույս» ՓԲԸ-ի, «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի, «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի, «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի, «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի հաստիքացուցակներով նախատեսված հաստիք զբաղեցնող աշխատողների համար:</p>		
--	--	--	--	--	--

**ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ**

10.	Ներդրումային ծրագրերի իրականացում՝ որպես փոխհատուցում գովազդային մակերեսների տրամադրման սկզբունքով	2023թ. նախատեսվում է ներդրումային ծրագրով իրականացնել գովազդային մակերեսների տրամադրմամբ մասնավոր կազմակերպություններին նոր կանգառասրահների, հեծանիվականգառների և վերգետնյա անցումների մրցույթների հայտարարում:	2023թ. Երևան քաղաքում գովազդային մակերեսների տրամադրմամբ իրականացվել են նոր կանգառասրահների տեղադրման աշխատանքներ մասնավոր կազմակերպությունների կողմից:	Աուֆոր Էֆեկտ ՍՊԸ հունվար-դեկտեմբեր	
11.	Գովազդային վահանակների մրցութային կարգով տրամադրման և տեղական տուրքերի և վճարների հավաքագրման նոր մեխանիզմի ներդրում	Նախապես սահմանել գովազդային վահանակների բոլոր պոտենցիալ վայրերը և տեսակները՝ ելնելով քաղաքի համար դրանց նպատակահարմարությունից: Բաժանել պոտենցիալ գովազդային տեղերը լոտերի և հայտարարել մրցույթ գովազդային կազմակերպությունների միջև:	Երևան քաղաքի ավագանու կողմից 2023 թվականի ապրիլի 18-ի հ. 759-Ն որոշմամբ հաստատվել է արտաքին գովազդի նոր չափորոշիչներ, որի արդյունքում արտաքին գովազդի ուղվանկարները և գովազդի միջոցները հաստատվել է վերոնշյալ որոշմամբ:	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն ապրիլ-դեկտեմբեր	

12.	Շենքերի գովազդային անձնագրերի մշակում և գովազդների համապատասխանեցում գովազդային անձնագրերին	Կենտրոն վարչական շրջանում նախատեսվում է մրցութային կարգով իրականացնել թվով 150 հատ շենքերի գովազդային անձնագրերի պատվիրում:	Երևան քաղաքի ավագանու «18» նոյեմբերի 2009 թվականի N 37-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի ապրիլի 18-ի հ. 759-Ն որոշումով պայմանավորված՝ շենքերի գովազդային անձնագրերի ծրագիրը չի իրականացվել:		
13.	Էլեկտրոնային թույլտվությունների տրամադրում	Արդեն իսկ ստեղծված էլեկտրոնային բազայի հիման վրա կստեղծվի կայք, որի միջոցով գովազդային կազմակերպությունները և տնտեսվարողները կտեսնեն յուրաքանչյուր շենքի գովազդային անձնագիրը և հնարավորություն կունենան էլեկտրոնային եղանակով ուղարկել հայտեր գովազդի հաստատման, տեղադրման թույլտվություն ստանալու համար: Հնարավորություն կտրվի նաև էլեկտրոնային եղանակով վճարել արտաքին գովազդի համար նախատեսված տեղական տուրքի գումարը: Նախատեսվում է իրականացնել նոր էլեկտրոնային կայքի պիլոտային փորձարկում:	2023 թվականին իրականացվել է էլեկտրոնային կառավարման համակարգի արդիականացման աշխատանքներ, որի միջոցով տրվել է 77621 թույլտվություն՝ 13006 գովազդային միջոցների համար: Այդ ամենը կատարվել է 7204 գովազատուի կողմից:	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն (հունվար-դեկտեմբեր)	

**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

14.	Երևանի ջրային ավագանի էկոլոգիական վիճակի բարելավում	<ol style="list-style-type: none"> <li>1. Երևանյան լճի և Հրազդանի կիրճի մաքրում վնասակար բուսականությունից, տարատեսակ աղբից ու թափոններից:</li> <li>2. Հրազդանի կիրճի քարտեզագրման ու սահմանների նկարագրման աշխատանքներ՝ բնապահպանական կարգավիճակ տալու նպատակով:</li> <li>3. Գետառ գետի վրա կեղտաջրերի մաքրման կայանի նախագծում և կառուցում:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Իրականացվել է Երևանյան լճի և Հրազդանի կիրճի մաքրում վնասակար բուսականությունից, տարատեսակ աղբից ու թափոններից, հավաքվել և աղբավայր է տեղափոխվել է շուրջ 9900 խմ աղբ:</li> <li>2. Աշխատանքներն ընթացքի մեջ են, կատարողի կողմից ներկայացվել է մեկնարկային հաշվետվություն:</li> <li>3. Աշխատանքների կատարման առաջին փուլն ավարտվել է, ընթացքի մեջ են երկրորդ փուլով նախատեսված աշխատանքները:</li> </ol>	<p>«Մեծ եռյակ» ՍՊԸ «Գեոլայթ» ՓԲԸ 29.11.2023թ.- 29.10.2024թ.</p> <p>«Լիլանարմ» ՍՊԸ 01.08.2023թ.- 24.11.2023թ. 08.12.2023թ.- 11.04.2024թ.</p>	
-----	---	--	--	---	--

15.	Յուրաքանչյուր բնակչին բաժին ընկնող կանաչ մակերեսի ավելացում և բարելավում	Որակյալ կանչ տարածքների ավելացում:	Կազմակերպության կողմից իրականացված մասնագիտական աշխատանքների արդյունքում կանաչ տարածքներն ավելացել են 19,1145 հա-ով, որից ուրբան անտառ 16,6 հա, սիզամարզ 0,8991 հա, այգի 1,05 հա, պուրակ 0,5654 հա:	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ 2023թ. մարտ-նոյեմբեր	
16.	Բազմամյա ծաղկասածիլներով համալրված ծաղկանոցներ և ճանապարհի փոշու և աղտոտիչ նյութերի աղմուկի կլանման նկատմամբ պաշտպանիչ և տարանջատող շերտ հանդիսացող կանաչ ցանկապատերի ստեղծում	Ճանապարհի նկատմամբ պաշտպանիչ և տարանջատող շերտի ստեղծում՝ գազակլանիչ, գեղատեսիլ և ծաղկող թփերով:	Կազմակերպության կողմից իրականացված աշխատանքների արդյունքում Երևան քաղաքում ծաղկանոցների թիվը կրկնապատկվել է, որոշ վարչական շրջաններում եռապատկվել է: Ընդհանուր առմամբ նախագծվել է 17 ֆիտոնախագիծ, որից 2023թ. ընթացքում իրագործվել է 13-ը՝ Սայաթ-Նովա պողոտայի միջնաշերտ, Արամ Խաչատրյանի արձանի ձախակողմյան հատվածի ծաղկանոց, Ֆրանսիայի հրապարակ, Ֆրանսիայի հրապարակի խաչմերուկներ, Կարապի լճի հարակից տարածք, Երևանի քաղաքապետարանի կից տարածք, Սասունցի Դավթի արձանի հարակից տարածք, Հրապարակը շրջագծող կանաչ տարածքների ծաղկանոցներ, Գայի արձանի հարակից տարածք, Արագածի այգի, Կիլիկիա ավտոկայանին հարակից տարածք, Ռուբինյանց-Մյասնիկյան փողոցների շրջադարձի կանաչ հատվածներ, Վ.Դավթյանի անվան այգու մուտքի հարակից տարածք: Երևանի քաղաքապետարանի դիմաց հիմնվել է Երևանի գլխավոր ծաղկանոցը: Տնկվել է 357871 հատ ծաղիկ, որից 63827 հատ (17.8%)՝ կազմակերպության կողմից արտադրված: Տնկվել է (ռեմոնտանտ, մինյատուր, մազլ-ցող) 25893 հատ վարդ, որից 5528 հատ կազմակերպության կողմից արտադրված: Տնկվել է 1695 հատ ծառ, որից 874 հատ կազմակերպության կողմից արտադրված:	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ 2023թ. մայիս-հոկտեմբեր	

			Տնկվել է 27674 հատ թուփ, որից 12248 հատ կազմակերպության կողմից արտադրված, ընդհանուր առմամբ իրականացվել է 7305 բորոյություն թփերի տունկ կենդանի ցանկապատների լրացման կամ վերականգնման աշխատանքների նրպատակով: Երևան քաղաքում իրականացվել է շուրջ 1 հա-ի վրա գիհուտների հիմնում:		
17.	Կանաչապատման սակավ հնարավորությամբ տարածքներում կիրառել այլընտրանքային կանաչապատում՝ Երևան քաղաքի ինտեսիվ կառուցապատման պայմաններում կանաչապատման ոլորտում հույժ կարևոր միջոցառում հանդիսացող ուղղաձիգ կանաչապատման կիրառմամբ:	Կանաչ զանգվածի ավելացում՝ կանաչ պատի միջոցով:	Մյասնիկյան պողոտայի սկզբնամասում իրականացված ուղղաձիգ կանաչապատում /67 գծմ երկարությամբ/ աշխատանքների շարունակության նախապատրաստական աշխատանքների իրականացում՝ ոռոգման ցանցի անցկացման, բուսատեսակների ձեռքբերում և նախագծում:	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ 2023թ. ապրիլ-հոկտեմբեր	
18.	Երևան քաղաքի կանաչ տարածքների գույքագրում, ԱՏՀ հենքով տվյալների բազայի ստեղծում:	Նախատեսվում է ունենալ լրացված ոռոգման ցանցի, ծառերի անձնագիր՝ յուրաքանչյուր փողոցի, զբոսայգու, պուրակի և անտառապուրակի համար:	2023թ. ընթացքում ավարտվել է Արաբկիր վարչական շրջանում կանաչ տարածքների քարտեզագրման և գույքագրման աշխատանքները: Շարունակվել են Երևան քաղաքի կանաչապատ տարածքների քարտեզագրման և բույսերի գույքագրման աշխատանքները: Դեկտեմբերի 20-ի դրությամբ առկա են հետևյալ տվյալները՝ 20000 ծառ և թուփ, 2300 ոռոգման համակարգի փական և ցնցուղ, 6600մ կենդանի ցանկապատ, 11000մ ոռոգման համակարգի գծային էլեմենտ, 131000մ <sup>2</sup> կանաչապատ կամ կանաչապատման ենթակա տարածք:	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ 2023թ. հունվար-դեկտեմբեր	
19.	Արագած փողոցի վերջնամասում նոր այգու հիմնում	Շենգավիթ վարչական շրջանի կանաչ տնկարկների տարածքների ընդլայնում:	2023թ. ընթացքում կազմակերպության կողմից հիմնվել է բոլորովին նոր 2 այգի: Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում, Զեյթունի այգի /Դրո-Պ. Սևակ փողոցների խաչմերուկ/ այգու հիմնում 0.45 հա-ի վրա 41 արժեքավոր և գեղազարդ ծառատեսակներով: Շենգավիթ վարչական շրջանում	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ 2023թ. մարտ-հունիս	

			Արագածի այգի, բոլորովին նոր ու ժամանակակից այգու հիմնում 0.6 հա-ի վրա՝ արժեքավոր և գեղազարդ 90 ծառատեսակներով, մշտադալար ծառաթփատեսակներով ու ծաղկանոցներով:		
20.	Կանաչ տարածքների խնամքի և ծառատնկման համար ժամանակակից մեքենա-սարքավորումների ձեռք բերում	Ձեռք բերել կանաչապատման ծառայությունների համար հատուկ տեխնիկա:	Պատասխանատու ժամանակահատվածում կազմակերպության կարիքների համար ձեռք է բերվել ժամանակակից ֆունկցիոնալ մի շարք խնամքի ձեռքի գործիքներ և մեքենա-սարքավորումներ՝ մոտոկուլտիվատորներ, պրոֆեսիոնալ բենզասղոցներ և խոտհնձիչ տեխնիկաներ: Ձեռք է բերվել մեկ 32 մետրանոց և երկու 22 մետրանոց պրոֆեսիոնալ ավտոաշտարակներ, ինչպես նաև թվով 4 կապիտալ հիմնանորոգված Կամազ մակնիշի բեռնատարներ:	«Սաննի Մոթորս» ՍՊԸ Ժամկետ՝ 11.05.2023.- 08.09.2023թթ. «ՍՎԱ Մոթորս» ՍՊԸ Ժամկետ՝ 23.08.2023- 20.11.2023թթ.	
21.	Ոռոգման ցանցի վերակառուցում	Կվերակառուցվի և կստեղծվի շուրջ 30կմ ոռոգման ցանց:	1. Տնտեսական սպասարկման վարչության կողմից իրականացվել է ոռոգման համակարգի անցկացում և հիմնանորոգում՝ շուրջ 36000գժմ: Նոր կառուցված ջրագծերը և ոռոգման ցանցերը կազմել են՝ 28500մ և 28333.5 մ: Գործող ջրագծերն արդիականացվել են 3000մ-ով (2989մ): Բոլոր 10 ստորաբաժանումներում իրականացվել են վթարավերականգնողական աշխատանքներ՝ շուրջ 1000 դեպք՝ 3600մ (3637.5մ): 2. Վերանորոգվել է շուրջ 37 գործող պոմպեր և տեղադրվել է 3 նոր պոմպ: Բոլոր այն ստորաբաժանումներում, որտեղ առկա են պոմպակայաններ, կատարվել է տեխնիկական վիճակի ստուգում, ինչպես նաև տրվել է մասնագիտական խորհրդրդատվություն: 3. Կառուցվել է օդային էլ. հաղորդագիծ՝ 3 վայրում 900գժմ, տեղադրվել է նոր դեկավարման վահանակներ՝ 6 հատ և	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ 2023թ. հունվար-դեկտեմբեր	

			վերանորոգվել է էլ. վահանակներ՝ 37 դեպք:		
22.	Երևան քաղաքում թափոնների տեսակավորման ծրագրի ընդլայնում	Թափոնների տեսակավորման համար նախատեսված թափոնամանների ցանցի ընդլայնում մինչև 500 կետ՝ տեղադրելով լրացուցիչ թափոնամաններ: Մեծացնել տեսակավորող և վերամշակման ուղարկվող թափոնների ծավալը:	Վերամշակվող թափոնների տեսակավորման մասով հավաքագրվել է պլաստիկ մոտ 28 տոննա, ապակի մոտ 30 տոննա և ստվարաթուղթ 580 տոննա: «Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարման ընդհանուր մարտահրավերների շուրջ» ծրագրով նվիրաբերվել են շուրջ 1000 թափոնամաններ: 2024թ. թափոնամանները կտեղադրվեն Երևան քաղաքում՝ այսպիսով եղած հասցեները կեռապատկվեն և կավելանա այլումինի հավաքագրումը:	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ 2023թ. հունվար-դեկտեմբեր	

**ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

23.	Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում ներդրված նոր համակարգի շարունակական զարգացում՝ արդյունավետ կառավարման նպատակով	Երեխաների և սոցիալական պաշտպանության նոր համակարգի տեղայնացման ընթացքում առաջացած և վեր հանված խնդիրների լուծման համար համայնքային ծառայողների, սոցիալական աշխատողների համար անհրաժեշտ է՝ 1. Նյութատեխնիկական միջոցների ապահովում 12 վարչական շրջանների համապատասխան բաժինների աշխատակիցների համար: 2. Երևան համայնքի երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի վերաբերյալ՝ 2.1. հանրային իրազեկման միջոցառումների, ինչպես նաև աշխատանքների արդյունավետության բարձրացմանը միտված աշխատաժողովների կազմակերպում, 2.2. համակարգի ներդրման համար միասնական տեղեկատվական համակարգի ներդրում, անհրաժեշտ ընթացակարգերի մշակում (օրինակ էլեկտրոնային հարթակ, տեղական սոցիալական ծրագրեր, մշտա-	2.1 Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ աշխատաժողովների կազմակերպման նպատակով /նախապատրաստվել է քննարկման հարցերի շրջանակ, կազմվել գնման հայտ, տեխնիկական բնութագիր/, երկու անգամ ներկայացվել է գնման գործընթացի, որը չի կայացել:	Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն	
-----	---	---	--	--	--

		դիտարկում, փորձագետների ներգրավում և այլն):			
24.	Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն	<p>1.Քաղաքային մշակութային միջոցառումներում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների ներգրավում:</p> <p>2.Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների համար միասնական պրակտիկայի ձևավորման նպատակով իրազեկում /2 օր տևողությամբ վերապատրաստումների կազմակերպում/:</p>	<p>1.«Մայ մարկետ» ՍՊԸ-ի հետ 31.05.2023թ. կնքված պայմանագրով /N ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/134/ երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության կողմից ձեռք է բերվել գրենական պիտույքների 300 փաթեթ, որոնք բաշխվել են սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների երեխաներին, ինչպես նաև արցախցի երեխաներին:</p> <p>2. Աշխատանքներ են տարվել նշված ծրագրի միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպելու ուղղությամբ, որից ելնելով Երևանի քաղաքապետարանի կողմից սույն ծրագիրը չի իրականացվել:</p>	<p>Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն</p> <p>Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի երեխաների և սոցիալական պաշտպանության բաժիններ</p>	
25.	Տարբեր սոցիալական խմբերի համար Երևան համայնքում որակյալ սոցիալական ծառայությունների կազմակերպում	Տարբեր սոցիալական խմբերի համար Երևան համայնքում որակյալ սոցիալական ծառայությունների կազմակերպում:	Իրականացված նախապատրաստական աշխատանքների արդյունքում կազմվել է գնման հայտ, տեխնիկական բնութագիր, սակայն գնման գործընթացը չի կայացել:	Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն	
26.	Հայրենադարձ և փախստական ընտանիքներին աջակցություն	1.Կարիքների գնահատման արդյունքում փախստականի կարգավիճակ ունեցող ընտանիքներին աջակցության տրամադրում:	1.Համագործակցելով ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության հետ «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի տնօրինության հետ քննարկվել են այնտեղ բնակվող փախստականի կարգավիճակ ունեցող անձանց կարիքները: Արդյունքում՝ հստակեցվել են տրամադրվող աջակցության տեսակները և 1/04.09.2023թ. ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/253-1, 07.09.2023թ. ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/257-1 պայմանագրերով «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ում ժամանակավոր բնակվող, փախստականի կարգավիճակ ունեցող ընտանիքներին տրամադրվել են ներքնակով մահճակալ:	Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի երեխաների և սոցիալական պաշտպանության բաժիններ	

		<p>2. Փախստականի կարգավիճակ ունեցող ընտանիքներին ձմռան ամիսներին առաջացած խնդիրների լուծման նպատակով կոմունալ վարձերի մասնակի փոխհատուցում /1 ընտանիքին 4 ամիս/:</p>	<p>ներ 10 հատ և անկողնային հավաքածուներ, վերմակներ, բարձեր 26 հատ:</p> <p>2. Համագործակցելով ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության հետ՝ ձեռք է բերվել փախստականի կարգավիճակ ունեցող, սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց կարիքները, որը փոխանցվել է Երևանի վարչական շրջանների համապատասխան բաժիններին՝ կարիքների ուսումնասիրություն իրականացնելու նպատակով: Վարչական շրջաններում բնակվող փախստականի կարգավիճակ ունեցող ընտանիքներին ձմռան ամիսներին առաջացած խնդիրների լուծման համար կոմունալ վարձերի մասնակի փոխհատուցման նպատակով իրականացվել է վերոնշյալ ընտանիքների կարիքների գնահատում, սակայն պայմանավորված Արցախում տեղի ունեցած իրադարձություններով, գործընթացը կասեցվել է:</p>		
27.	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերի կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն /օրինակ՝ COVID, պատերազմ և այլն/:	Բյուջեով նախատեսված գումարները հողավաճափոխության արդյունքում ուղղվել են այլ ծրագրերի իրականացմանը:	Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն	
28.	Հասարակական կազմակերպություններին աջակցություն	<p>1. Դրամական օժանդակություններ սոցիալական հիմնահարցերով զբաղվող ՀԿ-ներին:</p> <p>1.1 Մանկալքության կանխարգելման նպատակով ծառայությունների մատուցման համատեքստում սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում, այդ թվում՝ կացարանի և կոմունալ վճարների փոխհատուցում /3 ամիս/:</p> <p>1.2 Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն:</p>	1.2.1	Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն	



			<p>22.02.2023թ. N 12 Նվիրատվության և 22.03.2023թ. N 1 30.03.2023թ. N 2, 25.04.2023թ. N 3, 24.05.2023թ. N 4, և 30.06.2023թ N 5, 21.08.2023թ. N6, 29.08.2023թ. N7, 22.09.2023թ. N8, 25.10.2023թ. NՓ9, 27.11.2023թ. NՓ10, 21.12.2023 NՓ11 Նվիրատվության պայմանագրերով Երևան համայնքի բյուջեից «Փրկություն» ՀԿ-ին /ծառայություններ է մատուցում Երևան համայնքի տարբեր վարչական շրջաններում բնակվող մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ երեխաներին/ տրամադրվել է դրամական աջակցություն կոմունալ ծառայությունների փոխհատուցման նպատակով:</p> <p>1.2.2 15.03.2023թ. Նվիրատվության N 1 պայմանագրով տրամադրվել է աջակցություն «Քայլ առաջ» սոցիալական հասարակական կազմակերպությանը՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին անվճար թերապիաներ տրամադրելու նպատակով:</p> <p>1.2.3 03.04.2023թ. Նվիրատվության N Ս-1 պայմանագրով «ՍՈՐՍ» հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին աջակցության հիմնադրամին տրամադրվել է աջակցություն՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին սոցիալական ծառայությունների տրամադրման նպատակով՝ աշխատակիցների աշխատավարձի, կենտրոնի տարածքի վարձակալության, կոմունալ ծառայությունների, գրասենյակային պարագաների, դիտակտիկ նյութերի ձեռքբերման համար:</p> <p>1.2.4 29.08.2023թ. Նվիրատվության N ԽՄ-1 պայմանագրով տրամադրվել է աջակցութ-</p>	<p>Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի երեխաների և սոցիալական պաշտպանության բաժիններ</p>	
--	--	--	---	--	--

		<p>յուն «Հայաստանի Խուլերի Միավորում» հասարակական կազմակերպությանը՝ «Խուլ անձանց հզորացում հանուն ներառման» ծրագրի շրջանակում ստեղծված հեռավար տեսակապով զանգերի կենտրոնի ծրագրի շարունակականությունն ապահովելու նպատակով:</p> <p>1.2.5 29.08.2023թ. Նվիրատվության N ԵԿ-1 պայմանագրով աջակցություն է տրամադրվել «Հայաստանի կույրերի միավորում» հասարակական կազմակերպությանը՝ «Վարդագույն Երևան» մշակութային միջոցառման կազմակերպման նպատակով, ինչը հնարավորություն է ընձեռել ՀԿ-ի երաժշտական կոլեկտիվին հանդես գալ երաժշտական ծրագրով:</p> <p>1.2.6 11.07.23 ԼԿ-1 նվիրատվության պայմանագրով «Լիարժեք կյանք» ՀԿ-ին տրամադրվել է աջակցություն՝ Ստեփանավան քաղաքում գործող կազմակերպության ճամբարում հաշմանդամություն ունեցող և սոցիալական աջակցության կարիք ունեցող երեխաների համար ներառական ճամբարի կազմակերպման նպատակով: Թվով շուրջ 150 անձ օգոստոս ամսին հնարավորություն են ունեցել իրենց հանգիստն անցկացնել վերոնշյալ ճամբարում:</p> <p>1.3.1 27.03.2023թ. S-1, 27.04.2023թ. S-2, 30.05.2023թ. S-3, 20.07.2023թ. S-4, 29.08.2023թ. S-5, 28.09.2023թ. S-6, 12.10.2023. S7, 21.12.2023 S8 Նվիրատվության պայմանագրերով աջակցություն է տրամադրվել «Տարեցների առողջության և խնամքի ապահովման</p>		
--	--	---	--	--

		<p>1.3 Տարեցներին ուղղված աջակցություն</p> <p>1.4 Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին աջակցություն</p>	<p>ասոցիացիա» ՀԿ-ին՝ կենտրոնի կոմունալ ծախսերի փոխհատուցման նպատակով՝ ապահովելով մատուցվող ծառայությունների շարունակականությունը:</p> <p>1.3.2 05.05.2023թ. N Ա-1, 03.08.2023թ. NԱ-2 նվիրատվության պայմանագրով «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ին տրամադրվել է աջակցություն՝ Երևան համայնքում տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների մատուցման նպատակով:</p> <p>1.4 02.03.2023թ. N 1 02.03.2023թ. N 2 25.04.2023թ. N 3, 24.05.2023թ. N 4 և 30.06.2023թ N 5, 20.07.2023թ. N 6, 29.08.2023թ. N Կ-7, 28.09.2023թ. N-8, 25.10.2023 Կ9, 20.11.2023թ Կ10, 21.12.2023 Կ11 Նվիրատվության պայմանագրերով Երևան համայնքի բյուջեից «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամին տրամադրվել է աջակցություն /որտեղ ապրում են շուրջ 100 անօթեվաններ/ կոմունալ ծառայությունների՝ էլեկտրաէներգիայի, գազի և ջրի փոխհատուցման նպատակով:</p> <p>1.5 24.05.23թ. Ա-1 նվիրատվության պայմանագրով «Ամբրա» հոգեկան առողջության կենտրոնին տրամադրված աջակցության շնորհիվ պատերազմից տուժած, հոգեբանական աջակցության կարիք ունեցող անձանց և նրանց ընտանիքներին մատուցվել են հոգեբանական և հոգեբուժական ծառայություններ:</p>		
--	--	--	---	--	--

		<p>1.5 Հոգեբանական/հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ուղղված աջակցություն</p> <p>2. Համագործակցության շրջանակներում սոցիալական գործընկերություն և ձեռներեցություն՝ զբաղվածության խթանման նպատակով /պատերազմի մասնակից և սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներ/</p>	<p>2.1 24.05.2023թ. NԴԿ1 Նվիրատվության պայմանագրով «Դու կարող ես» ՔՀԿ-ին համագործակցության շրջանակում տրամադրվել է դրամական աջակցություն սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների զբաղվածության խթանման նպատակով՝ արդյունքում թվով 5 անձինք հնարավորություն են ունեցել նոր մասնագիտություն ձեռք բերել կամ կատարելագործել իրենց մասնագիտական հմտությունները՝ հետագայում ապահովելով իրենց ընտանիքներին կայուն եկամուտ: 14.08.23 ԴԿ-2 նվիրատվության պայմագրով «Դու կարող ես» ՀԿ-ին տրամադրվել է աջակցություն պատերազմի մասնակից կամ սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների զբաղվածության խթանման ծրագրի /ճագարաբուծություն/ իրականացման նպատակով, արդյունքում թվով 5 ընտանիքների տրամադրվել են ճագարներ, ճագարաբուծության հետ կապված խորհրդատվություն, ինչպես նաև փորձագետի կողմից իրականացվել է ծրագրի մշտադիտարկում:</p> <p>2.2 1. 31.05.23թ. Ա-1 նվիրատվության պայմանագրով դրամական աջակցություն է տրամադրվել «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» ՀԲՀ-ին՝ սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների զբաղվածության խթանմանն ուղղված ծրագրի իրականացման նպատակով: Արդյունքում՝ իրականացվել են համատեղ այցելություններ սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների կարիքների և հմտությունների գնահատման նպատակով, իրագեկման աշխատանքներ, պայմանագրերի</p>		
--	--	--	---	--	--

			կնքում, մասնագիտական դասընթացների կազմակերպում, աշխատանքային գործիքների կազմակերպում և այլն: Ծրագրում ընդգրկվում են նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքներ:		
29.	Այլ աշխատանքներ Երեխաների պաշտպանության բաժին		<p>Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 07.04.2023թ. N ՍՄ/ՔՀ-2-3/8352-2023 գրությունը, որով ներկայացվել էին 2023 թվականի ՀՀ պետական բյուջեի դրամաշնորհների հատկացման նպատակով մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված հասարակական կազմակերպությունների /«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի և «ՍՕՍ- մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ/ տվյալները՝ կարիքի դեպքում մանկալքության կանխարգելման նպատակով իրականացվել են ուղղորդումներ և Երևանի քաղաքապետարանի կողմից այս մասով ծրագրերի իրականացման անհրաժեշտություն չի առաջացել:</p> <p>1.Երեխաների պաշտպանության ոլորտում համագործակցություն է իրականացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, արդարադատության նախարարությունների, ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով բաժինների, վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների, մանկատների, երեխաների խնամքի և աջակցության կենտրոնների, ինչպես նաև ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող կազմակերպությունների հետ ( «ՍՕՍ-Մանկական Գյուղեր», «Առաքելություն Հայաստան» և այլն):</p>	Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության երեխաների պաշտպանության բաժին	

			<p>2. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված /ԿԴԻՀ/ երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով բաժինն ապահովել է գործող օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների իրականացումը: Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ քննարկվել են բացահայտված ԿԴԻՀ երեխաների դեպքերը և իրականացվել է ուղղորդում համապատասխան պետական և հասարակական կառույցներ՝ անհրաժեշտ ծառայություններ ստանալու նպատակով:</p> <p>3. Վարչական շրջանների կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն հաշվառվել է առանց ծնողական խնամքի մնացած 51 երեխա, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացածների թվին պատկանող 2 անձ:</p> <p>4. Երեխայի կրթության իրավունքի իրացման համատեքստում ծնողի դիմումի և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի եզրակացության հիման վրա վկայագրվել է 250 երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը: «Նախադպրոցական կրթության մասին» 2023թ. հունիսի 14-ին N ՀՕ-217-Ն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ դադարեցվել է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրման գործընթացը:</p> <p>5. 43 երեխայի տրվել է երեխաների խնամքի հաստատությունում տեղավորվելու մասին եզրակացություն: Քաղաքացիների</p>		
--	--	--	--	--	--

			<p>կողմից ներկայացվել է երեխայի խնամքի հաստատությունից դուրսգրման մասին 4 դիմում, որի հիման վրա 2 երեխա վերադարձել է կենսաբանական ընտանիք, իսկ 2 դիմումին, ելնելով ուսումնասիրության արդյունքներից և հիմք ընդունելով միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի կողմից ներկայացված նախնական եզրակացությունը՝ նպատակահարմար չի եղել տալ երեխայի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից դուրս գրելու մասին եզրակացություն:</p> <p>6. Հիմք ընդունելով քաղաքացիների կողմից ներկայացված փաստաթղթերը և կենսապայմանների ուսումնասիրության ակտերը՝ տրվել է երեխա որդեգրելու հնարավորության մասին 38 դրական և 4 բացասական եզրակացություն, ընդհանուր հաշվառման է վերցվել երեխա որդեգրել ցանկացող 58 անձ:</p> <p>7. Կազմվել և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ուղարկվել թվով 45 հարցում՝ երեխային տեսակցելու և որդեգրման հնարավորությունը պարզելու համար, տրվել է որպես որդեգրել ցանկացող հաշվառված անձի և որդեգրման ենթակա երեխայի անձնական շփումների փաստի վերաբերյալ 10 եզրակացություն:</p> <p>8. Որդեգրման կարգի համաձայն հաշվառվել է որդեգրման ենթակա 28 երեխա:</p> <p>9. Իրականացվել է 19 խնամատար ընտանիքում խնամվող երեխայի՝ հոգեգավակի</p>		
--	--	--	---	--	--

			<p>կյանքի, առողջության, դաստիարակության և կենսապայմանների նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև 12 որդեգրողի ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողություն:</p> <p>10. 81 ԿԴԻՀ երեխաների տվյալները մուտքագրվել են «Մանուկ» տեղեկատվական համակարգում, ըստ անհրաժեշտության կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>11. Հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության կողմից երեխաների մասնակցությամբ՝ Երևանի քաղաքապետարանի ավագանու նիստերի դահլիճում իրականացվել է «Երևանի քաղաքապետարանը՝ երեխաների համար» խորագրով միջոցառում: Միջոցառման ձևաչափը՝ Երևան քաղաքի ավագանու նիստ, որն անց է կացվել Երևանի քաղաքապետի տեղակալի կողմից, իսկ ավագանու փոխարեն հանդես են եկել աշակերտները:</p> <p>12. Բաժնի աշխատակիցները մասնակցել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կողմից ներկայացված խնդրահարույց նիստերին, որտեղ քննարկվել են երեխայի հետ կապված հատուկ դեպքերը: Պարբերաբար տրամադրվել են մասնագիտական խորհրդատվություն և մեթոդական աջակցություն խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին և վարչական շրջանների երեխա-</p>		
--	--	--	---	--	--



			<p>ների և սոցիալական պաշտպանության բաժնի աշխատակիցներին:</p> <p>13. Ստացվել է պարտադիր կրթությունից դուրս մնացած 3 երեխաների վերաբերյալ տեղեկատվություն, այն փոխանցվել է համապատասխան վարչական շրջան, ՀՀ կառավարության 11.02.2021թ. N 154-Ն որոշմամբ սահմանված կարգով խնամակալության և հոգաբարձության մարմնի գործառույթների շրջանակներում համապատասխան աշխատանքներ կատարելու նպատակով:</p> <p>14. Բաժինը մասնակցել է երեխաների պաշտպանության ոլորտին առնչվող հանդիպումներին, քննարկումներին, խորհրդատվություններին:</p> <p>15. Երեխաների պաշտպանության վերաբերյալ տարբեր հարցերով Երևանի քաղաքապետարան դիմած քաղաքացիներին տրամադրվել է խորհրդատվություն:</p>		
30.	Այլ աշխատանքներ Սոցիալական պաշտպանության բաժին		<p>1.(ԱՄՆ ԱԶԳ) կողմից ֆինանսավորվող Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության կողմից Մանակական զարգացման հիմնադրամի, Կանանց աջակցման կենտրոն հասարկական կազմակերպության և ԱՌՆԱՊ հիմնադրամի հետ համատեղ իրականացվող «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություն» (CLASS) ծրագրի շրջանակներում, «Ամբրա» հոգեկան բարեկեցության կենտրոնի հետ համագործակցության արդյունքում իրականացվել է Երևան քաղաքի վարչական շրջանների սոցիալական աշխատողների և հոգեբանների վերապատրաստում: Ինչպես նաև ծրագրի արդյունքում վերապատրաստվել են հավասար խորհրդա-</p>	Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության սոցիալական պաշտպանության բաժին	

			<p>տուներ, ովքեր հոգեբանական աջակցություն են տրամադրում պատերազմից տուժած ընտանիքներին:</p> <p>2. Իրականացվել է Կանանց միջազգային օրվա կապակցությամբ Երևան քաղաքի տարբեր մշակութային կենտրոններում կազմակերպվող ներկայացման տոմսերի տրամադրում: Տրամադրվել է սոցիալական աջակցության կարիք ունեցող, պատերազմից տուժած և այլ ընտանիքներին շուրջ 5000 տոմս:</p> <p>3.1-ին փուլ 08.02.2023թ. պայմանագիր ԵՔ-ՄԱԾՁԲ -23/26-1, ԵՔ-ՄԱԾՁԲ -23/26-2, ԵՔ-ՄԱԾՁԲ -23/26-3 Լաչինի միջանցքի արգելափակման հետևանքով Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի քաղաքացիների կեցություն տրամադրած կազմակերպություններին հյուրանոցային ծառայությունների դիմաց ծախսերի փոխհատուցման գործընթացի կազմակերպում:</p> <p>3.2 2-րդ փուլ 21.02.2023թ. ԵՔ-ՄԱԾՁԲ -23/46-1, ԵՔ-ՄԱԾՁԲ -23/46-2, ԵՔ-ՄԱԾՁԲ-23/46-3, 22.02.2023թ. ԵՔ-ՄԱԾՁԲ -23/46-4 Լաչինի միջանցքի արգելափակման հետևանքով Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի քաղաքացիների կեցություն տրամադրած կազմակերպություններին հյուրանոցային ծառայությունների դիմաց ծախսերի փոխհատուցման և ուղևորափոխադրման գործընթացի կազմակերպում:</p>	<p>Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի երեխաների և սոցիալական պաշտպանության բաժիններ</p> <p>USAID ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն</p> <p>Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության Մանակական զարգացման հիմնադրամ</p>	
--	--	--	---	---	--

			<p>3.3 3-րդ փուլ 27.03.2023թ. ԵՔ-ՄԱԾՁԲ - 23/73-1, ԵՔ-ՄԱԾՁԲ -23/73-3 և 28.03.2023թ. ԵՔ-ՄԱԾՁԲ -23/73-2 Լաչինի միջանցքի արգելափակման հետևանքով Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի քաղաքացիների կեցություն տրամադրած կազմակերպություններին հյուրանոցային ծառայությունների դիմաց ծախսերի փոխհատուցման գործընթացի կազմակերպում:</p> <p>3.4 Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 1-ի N 869-Ն որոշումը, 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությունը Լաչինի միջանցքի արգելափակման հետևանքով Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի քաղաքացիների կեցություն տրամադրած կազմակերպություններին հյուրանոցային ծառայությունների դիմաց ծախսերի փոխհատուցման գործընթացի կազմակերպում 27.06.2023թ. ԵՔ-ՄԱԾՁԲ -23/192:</p> <p>3.5 ՀՀ կառավարության 14.12.2023թ.-ի N°2200-Ն որոշմամբ, Երևանի քաղաքապետի՝ 25.12.2023թ.-ի 4307-Ա որոշմամբ՝ Երևան համայնքի 2023 թվականի բյուջեով նախատեսված «Հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների իրականացում» ծրագրի շրջանակներում 3 հյուրանոցների հետ կնքվել է պայմանագրեր 54520.0 հազ. ՀՀ դրամ արժողությամբ:</p>	<p>«Ամբրա» հոգեկան բարեկեցության կենտրոն</p>	
--	--	--	---	--	--

		<p>4. ԱՄՆ ՄԶԳ-ի հետ «Տվյալներ ազդեցության համար» Data for impact (D4I) ծրագրի շրջանակներում իրականացվել է երկօրյա իրազեկում/ վերապատաստում՝ Երևան քաղաքի սոցիալական պաշտպանության ոլորտի մասնագետների կողմից բնակչության սոցիալական վիճակի տեղեկատվության ստացման աղբյուրների ուսումնասիրության, էլեկտրոնային հարթակի մշակման և կիրառման նպատակով /Աղվերան/:</p> <p>5. Իրականացվել են շարունակական աշխատանքներ 2022թ. զբաղվածության ծրագրերի /ճագարաբուծություն, մատնահարդարում և այլն/ հետ կապված: 2022թ. նախատեսված ծրագրերի իրականացման համար վարչական շրջանների համապատասխան բաժինների կողմից շահառուների հայտնաբերման նպատակով իրականացվել են ուսումնասիրություններ, կարիքի գնահատում, տվյալների հավաքագրում:</p> <p>6. 2023թ. ընթացքում Երևանի վարչական շրջանների կողմից շուրջ 78 /Արցախյան պատերազմում տուժած, վիրավորում ստացած, ինչպես նաև հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների/ ընտանիքներ ընդգրկվել են սոցիալական աջակցության մի շարք ծրագրերում, նրանց տրամադրվել են կենցաղային տեխնիկա՝ գազի վառարան, լվացքի մեքենա, գազօջախ, նոթբուք, հեռուստացույց, սառնարան, ջրատաքացուցիչ, մահճակալ, ինչպես նաև բնակարաններում իրականացվել են հարմարեցման աշխատանքներ՝ իրականացվել է սանհանգույցի, տանիքի վերանորոգման, դուռ և պատուհանների փոփոխման աշ-</p>		
--	--	---	--	--

			<p>խատանքներ և այլն:</p> <p>7.Ֆինանսական աջակցություն ստացած կազմակերպությունների աշխատանքները ուսումնասիրելու նպատակով իրականացվել է մշտադիտարկում:</p> <p>8.Վարչության կողմից տրամադրվել է մեթոդական աջակցություն վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի երեխաների և սոցիալական պաշտպանության բաժիններին:</p> <p>9.Սոցիալական պաշտպանության բնագավառում Երևանի քաղաքապետարան դիմած քաղաքացիներին տրամադրվել է խորհրդատվություն, համապատասխան ուղղորդում, ըստ կարիքի աջակցություն:</p> <p>10.Տարվա ընթացքում միջազգային հասարակական կազմակերպությունների, անհատ բարերարների և այլ կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին տրամադրվել են բնաիրային, կենցաղային, հիգիենայի փաթեթներ, սնունդ, հագուստ, խոհանոցային պարագաներ /30283 ընտանիք /49652 անձ/:</p> <p>11.Վարչության կողմից կազմվել է 2024-2026թթ. վարչության բյուջեի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության 2024 թվականի բյուջեն:</p>		
--	--	--	--	--	--

		<p>12. Կայացել է Երևանի քաղաքապետին կից սոցիալական պաշտպանության խորհրդի նիստ:</p> <p>13. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի «Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված՝ «Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» N 254-Ն որոշումը՝ կայացել է Երևանի քաղաքապետին կից սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի նիստը, որի արդյունքում աջակցություն է տրամադրվել սոցիալական աջակցության կարիք ունեցող, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 5 ընտանիքների՝ 3 ընտանիքների ուսման վարձերի մասնակի փոխհատուցում, 2 ընտանիքների դրամական աջակցություն՝ կենցաղային պայմանների բարելավման նպատակով:</p> <p>14. Վարչության համակարգմամբ վարչական շրջաններում իրականացվել են մի շարք աշխատանքներ ուղղված Արցախից բռնի տեղահանված ընտանիքներին: Մասնավորապես, աշխատանքներ են տարվել ՀՀ ՆԳՆ միգրացիոն ծառայության առջանց հարթակում արցախցիներին հաշվառելու նպատակով: Ընտանիքների նախնական կարիքները հավաքագրվել են՝ փոխանցվել են վարչություն, իսկ վարչության կողմից համապատասխան աշխատանքներն իրականացվելուց հետո ամ-</p>		
--	--	---	--	--

		<p>փոփված ցուցակները պարբերաբար ուղարկվում են Կարմիր Խաչ ընկերությանը:</p> <p>15. Վարչության կողմից միջազգային և այլ կազմակերպությունների հետ կապված ևս իրականացվում են համապատասխան աշխատանքներ անհրաժեշտ աջակցություն ձեռք բերելու և տրամադրելու ուղղությամբ, որի արդյունքում վարչական շրջանների առանձնացված պահեստները համալրվել են համապատասխան բնափրային փաթեթներով:</p> <p>16. Արցախում 2023թ. սեպտեմբերի 25-ին տեղի ունեցած պայթյունի հետևանքով մահացած անձանց հարազատներին ֆինանսական աջակցություն տրամադրելու նպատակով վարչության կողմից իրականացվել են փաստաթղթերի հավաքագրման, ամփոփման գործընթացը և տվյալները փոխանցվել «Երևան» հիմնադրամին:</p> <p>17. Չինաստանի դեսպանատան կողմից ստացված դրամական միջոցների արդյունքում սոցիալական աջակցության կարիք ունեցող արցախցի երեխաներին ձմեռային բաճկոններ տրամադրելու նպատակով իրականացվել է գնման գործընթաց:</p> <p>18. Ներառականության ապահովման համար սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների երեխաներին, ինչպես նաև արցախցի երեխաներին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի ամանորյա միջոցառումների տոմսեր տրամադրելու</p>		
--	--	---	--	--

			<p>նպատակով իրականացվել է գնման գործընթաց:</p> <p>19.Սոցիալական պաշտպանության ոլորտում համագործակցություն է իրականացվել Ազգային ժողովի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների, ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության, վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների, ինչպես նաև ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող միջազգային, հասարակական և այլ կազմակերպությունների հետ /Հայկական Կարմիր խաչ, Վորլդ Վիժն, ՅՈՒՆԻՍԵՖ և այլն/:</p>	<p>Չինաստանի ժողովրդական հանրապետության դեսպանություն</p>	
--	--	--	---	---	--

**Կ**

31.	Երևան քաղաքի զբոսաշրջության զարգացման բրենդի մշակում	Նախատեսվում է ծրագիրն իրականացնել բաց մրցույթների և հանրային քննարկումների միջոցով, որի արդյունքում կընդունվի լավագույն առաջարկը: Այս ծրագիրը հնարավորություն կտա շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ ձևավորել Երևանի՝ որպես կազմակերպված հանգստի, զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ քաղաքի նկարագիր և ճանաչելի դարձնել Երևանը միջազգային զբոսաշրջային շուկայում:	Աշխատանքները չեն իրականացվել տվյալ նախագծի իրականացումը տվյալ տարում ցածր գնահատելու պատճառով:		
32.	Միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացում զբոսաշրջության ոլորտում	Սույն ուղղությունը ենթադրում է տարաբնույթ միջոցառումների մշակում և իրականացում մի շարք քույր և գործընկեր քաղաքների հետ, մասնավորապես գործարար հանդիպումների, ճանաչողական այցերի, փորձի փոխանակման, սեմինարների, կոնֆերանսների, կլոր-սեղանների կազմակերպում՝ պետական և մասնավոր	1. Երևանի քաղաքապետարանի Արտաքին կապերի վարչության հետ համատեղ, աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության տուրիզմի բաժնի նախաձեռնությամբ և «Հայ զբոսավարների գիլդիա» ՀԿ-ը կազմակերպվել է քաղաքային զբոսավարների վերապատրաստման դասընթաց Երևանի տասնմեկ քույր քաղաքների՝	Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության տուրիզմի բաժին	



		<p>շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ, միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին, ճանաչողական այցերին մասնակցության ապահովում:</p>	<p>ուլորտի մասնագետների հետ: Ծրագրին մասնակցել են ութ տարբեր քաղաքներ: «Հայ զբոսավարների գիլդիա» ՀԿ-ին տրամադրվել է աջակցություն՝ Երևանի քույր քաղաքների, նաև ՀՀ մարզերի զբոսաշրջային ոլորտի ներկայացուցիչների, զբոսավարների համար վերապատրաստման դասընթաց կազմակերպելու նպատակով: Ծրագիրը իրականացվել է նոյեմբեր ամսին Երևան ժամանած ութ զբոսավարների համար:</p>	<p>Նոյեմբեր 2023թ.</p>	
<p>33.</p>	<p>Երևան քաղաքում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ ծրագրերի իրականացում</p>	<p>«Երևան Սիթի Տուր» քաղաքային զբոսաշրջային պաշտոնական երթուղու կատարելագործում ու արդիականացում, որը մեծ հետաքրքրություն ունի ինչպես մայրաքաղաքի հյուրերի, այնպես էլ բնակիչների շրջանում: Իրականացվելու են տոն և հիշատակի օրերին նվիրված (ինչպես նաև առանձին դեպքերում) անվճար ակցիաներ՝ մասնակից դարձնելով երեխաներին, սոցիալապես անապահով խավերին և հաշմանդամություն ունեցող անձանց: Երևան քաղաքում գործող զբոսաշրջային տեղեկատվական աջակցության և քաղաքացիների սպասարկման կենտրոնների գործունեության ապահովում, բարեկարգում:</p>	<p>1. Մշակվել է նոր հայեցակարգ և երկու նոր երթուղի՝ «Երևան Սիթի Տուր» քաղաքային զբոսաշրջային պաշտոնական երթուղու համար:</p> <p>1.1 Գրվել և մշակվել են «Երևան Սիթի Տուր» քաղաքային զբոսաշրջային պաշտոնական երթուղու ժամանակ հնչող նոր տեքստեր: Տեքստերի թարգմանությունը, ձայնագրումը և երաժշտական ձևավորումը մրցութային փուլում է՝ (ընդհանուր 8 լեզուներով):</p> <p>1.2 Քննարկվում է տուրի տոմսերի առցանց գնման համակարգի ներդրումը: Նախապատրաստվել է տոմսերի ցանցային և առցանց վաճառքի և հաշվետվությունների համակարգի ձեռքբերման մրցույթի հայտը, ըստ որի համակարգը պետք է համապատասխանի միջազգային չափանիշներին:</p> <p>1.3 Նախատեսվում է ձեռք բերել բրիտանական City Sightseeing ընկերության ֆրանչայզը: Պայմանագիրը կկնքվի առաջիկայում:</p> <p>2. Երևանի երկու զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններում տեղադրվել են</p>		

			բարձրախոսներ, կազմվել է հատուկ ցանկ, որտեղ նշված են քաղաքում տեղի ունեցող ամենօրյա միջոցառումների, թատրոնների, թանգարանների, եղանակի տեսության և երթուղիների մասին տեղեկատվություն: Ամեն օր, օրական 6-7 անգամ բարձրախոսը երեք լեզուներով հնչեցնում է այդ տեղեկատվությունը:		
34.	Ջրոսաշրջության զարգացման մարքեթինգային քաղաքականության իրականացում	Կարևորելով Երևանի դերը՝ մեծ ուշադրություն է դարձվում մայրաքաղաքի հանրահոշակմանն ուղղված աշխատանքներին միջազգային հարթակներում: Սույն ուղղությունն իր մեջ ներառում է Երևանի մասին տեղեկատվության տրամադրում ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ճամփորդական ամսագրերին և թերթերին, մայրաքաղաքի մասին հոդվածների պատրաստում, Երևանը որպես զբոսաշրջային արդյունք դիրքավորումը, գովազդումն ու ներկայացումը: Visit Yerevan պաշտոնական զբոսաշրջային կայքի և հավելվածի բովանդակության մշակում, թարգմանության ապահովում, առաջխաղացում և հանրահոշակում:	1. Կազմվել է Երևան քաղաքի զբոսաշրջային ուղղությունը սպասարկող սոցիալական մեդիա էջերի մրցութային հայտը: Աշխատանքների մեկնարկը՝ մինչև տարեվերջ: Նախագիծը մեծապես կնպաստի Երևանում զբոսաշրջային պրոդուկտի առավել արդյունավետ և թիրախային լուսաբանմանն ու նոր զբոսաշրջիկների ներգրավմանը: Ձեռք են բերվել Երևան քաղաքի սոցիալական մեդիայի էջերի ստեղծման և խթանման ծառայություններ՝ մեկ տարվա կտրվածքով: Ծրագիրը նախատեսված է Երեվանի 2023 թվականի բյուջեով: 2. Տպագրվել է Երևանի բազմալեզու զբոսաշրջային քարտեզը, որը տրամադրվել է զբոսաշրջիկներին և զբոսաշրջային ոլորտի շահառուներին: Քարտեզները ձեռք են բերվել նախատեսված արժեքից ցածր գնով:	Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության տուրիզմի բաժին  Դեկտեմբեր 2023թ.  Մայիս 2023թ.	
<b>ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ</b>					
35.	Բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտում ուսուցումների կազմակերպում և խորհրդատվության տրամադրում	1. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների բարելավում: 2. Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության բարձրացում:	Կոմունալ տնտեսության վարչության բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների բաժնի մասնագետների կողմից մշտական խորհրդատվություն, մեթոդական ցուցումներ են տրվում կառավարման մարմինների ղեկավարներին, աշխատակիցներին և տեղեկատվություն՝ բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերին:		

		3. Պարտադիր նորմերի պահանջների պահպանման, կատարման նկատմամբ մեխանիզմների իրականացում, որոնց արդյունքում կբարձրանա պարտադիր նորմերի կատարմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը հաշվետվողականությունը և թափանցիկությունը:			
36.	Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի վերելակների փոխարինում	Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերում շահագործման ժամկետը սպառած վերելակների փոխարինում նորերով՝ հարմարեցված նաև լսողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ ունեցող բնակիչներին: Նախատեսվում է փոխարինել 700 հատ վերելակ:	Փաստացի փոխարինվել է 510 վերելակ:	100 վերելակների (տեղադրումով և սպասարկումով) ձեռքբերման համար «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ-ի հետ 19.04.2023թ. կնքվել է ՌԵԲ-ԲՄԱՊՁԲ-23/5 պայմանագիրը Լրացուցիչ 10 վերելակների (տեղադրումով և սպասարկումով) ձեռքբերման համար 15.09.2023թ. կնքվել է պայմանագրի N2 համաձայնագիրը 19.04.2023-15.10.2023թթ. 400 վերելակների (տեղադրումով և սպասարկումով) ձեռքբերման համար «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ-ի հետ	200 վերելակների (տեղադրումով և սպասարկումով) ձեռքբերման համար հայտարարված ԵԲ-ԲՄԱՊՁԲ-23/8 մրցույթի արդյունքները բողոքարկվել են:

				05.04.2023թ. կնքվել է ՌԵՔ-ԲՄԱՊՁԲ-23/7 պայմանագիրը, իսկ 23.06.2023թ. կնքվել է ֆինանսական միջոցներ նախատեսելու վերաբերյալ պայմանագրի N1 համաձայնագիրը 23.06.2023-19.11.2023թթ.	
37.	Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում	Նախատեսվում է բազմաբնակարան շենքերի վնասված հարթ և թեք տանիքների հիմնանորոգում ցինկապատ պրոֆիլավորված հարթ թիթեղներով և այլ անհրաժեշտ նյութերի օգտագործամբ:	Փաստացի վերանորոգվել է 69754քմ հարթ և 47922.64քմ թեք տանիք:	Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն(ներ) Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններ	Աշխատանքների պատվիրատու են հանդիսանում վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը:
38.	Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում	Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում, պատուհանների և դռների փոխարինում:	Փաստացի վերանորոգվել է 447:	Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն(ներ) Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններ	Աշխատանքների պատվիրատու են հանդիսանում վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը:
39.	Սանիտարական մաքրում և աղբահանություն	Շարունակաբար բարելավվելու են սանիտարական մաքրման և աղբահանության իրականացման աշխատանքները: Հսկողություն է իրականացվելու փողոցների, մայթերի, հրապարակների, բակա-	Շարունակվում է «ԵԱՍՄ» համայնքային հիմնարկի համար հատուկ նշանակության մեքենա մեխանիզմների ձեռքբերման գործընթացը: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսու-		

		<p>յին և ընդհանուր օգտագործման այլ տարածքների սանիտարական մաքրման, ինչպես նաև իրականացվող աղբահանության աշխատանքների կատարման որակի նկատմամբ:</p>	<p>թյան վարչության կողմից ամենօրյա վերահսկողություն է իրականացվել «ԵԱՍՄ» համայնքային հիմնարկի կողմից իրականացվող աղբահանության և սանմաքրման աշխատանքների նկատմամբ, ինչպես նաև վարչական շրջանների հետ համատեղ վերահսկողություն է սահմանվում «Դավարս» ՍՊԸ-ի կողմից կատարվող աշխատանքների նկատմամբ:</p>		
40.	<p>Նոր ջրագծերի, կոյուղագծերի, հեղեղատարների կառուցում և գործող ցանցերի վերակառուցում</p>	<p>Թաղամասերում /փողոցում/ գոյություն չունեցող կոյուղագծերի և հեղեղատար համակարգերի հատվածային կառուցում և գործող ցանցերի վերակառուցում:</p>	<p>Կառուցվել/վերակառուցվել են.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Աջափնյակ վարչական շրջանի Հ. 111 դպրոցից մինչև Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհատվածի կոյուղագծի կառուցման աշխատանքներ:</li> <li>2. Ավան վարչական շրջանի Ավան-Առինջ թաղամասի 2-րդ միկրոշրջանի հ.1/13 շենքից Ավան-Առինջ թաղամասի 1-ին միկրոշրջանի հ.2/4 շենքի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</li> <li>3. Արաբկիր վարչական շրջանի Հ. Քոչարի 1-ին նրբանցքի կոյուղագծի կառուցման աշխատանքներ:</li> <li>4. Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 1-ին թաղամասի հ. 27 շենքից հ.27/1 շենքի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</li> <li>5. Էրեբունի վարչական շրջանի Մուշական, 6-րդ փողոցի հ.29 /հ.101 դպրոց/ ջրագծի կառուցման աշխատանքներ:</li> <li>6. Կենտրոն վարչական շրջանի Նար-Դոսի փողոց հ.75 կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</li> <li>7. Նոր Նորք վարչական շրջանի Գյուլիքևիայան փողոցի հ.29 շենքից հ.34 շենքի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. «Շինմաստեր» ՍՊԸ 22.05.2023-08.06.2023թթ. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/66-3</li> <li>2. «Արկադիա Շին» ՍՊԸ 22.05.2023 - 20.09.2023թթ. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/66-1</li> <li>3. «Արկադիա Շին» ՍՊԸ 22.05.2023 - 20.09.2023թթ. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/66-1</li> <li>4. «Ցենտոակոլ» ՍՊԸ 22.05.2023 - 27.07.2023թթ. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/66-2</li> <li>5. «Ցենտոակոլ» ՍՊԸ 22.05.2023 - 30.08.2023թթ.</li> </ol>	

	<p>8. Շենգավիթ վարչական շրջանի Բայդուկովի փողոցի կոյուղագծի կառուցման աշխատանքներ:</p> <p>9. Աջափնյակ վարչական շրջանի Շինարարների փողոցի հ.15/1շենքից հ.15/2 շենք կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>10. Ավան վարչական շրջանի Ավան-Առինջ թաղամասի 1-ին միկրոշրջանի հ.1/8 շենքից Ավան-Առինջ թաղամասի 1-ին միկրոշրջանի հ.5 շենք կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>11. Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի պողոտա հ.1 հեղեղատար համակարգի կառուցման աշխատանքներ:</p> <p>12. Էրեբունի վարչական շրջանի Աթոյան անցուղի հ.7 հասցեից հ.10 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>13. Կենտրոն վարչական շրջանի Տիգրան Մեծի պողոտայի հ.53 շենքից դեպի կամուրջ կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>14. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Անդրանիկի փողոցի հ.36 (հ.176 դպրոց) մինչև Շերամի փողոցի հ. 65/2 (հ.79 մանկապարտեզ) կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>15. Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական փողոցի հ.29/1 շենքից հ.29/6 շենք կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>16. Նոր Նորք վարչական շրջանի Նանսենի փողոցի հ.22 /Հ.100 մանկապարտեզ/ կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</p>	<p>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/66-2</p> <p>6. «Արկադիա Շին» ՍՊԸ 22.05.2023 - 20.07.2023թթ. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/66-1</p> <p>7. «Արկադիա Շին» ՍՊԸ 22.05.2023 - 20.07.2023թթ. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/66-1</p> <p>8. «Ցենտոակոլ» ՍՊԸ 22.05.2023 - 03.10.2023թթ. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/66-2</p> <p>9. «Շինմասսեր» ՍՊԸ 31.08.2023- 09.11.2023թթ. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/81-1</p> <p>10. «Շինմասսեր» ՍՊԸ 31.08.2023 - 14.11.2023թթ. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/81-1</p> <p>11. «Շինմասսեր» ՍՊԸ 31.08.2023- 09.11.2023թթ. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/81-1</p>	
--	--	--	--

	<p>17. Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան փողոց հ.91 հասցեից /հ.61 դպրոց/ Արմենակյան փողոց կոյուղագծի կառուցման աշխատանքներ:</p> <p>18. Շենգավիթ վարչական շրջանի Ն.Շենգավիթ 15-րդ փողոց կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>19. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ազատության պողոտա հ.14 կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>20. Էրեբունի վարչական շրջանի Խաղաղ Դռնի փողոց հ.1 շենքի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>21. Էրեբունի վարչական շրջանի Խաղաղ Դռնի փողոց հ.5 շենքի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>22. Էրեբունի վարչական շրջանի Խաղաղ Դռնի փողոց հ.23 շենքի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>23. Էրեբունի վարչական շրջանի Ազատամարտիկների փողոց հ.87 շենքի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>24. Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն 12-րդ փողոց հ.4 շենքին հարակից հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>25. Էրեբունի վարչական շրջանի Խաղաղ Դռնի փողոց հ.27 և 31 շենքերի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>26. Էրեբունի վարչական շրջանի Էրեբունի փողոցի հ.34 շենքի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>27. Շենգավիթ վարչական շրջանի Նորագավիթ 7-րդ փողոց հ.53 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ:</p>	<p>12. «Արտ Շին 1155» ՍՊԸ 26.05.2023 - 25.07.2023թթ. ԵՔ-ԳՀԱՇՁԲ- 23/81-2</p> <p>13. «Շինմաստեր» ՍՊԸ 11.09.2023 - 10.11.2023թթ. ԵՔ-ԳՀԱՇՁԲ- 23/153</p> <p>14. «Շինմաստեր» ՍՊԸ 31.08.2023 - 07.12.2023թթ. ԵՔ-ԳՀԱՇՁԲ- 23/81-1</p> <p>15. «Լիլանարմ» ՍՊԸ 08.09.2023 - 08.11.2023թթ. ԵՔ-ԳՀԱՇՁԲ- 23/81-3</p> <p>16. «Արտ Շին 1155» ՍՊԸ 23.05.2023 - 29.06.2023թթ. ԵՔ-ԳՀԱՇՁԲ- 23/81-2</p> <p>17. «ԷՄՕՇԻՆ» ՍՊԸ 12.06.2023 - 08.12.2023թթ. ԵՔ-ԲՄԱՇՁԲ- 23/71-2</p> <p>18. «Արտ Շին 1155» ՍՊԸ</p>	
--	---	--	--

				<p>08.09.2023- 27.09.2023թթ. ԵՔ-ԳՀԱՇՁԲ- 23/81-2</p> <p>19.«Շինմաստեր» ՍՊԸ 31.08.2023 - 04.12.2023թթ. ԵՔ-ԳՀԱՇՁԲ- 23/81-1</p> <p>20. «Լիլանարմ» ՍՊԸ 20.07.2023 - 09.10.2023թթ. ԵՔ-ԳՀԱՇՁԲ- 23/160-1</p> <p>21.«Լիլանարմ» ՍՊԸ 20.07.2023 - 09.10.2023թթ. ԵՔ-ԳՀԱՇՁԲ- 23/160-1</p> <p>22. «Շինմաստեր » ՍՊԸ 19.07.2023 - 05.10.2023թթ. ԵՔ-ԳՀԱՇՁԲ- 23/160-2</p> <p>23. «Ցենտոակոլ» ՍՊԸ 20.07.2023 - 11.09.2023թթ. ԵՔ-ԳՀԱՇՁԲ- 23/160-3</p> <p>24. «Լիլանարմ» ՍՊԸ 22.09.2023 - 08.11.2023թթ.</p>	
--	--	--	--	--	--



				ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/160-1 25. «Շինմաստեր» ՍՊԸ 30.08.2023 - 15.12.2023թթ. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/108 26. «Արկադիա Շին» ՍՊԸ 05.10.2023 - 08.12.2023թթ. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/247 27. «Ստրոյ Գրուպ» ՍՊԸ 17.10.2023- 13.12.2023թթ. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/270
--	--	--	--	--

**«ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲԸ**

41.	Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործում, պահպանում և արդիականացում	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման, պահպանման և ընթացիկ նորոգման ծառայությունները: 1. Լուսային ժամանակակից և էներգաարդյունավետ խնայողական ԼԵԴ լուսատուների տեղադրում: 2. Մալուխային ցանցի հիմնանորոգում՝ հաղորդալարերով մոնտաժված ցանցի փոխարինում մալուխներով: 3. Դիսպետչերական ծառայությունում GSM կառավարման համակարգի ներդրում: 4. Չլուսավորվող փողոցների, բակերի, նրբանցքների լուսավորում:	Երթաղլույս ՓԲԸ-ն 2023թ. ընթացքում իրականացրել է Երևան քաղաքի 2816 օբյեկտների 1792.07կմ ընդհանուր երկարությամբ արտաքին լուսավորության ցանցի շահագործման, պահպանման և ընթացիկ նորոգման ծառայությունները: Մասնավորապես՝ մի շարք փողոցներում, բակային տարածքներում և այգիներում իրականացվել են արդիականացման աշխատանքներ, գործող նատրիումական լուսատուները փոխարինվել են ԼԵԴ լուսատուներով, մոնտաժվել է 10733 հատ ԼԵԴ լուսատու, որի արդյունքում ապահովվում է ավելի որակյալ լուսավորություն և էլեկտրաէներգիայի խնայողություն: 1 ժամով ավելացվել է նաև արտաքին լուսավորության ցանցի միացման ռեժիմը: Շահա-	Երթաղլույս ՓԲԸ, աշխատանքները կատարվել են ամբողջ տարվա ընթացքում
-----	--	---	---	---

		<p>գործման և պահպանման աշխատանքների ընթացքում՝ փոխարինվել են մի շարք փողոցների, բակային տարածքների արտաքին լուսավորության ցանցի վնասված լամպերը: Փոխարինվել են մի շարք այգիների անցումների, արձանների, շենքերի գեղարվեստական վնասված լամպերը և լուսարձակները: Կատարվել են մալուխային ցանցի հիմնանորոգման աշխատանքներ, հաղորդալարերով մոնտաժված ցանցի մի շարք հատվածներ փոխարինվել են մալուխներով, մոնտաժվել է 192537 մետր տարբեր կտրվածքի մալուխ: Մի շարք փողոցներում վերականգնվել են ավտոմեքանիկայի հետևանքով վնասված հենասյուները: Մի շարք ուժային պահարաններում կատարվել են կանխարգելիչ աշխատանքներ, փոխարինվել են վնասված ավտոմատ-անջատիչները, թողարկվիչները: Իրականացվել է արտաքին լուսավորության ցանցի շղթայի գծերի վերանորոգման և փոխարինման աշխատանքներ: Մի շարք ուժային պահարաններում տեղադրվել է GSM կառավարման համակարգ: Մալաթիա-Սեբաստիա, Արաբկիր, Նուբարաշեն, Շենգավիթ, Դավթաշեն, Նոր Նորք, Նորք Մարաշ վարչական շրջանների հետ կնքված սուբսիդիոն պայմանագրերի շրջանակում՝ կառուցվել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թվով 10 փողոցի և բակային տարածքի արտաքին լուսավորության ցանցը, կառուցվել է Արաբկիր վարչական շրջանի Արաբկիր Շրջանցիկ թունելից դեպի Զովունի տանող կամրջի ճանապարհի արտաքին լուսավորության ցանցը, կառուցվել է Շենգավիթ վարչական շրջանի թվով 8 փողոցների</p>		
--	--	---	--	--

			<p>տարածքների արտաքին լուսավորության ցանցը, կառուցվել է Նուբարաշեն վարչական շրջանի «Դ», «Գ», «Ե», «Է» թաղամասերի, 6-րդ փողոցի քարե սպայականի դիմաց և Նուբարաշեն հոգեբուժարան տանող ճանապարհի փողոցի արտաքին լուսավորության ցանցը, կառուցվել է Դավթաշեն վարչական շրջանի թվով 5 փողոցի արտաքին լուսավորության ցանցը, կառուցվել է Նոր Նորք վարչական շրջանի Լյուքսենբուրգի փողոցի նոր կառուցվող այգու և Հայկի արձանի այգու տարածքների արտաքին լուսավորության ցանցը, հիմնանորոգվել է Տիգրան Մեծի այգու արտաքին լուսավորության ցանցը, կառուցվել է Նորք Մարաշ թվով 3 փողոցի արտաքին լուսավորության ցանցը Երքաղլույս ՓԲԸ-ի ֆինանսական միջոցների հաշվին իրականացվել են արտաքին լուսավորության ցանցի վերականգնման աշխատանքները: Երքաղլույս ՓԲԸ-ն վերահսկողություն է իրականացրել վարչական շրջաններում նոր կառուցվող փողոցների և այգիների արտաքին լուսավորության ցանցի աշխատանքների նկատմամբ և ընդունել շահագործման: Իրականացված արտաքին լուսավորության ցանցի վերականգնման աշխատանքների արդյունքում, արտաքին լուսավորության ցանցի երկարությունը 2023թ. ընթացքում ավելացել է 37.04կմ-ով, օբյեկտների թիվը 38-ով:</p>		
42.	<p>ՄԱԿ-ի զարգացման Հայաստանյան գրասենյակի հետ համատեղ իրականացվող «Աջակցություն Հայաստանի համայնքներին կլիմայական «Խելացի» լուծումների</p>	<p>Նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի մի շարք փողոցների արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքները, գործող նատրիումական լուսատուները փոխարինել ավելի</p>	<p>ՄԱԿ-ի զարգացման Հայաստանյան գրասենյակի հետ համատեղ իրականացվող «Աջակցություն Հայաստանի համայնքներին կլիմայական «Խելացի» լուծումների ներդրման և իրականացման հարցում» ծրագրի շրջանակում 2023թ. ընթացքում</p>	<p>Երքաղլույս ՓԲԸ, աշխատանքները կատարվել են ամբողջ տարվա ընթացքում:</p>	

	ներդրման և իրականացման հարցում» ծրագիր	արդիական, էներգաարդյունավետ ԼԵԴ լուսատուներով:	արդիականացվել է Արցախի պողոտայի և Վաղարշյան, Հրաչյա Քոչար, Նաիրի Զարյան, Օրբելի փողոցների արտաքին լուսավորության ցանցը, գործող նատրիումական լուսատուները փոխարինվել են ԼԵԴ լուսատուներով, մոնտաժվել է 830 հատ ԼԵԴ լուսատու, որի արդյունքում ապահովվում է ավելի որակյալ լուսավորություն և էլեկտրաէներգիայի խնայողություն:		
43.	«Երևանի քաղաքային լուսավորություն» վարկային և դրամաշնորհային ծրագրեր	<p>«Երևանի քաղաքային լուսավորություն» վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, Երևան քաղաքի թվով 28 փողոցների արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքների իրականացում: Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. առկա էներգատար լուսատուները փոխարինել էներգաարդյունավետ LED տիպի լուսատուներով,</li> <li>2. փոխել/ամրացնել լուսավորության հենասյուները,</li> <li>3. փոխել լուսավորության հենասյուների բարձակները,</li> <li>4. տեղադրել ստորգետնյա պլաստիկ խողովակաշարեր,</li> <li>5. տեղադրել լուսավորության համակարգի նոր մալուխներ՝ ստորգետնյա հաղորդողներում,</li> <li>6. ներդնել 28 փողոցների լուսավորության ցանցի կառավարման համակարգ:</li> </ol>	<p>Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի քաղաքային լուսավորություն վարկային ծրագրերի շրջանակում 28 փողոցներից Թումանյան Վարդանանց փողոցում, Մյասնիկյան պողոտայում և Աճառյան փողոցում, Խորենացի փողոցում, Ամիրյան փողոցում իրականացվել են աշխատանքներ: Իրականացվել են հենասյուների բետոնե հիմքերի, հենասյուների, բարձակների և ԼԵԴ լուսատուների տեղադրման աշխատանքներ: Ներկա դրությամբ, աշխատանքները իրականացվում են Երևան քաղաքի Մյասնիկյան պողոտայում, Աճառյան և Ամիրյան փողոցներում: Ի սկզբանե ծրագրում ներառված չեն եղել օպերատորների, լուսացույցերի, տրանսպորտային միջոցների կայանման տեսալուսանկարահանող սարքերի, ճանապարհային ոստիկանության տեսախցիկների համար նախատեսված հավելյալ աշխատանքեր, որոնք ավելացվել են նախագծում համապատասխանեցնելով շահագրգիռ կողմերի հետ որն էլ իր հերթին ավելացրել է աշխատանքների ծավալը և միևնույն ժամանակ իր հետ բերել նոր բազում խնդիրներ կապված ստորգետնյա կոմունիկացիաների հետ: Տեղի են</p>	<p>Կապալառու ONNINEN OY Ընկերություն, Լուսադիողային (ԼԵԴ) լուսավորության համակարգի մատակարարումը և տեղադրումը Երևանում ԵՐՎ/ԼԵԴ/1 Պայմանագիրը կնքվել է 2019թ-ի հունվարի 11-ին</p>	

			ունեցել էական աշխատանքային պայմանների փոփոխություններ և ծրագիրը կատարելու համար ևս անհրաժեշտ են փոփոխություններ (պայմանագրում փոփոխություն կատարելու գործընթացն ընթացքի մեջ է, բանակցության փուլում է): Աշխատանքները շարունակվում են իրականացվել:		
44.	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ	Երևան քաղաքի տարածքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ՊԿԱԾ-2023 ծրագրի շրջանակներում նախատեսվում է հետևյալ աշխատանքները. 1. 9200 մետր ջրագծերի վերակառուցում և ջրամատակարարման գոտիավորում, 230 մետր կոյուղագծի վերակառուցում:	ՊԿԱԾ-2023 ծրագրի շրջանակներում վերակառուցվել է 10550գծմ ջրագիծ և 1659գծմ կոյուղագիծ:	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ	
45.	«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ	Երևան քաղաքի տարածքում նախատեսվում է 496 հատ բաշխիչ պահարանների վերատեղադրում:	Երևան քաղաքի տարածքում նախատեսվում է 496 հատ բաշխիչ պահարանների վերատեղադրում:	«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ	
46.	«ՀԷՑ» ՓԲԸ	Երևան քաղաքի տարածքում ՀԷՑ» ՓԲԸ-ի ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում է հետևյալ աշխատանքները. 1. 69650 մ մալուխների փոխարինման կամ նոր մալուխների ստորգետնյա մոնտաժում 6/10 կՎ և 0,4 կՎ, 65500 մ օդային գծերի փոխարինման կամ նոր օդային գծերի մոնտաժում 6/10 կՎ և 0,4 կՎ:	Երևան քաղաքի տարածքում «ՀԷՑ» ՓԲԸ-ի ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվել է 37100 գծմ մալուխների փոխարինման կամ նոր մալուխների ստորգետնյա մոնտաժում 6/10 կՎ և 0,4 կՎ և 32000 գծմ օդային գծերի փոխարինման կամ նոր օդային գծերի մոնտաժում 6/10 կՎ և 0,4 կՎ:	«ՀԷՑ» ՓԲԸ	
47.	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	Կապիտալ նորոգման ծրագրի նախագծում ընդգրկված Երևան քաղաքի գործող ստորգետնյա գազատարների վերատեղադրման և մեկուսիչ ծածկույթի վնասված հատվածների վերանորոգման աշխատանքները 8535մ:	Երևան քաղաքի գործող ստորգետնյա գազատարների վերատեղադրվել է և վերանորոգվել է մեկուսիչ ծածկույթի վնասված հատվածների 8535 գծմ:	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	

**ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

48.	Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում	<p>1. Դպրոցների տնօրենների համար պարբերական սեմինարների կազմակերպում՝ աշխատանքային օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների, կրթության ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի, կրթության կազմակերպման արդյունավետությունը խթանող ծրագրերի, կրթության ոլորտում նորարար մոտեցումների, շահառուների կողմից վերհանված հարցերի վերաբերյալ:</p> <p>2. Լավագույն փորձի փոխանակման, ինչպես նաև նոր գիտելիքների փոխանցման նպատակով դասընթացների, վարպետաց դասերի, քննարկումների կազմակերպում՝ տնօրենների տեղակալների, մեթոդ միավորումների նախագահների և առանձին խմբերի համար, խրախուսման միջոցառումների կազմակերպում:</p> <p>3. Պետական հանրակրթական դպրոցների և մասնավոր դպրոցների միջև գործընկերային հարաբերությունների խթանում, փորձի փոխանակման հանդիպումների կազմակերպում:</p>	<p>1. Ուսուցչի օրվա խորհրդով Երևանի ենթակայության դպրոցների տնօրենների մասնակցությամբ կազմակերպվել է «Դպրոցի տնօրենը՝ մարդկային ռեսուրսների կառավարիչ» դասընթացը, որի շրջանակում ներկայացվել են ինչպես թեմատիկ դասախոսություններ, այնպես էլ աշխատանքային օրենսգրքում տեղ գտած ծավալուն փոփոխությունները: Միաժամանակ պարբերաբար կազմակերպվել են քննարկումներ (նաև՝ առցանց)՝ կրթության ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի, ծրագրերի, կրթության կազմակերպման առնչվող հարցերի վերաբերյալ:</p> <p>2. Հանրակրթության նոր չափորոշիչներ դրման շրջանակում պարբերաբար կազմակերպվել են սեմինարներ, մեթոդ դպրոցների մասնագետների կողմից ցուցաբերվել է մեթոդական աջակցություն, կազմակերպվել են տարբեր առարկաների բաց դասեր, քննարկումներ, մասնագիտական կարողությունների զարգացման դասընթացներ:</p> <p>3. Պետական հանրակրթական և մասնավոր դպրոցների աշակերտները համատեղ մասնակցել են առարկայական օլիմպիադաներին, ստուգող հանձնաժողովների աշխատանքների շրջանակում նշյալ դպրոցների ուսուցիչներն առիթ են ունեցել փորձի փոխանակման:</p>	<p>Աշխատակազմի հանրակրթության վարչություն, ԿԶՆԱԿ հիմնադրամ</p> <p>1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ</p>	
49.	Դպրոցների շենքերի հիմնանորոգում, վերանորոգում, մասնակի նորոգում (նաև՝ հարմարեցում)	<p>1. Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ անվտանգության բարելավման և/կամ քաղաքաշինության ծրագրերի շրջանակում պետական հանրակրթական դպրոցների հիմնանորոգում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 13.07.2017թ. հ.805-Ն</p>	<p>1. Ավարտվել են հհ. հհ. 6, 18, 95, 111, 116, 122 դպրոցների հիմնանորոգման աշխատանքները: «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրի, հ. 22 դպրոցի մասնաշենքի նորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են: Մյուս դպրոցների հիմնանորոգման աշխատանքները դեռ չեն մեկնարկել:</p>	<p>ՀՀ կառավարություն, Ասիական զարգացման բանկ,</p>	

		<p>որոշման: Սույն ծրագրի շրջանակում շարունակելու և/կամ մեկնարկելու են հետևյալ դպրոցների հիմնանորոգման աշխատանքները՝ հհ. 6, 18, 22, 45, 68, 95, 111, 116, 122, 188 դպրոցները և «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրը:</p> <p>2. Մասնագիտական խորհրդատվական հանդիպումների կազմակերպում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար հարմարեցումների մասնագիտական ուղղորդում ստանալու նպատակով: Երևանի ենթակայության դպրոցներում հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցման շարունակական աշխատանքների իրականացում՝ մասնավորաբար թեքահարթակների կառուցում, սանհանգույցների և գույքի հարմարեցումներ:</p>	<p>2. Երևանի ենթակայության բոլոր դպրոցներին տրամադրվել է Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից մշակված «Մատչելի կրթական միջավայր. Ֆիզիկական միջավայրի հարմարեցումներ» և «Արդյունավետ հարմարեցումներ, որակյալ կրթություն. ձեռնարկ մանկավարժների համար» մեթոդական ուղեցույցերը: Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների կողմից ցուցաբերվում է մասնագիտական խորհրդատվություն՝ անհրաժեշտ հարմարեցումների վերաբերյալ: Շարունակվել են միջավայրի հարմարեցմանը միտված աշխատանքները՝ թեքահարթակների կառուցում, սանհանգույցների և դասասենյակների հարմարեցում և այլն: Հիմնանորոգված բոլոր դպրոցներում ապահովված է ուսումնական միջավայրի ֆիզիկական մատչելիությունը:</p>	<p>աշխատակազմի հանրակրթության վարչություն, ՀՄԿ, ՏՄԱԿ-ներ</p> <p>1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ</p>	
50.	Ներառական կրթության արդյունավետության խթանում	<p>1. Ուսուցիչների՝ ներառող դասավանդման վերապատրաստման կարողությունների զարգացման ծրագրերի իրականացում համագործակից կառույցների ներգրավմամբ,</p> <p>2. Փորձի փոխանակման հանդիպումներ, սեմինարներ ներառական կրթության ոլորտում հաջողություններ ունեցող դպրոցների, փորձագետների ներգրավմամբ:</p>	<p>Երևանի ենթակայության դպրոցները սերտորեն համագործակցել են տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների հետ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների անհատական ուսուցման պլաններով նախատեսված աշխատանքների շրջանակում, մասնակցել թեմատիկ քննարկումների, սեմինարների:</p>	<p>Աշխատակազմի հանրակրթության վարչություն, դպրոցներ, ՏՄԱԿ-ներ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ</p>	
51.	Մրցունակ կրթության ապահովմանն ուղղված աշխատանքների կազմակերպում և աջակցություն	<p>1. Դպրոցների էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությանն առնչվող գիտելիքների զարգացման նպատակով խորհրդատվական հանդիպումների կազմակերպում:</p> <p>2. Դասապրոցեսում կրթական էլեկտրոնային ռեսուրսների կիրառման խրախու-</p>	<p>1. Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի հետ համագործակցաբար պարբերաբար անցկացվել են ինչպես հավաքական, այնպես էլ անհատական խորհրդատվություններ՝ դպրոցների էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությանն առնչվող հարցերի վերաբերյալ:</p>	<p>Աշխատակազմի հանրակրթության վարչություն, ԿՏԱԿ, «Իմ դպրոց» կրթական կայքի</p>	

		<p>սում՝ վերապաստրաստման ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տեղայնացման, ուսուցիչների մասնակցության խրախուսման միջոցով:</p> <p>3. Մեդիագրագիտության գիտելիքների փոխանցման նպատակով սեմինարների իրականացում:</p>	<p>2. «Իմ դպրոց» կրթական կայքի հետ համագործակցության շրջանակում խրախուսվել են էլեկտրոնային կրթական ռեսուրսները լավագույնս կիրառած մանկավարժներն ու աշակերտները:</p> <p>3. Մեդիագրագիտության շաբաթվա շրջանակում դպրոցներում կազմակերպվել են թեմատիկ միջոցառումներ՝ հանդիպումներ մասնագետների հետ, բաց դասեր, սեմինարներ և այլն:</p>	<p>1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ</p>	
52.	Արտակարգ ընդունակություններով դպրոցականների հայտնաբերում և խրախուսում	<p>Սովորողների ինտելեկտուալ կարողությունների զարգացմանը նպաստելու նպատակով դպրոցական առարկայական օլիմպիադաների տարածքային, քաղաքային փուլերի կազմակերպում և անցկացում. լավագույնների խրախուսում:</p>	<p>«Հ դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական և տարածքային փուլերի արդյունքում Երևանի քաղաքային փուլին մասնակցած 532 սովորողներ արժանացել են դիպլոմների. 1-ին կարգ՝ 71 աշակերտ, 2-րդ կարգ՝ 125 աշակերտ, 3-րդ կարգ՝ 180 աշակերտ գովասանագրերի է արժանացել 180 աշակերտ:</p>	<p>Աշխատակազմի հանրակրթության վարչություն,</p> <p>1-ին եռամսյակ</p>	
53	Աջակցություն սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացին	<p>1. Հայ ժողովրդի նշանավոր զավակներին, տոներին նվիրված ցերեկույթների, տարվա հորելյարներին նվիրված միջոցառումների կազմակերպման խրախուսում:</p> <p>2. Գրքի և մայրենիի օրվան նվիրված միջոցառման կազմակերպում:</p> <p>3. Բնապահպանական (էկո) ակումբների ձևավորման խրախուսում դպրոցականների շրջանում բնապահպանական դաստիարակությանը միտված նախաձեռնողական ծրագրերի իրականացում:</p> <p>4. Կիրառական ռազմագիտության գիտելիքներին և հմտություններին զարգացմանը միտված ծրագրերի իրականացում:</p>	<p>1. Դպրոցներում կազմակերպվել են հայ ժողովրդի նշանավոր զավակներին և տոներին նվիրված ցերեկույթներ, ֆրանկոֆոնիայի, երեխաների իրավունքներին առնչվող միջոցառումներ, ինչպես նաև տարաբնույթ նախաձեռնություններ:</p> <p>«Երևան Սիթի Տուր»-ի հետ համագործակցաբար կազմակերպվել են աշակերտների ճանաչողական այցեր Երևանյան թանգարաններ, մասնագիտացված ՀՈԱԿ-ներ՝ ծանոթանալու վերջիններիս գործունեության առանձնահատկություններին:</p> <p>Ապահովվել է աշակերտների մասնակցությունը «Քո արվեստը դպրոցում» ծրագրին:</p> <p>Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության նախաձեռնությամբ իրականացված զբոսաշրջային երթուղային ծրագրի</p>	<p>«Սեյմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ, ԱՀԿ</p> <p>1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ</p>	



		<p>5. Արտակարգ իրավիճակներում քաղաքացիական պաշտպանության գիտելիքի կիրառական հմտությունների զարգացում՝ դպրոցների համագործակցային վարժանքների, մասնագետների ներգրավմամբ թեմատիկ սեմինարների միջոցով:</p> <p>6. Լուսանկարչական մրցույթի կազմակերպում:</p> <p>7. Հանրային առողջապահական միջոցառումների կազմակերպում:</p>	<p>շրջանակում թվով 12 դպրոցի 7-9-րդ դասարանների 360 աշակերտների համար անցկացվել են զբոսապտույտներ՝ Երևանի պատմական, ճարտարապետական և մշակութային ժառանգությանը ծանոթանալու, սեփական համայնքի, պետության և համաշխարհային զարգացումների փոխկապվածությունը ճանաչելու նպատակով:</p> <p>2. Գրքի և մայրենիի օրվան նվիրված միջոցառումների շրջանակում օժանդակություն է ցուցաբերվել դպրոցական գրադարանային ֆոնդի համալրմանը, դպրոցներում հյուրընկալվել են գրողներ, գրականագետներ, մշակույթի գործիչներ:</p> <p>3. «Կոկա-կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերության հետ համագործակցաբար շարունակվել է «Աշխարհն առանց թափոնների» ծրագրի իրականացումը, որի շրջանակում դպրոցներում տեղադրվել են տեսակավորման արկղեր, իրականացվել սեմինարներ:</p> <p>4. Թվով 400 դպրոցականների համար կազմակերպվել են դաշտային ռազմամարզական միջոցառումներ՝ դասընթացների, մարտավարության տեսական, գործնական և ցուցադրական պարապմունքների զուգորդմամբ:</p> <p>5. «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի հետ համագործակցաբար կազմակերպվել են սեյսմիկ պաշտպանության վարքականոնների ուսուցման դասընթացներ, տարհանման և այլաբնույթ միջոցառումների՝ ըստ փոխհամաձայնեցված ժամանակացույցի:</p> <p>6. ՀՀ ՀԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ իրականացված «Բարբառը մեր հարստությունն է» աշակերտների հեղի-</p>		
--	--	--	---	--	--

			<p>նակային տեսանյութերի մրցույթին ապահովվել է Երևանի ենթակայության դպրոցների մասնակցությունը:</p> <p>7. Կազմակերպվել է Հայաստանում Առողջապահության համաշխարհային կազմակերպության գրասենյակի և ՀՀ առողջապահության նախարարության և կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համագործակցությամբ իրականացվող ԱՀԿ «Իմուն Պարետ» ծրագրի պիլոտային փորձարկումը Երևանի ենթակայության հ.հ.19,55, 67,106: Ծրագրի շրջանակում 7-րդ և 8-րդ աշակերտները ստացել են գիտելիքներ իմունային համակարգի և պատվաստանյութերի մասին:</p>		
54.	Դպրոցների կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության խրախուսում	<p>1. Դպրոցների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների անդամների ներգրավմամբ սեմինարների կազմակերպում:</p> <p>2. Աշակերտական համաժողովի և/կամ քննարկումների կազմակերպում՝ արդի թեմաներով:</p> <p>3. Մտքերի գեներացիայի խթանման և համակարգման հմտությունների, ծրագրային առաջարկների մշակման նախնական գիտելիքների փոխանցման դասընթացի անցկացում:</p>	<p>1. Ապահովվել է Երևանի ենթակայության դպրոցների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների անդամների իրազեկվածությունը՝ խորհրդի լիազորությունների փոփոխությունների վերաբերյալ:</p> <p>2. Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում աշակերտական խորհուրդների ներգրավմամբ կազմակերպվել են երեխաների իրավունքների իրազեկման միջոցառումներ, քննարկումներ, պատրաստվել թեմատիկ պաստառներ: Երևանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության նախաձեռնությամբ կազմակերպվել է երեխաների պաշտպանության օրվա առթիվ աշակերտական ավագանու նիստ, որի շրջանակում աշակերտները ներկայացրել են զեկույցներ, քննարկել իրենց հուզող խնդիրները: «Կալիֆորնիայի հայ ատամնաբույժների ընկերություն» հայկական մասնաճյուղի կողմից «Ժպտուն ատամներ» ծրագրի շրջանակում Երևանի</p>	<p>Աշխատակազմի հանրակրթության վարչություն, «Կալիֆորնիայի հայ ատամնաբույժների ընկերություն» հայկական մասնաճյուղ, Զինիշյան հիշատակի հիմնադրամ</p> <p>1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ</p>	

			<p>ենթակայության մի քանի դպրոցների աշակերտների համար կազմակերպվել է անվճար ատամնաբուժական հետազոտություն:</p> <p>3. Դպրոցների աշակերտական խորհուրդների գործունեության՝ Ջինիշյան հիշատակի հիմադրամի և ԿԶՆԱԿ-ի մասնագետների համագործակցությամբ իրականացված ուսումնասիրության շրջանակում դուրս բերված կարիքների հիման վրա մշակված ծրագրի փորձնական փուլի գործարկման համար առանձնացվել են Երևանի ենթակայության թվով 5 դպրոցներ: Ծրագրի շրջանակում նախատեսված են աշակերտների կարողությունների զարգացման դասընթացներ, այդ թվում՝ մտքերի գեներացիայի խթանման և համակարգման հմտությունների, ծրագրային առաջարկների մշակման վերաբերյալ:</p>		
55.	Կրթական հաստատությունների ընթացիկ գործունեության մշտադիտարկում	<p>1. Վարչության և դպրոցների հաղորդակցության արդյունավետ ձևաչափի մշակում և գործարկում:</p> <p>2. Հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Կրթության տեսչական մարմնի արձանագրած հիմնական խախտումների վաղ հայտաբերման նպատակով պարբերական ուսումնասիրությունների իրականացում:</p>	<p>1. Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում Երևանի քաղաքապետարանին ընձեռնված է հնարավորություն՝ դիտարկելու հարթակում դպրոցների կողմից իրականացվող գործողությունները, ամբողջացված տվյալները: 2023թ. հանրակրթության վարչության և դպրոցների միջև փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է Մալբրի էլեկտրոնային համակարգով:</p> <p>2. Վարչության կողմից պարբերաբար իրականացվել են ուսումնասիրություններ դպրոցներում ինչպես բողոքների արձագանքման շրջանակում, այնպես էլ հիմնականում արձանագրվող խախտումների վաղ հայտնաբերման նպատակով:</p>	Աշխատակազմի հանրակրթության վարչություն ԿՏԱԿ	1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ
56.	«Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրի ներդրում	Երևանի ենթակայության մի քանի դպրոցներում «Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրի ներդրման համար պայ-	«Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրի շրջանակում դիտարկվել և չափազրման աշխատանքներ են իրականացվել	Աշխատակազմի հանրակրթության վարչություն	

		մանների ապահովում, ծրագրի իրականացում, արդյունքների վերլուծություն, մասսայականացման հնարավորությունների դիտարկման արդյունքների քննարկում, ծրագրի ներդրմանն ուղղված քայլերի ձեռնարկում:	Երևանի ենթակայության մի շարք դպրոցներում: «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի կողմից մշակվել են դպրոցական սննդի կազմակերպման հնարավոր մոդելներ, կատարվել ֆինանսական հաշվարկներ:	«Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ	
<b>Նախադպրոցական</b>					
57.	Նյութատեխնիկական բազայի համալրում նախադպրոցական ուսումնական հաստատություններում	Նյութատեխնիկական բազան վերազինելու նպատակով անհրաժեշտ է գնահատել նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերը, շինությունները, հողամասերը, հաղորդակցության միջոցները, ուսումնամեթոդական և ծրագրային նյութերը, զարգացնող խաղային միջոցները, դիդակտիկ պարագաները, սարքավորումները (և այլն):	1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից իրականացվել է մանկապարտեզների շենքերի գնահատման գործընթաց, ըստ անհրաժեշտության հիմնանորոգման ծրագրերում ներառելու նպատակով: 2. Կրթադաստիարակչական գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով 2023 թվականին բոլոր նախադպրոցական ուսումնական հաստատություններին հատկացվել են զարգացնող սեղանային խաղեր, ուսուցողական պաստառներ, Երևանի տեսարժան վայրերով ուսուցողական գրքեր:	Աշխատակազմի հանրակրթության, շինարարության և բարեկարգման վարչություններ  1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ	
58.	Մարդկային ռեսուրսների կառավարում	Նախադպրոցական կրթության ոլորտում ընդգրկված անձնակազմերի մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների, հմտությունների կատարելագործում վերապատրաստման և փորձի փոխանակման դասընթացների միջոցով, ինչպես նաև ծնողավարության դասընթացներ և ծնողների իրազեկման միջոցառումներ:	1. ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թվականի հուլիսի 25-ի հ. 27-Ն հրամանով հաստատված «Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների և մանկավարժական աշխատողների վերապատրաստող կազմակերպության ընտրության և վերապատրաստման կարգի» համաձայն թվով 299 մանկավարժական աշխատող անցել է պարտադիր վերապատրաստում: 2. Երևանի մանկապարտեզների տնօրենների համար կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց՝ «Աղետների ռիսկերի նվազեցման, արտակարգ իրավիճակներում անձնակազմի և երեխաների	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, ԿԶՆԱԿ հիմնադրամ, «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ)	

			<p>պաշտպանության արագ և արդյունավետ կազմակերպման» թեմայով:</p> <p>3. Երևանի հհ.36,58,97,104,139,5,26 մանկապարտեզներում ներդրվել է «Անվտանգ երթևեկության կանոններ» թեմայով փորձնական ծրագիրը, որի շրջանակում վերապատրաստվել են մանկավարժական աշխատողները:</p> <p>4. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի թիվ 16-Ն հրամանի պահանջի համապատասխան Երևանի հհ. 5, 107, 119 մսուր-մանկապարտեզների դաստիարակները ստացել են տարակարգ:</p> <p>5. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13.05.2021թ. հ.744-Ն «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին» որոշման համաձայն՝ 2022-2023 ուստարում նոր չափորոշչային պահանջը փորձարկվել է թվով 10 հաստատություններում, 2023-2024 ուստարում՝ թվով 15 նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Նշված հաստատությունների մանկավարժներն անցել են համապատասխան վերապատրաստում:</p>	1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ	
59.	Մանկապարտեզների գույքի ձեռքբերում	<p>1. Գույք՝ (երեխաների և աշխատակազմի համար)՝ երկհարկանի մահճակալ, եռահարկ մահճակալ, գրապահարան, աշխատանքային աթոռ, մանկական սեղան, մանկական աթոռ և այլն:</p> <p>2. Խոհանոցային գույք, սպասք (սալօջախ, սննդի մշակման սեղաններ՝ տարբերակված, հացի պահպանման համար նախատեսված պահարան, ափսեներ, բաժակներ և այլն):</p>	<p>2022-2023թթ. ընթացքում հիմնանորոգված և վերակառուցված, ինչպես նաև ներկայում հիմնանորոգվող նախադպրոցական ուսումնական հաստատություններին Երևանի քաղաքապետի 28.04.23թ. հ.644-Ա կարգադրությամբ հատկացվել է կոշտ գույք:</p>	<p>Աշխատակազմի հանրակրթության վարչություն</p> <p>1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ</p>	
60.	Մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում	Թվով 23 մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում.	<p>2023թ. հիմնանորոգումն ավարտված մանկապարտեզներն են՝ հհ. 15, 47, 48, 50, 81,63,71,143,109,110, որից՝ թվով 6-ը Երեվանի էներգաարդյունավետության հիմնա-</p>	<p>Աշխատակազմի հանրակրթության, շինարարության և</p>	

		<p>1. Երևանի միջոցներով հիմնանորոգման ծրագրում ընդգրկված են թվով 11 մանկապարտեզներ:</p> <p>2. Երևանի էներգաարդյունավետության հիմնանորոգման ծրագրում ընդգրկված են թվով 12 մանկապարտեզներ:</p>	<p>նորոգման ծրագրով, 4-ը՝ Երևանի քաղաքապետարանի ծրագրով: Ներկայումս հիմնանորոգման աշխատանքներ են ընթանում հհ. 1, 22, 23, 41, 44, 61, 74, 77, 95, 105, 135, 137, 138, 140, 147, 161 մանկապարտեզներում:</p>	<p>բարեկարգման վարչություններ</p> <p>1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ</p>	
61.	Նախադպրոցական կրթության մատչելիություն	<p>Նախադպրոցական անվճար կրթություն, շենքերի հիմնանորոգում, գույքի նորացում, հերթագրված երեխաների ընդունելության հիմնախնդրի կարգավորում, մանկապարտեզներում համընդհանուր ներառման գործընթացի իրականացում:</p>	<p>Նախադպրոցական կրթության մատչելիությունն ապահովելու նպատակով շարունակվում է մանկապարտեզների շենքերի հիմնանորոգման գործընթացը: Հաստատություններում երեխաների ընդունելությունն իրականացնելու նպատակով 2023 թվականին մանկապարտեզներում ձևավորվել են 20 նոր խմբեր, հիմնանորոգված մանկապարտեզները հարմարեցվում են կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին /կառուցվում են թեքահարթակներ, իրականացվում է սանհանգույցների հարմարեցում/։ Թվով 84 մանկապարտեզներում ձևավորվել են երկարօրյա խմբեր, ուր հաճախում է շուրջ 980 սան:</p>	<p>Աշխատակազմի հանրակրթության վարչություն</p> <p>1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ</p>	
62.	Ներառական կրթության արդյունավետության խթանում	<p>1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով մանկապարտեզների մանկավարժական համակազմերի համալրում համապատասխան մասնագետներով:</p> <p>2. Համընդհանուր ներառման ծրագրի շրջանակում մասնագետների վերապատրաստում՝ համագործակցելով շահագրգիռ հասարակական կազմակերպությունների հետ:</p> <p>3. Փորձի փոխանակում, սեմինարներ՝ փորձագետների ներգրավմամբ:</p>	<p>1. Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով մանկապարտեզների մանկավարժական համակազմերը ըստ անհարժեշտության համալրվում են համապատասխան մասնագետներով:</p> <p>2. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023 թվականի տարեկան ծրագրի 2.1 կետի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց որակյալ ներառական կրթության ապահովման շրջանակում, իրականացվել է Երևանի ենթակայության նախադպրոցական</p>	<p>Աշխատակազմի հանրակրթության վարչություն, ԿԶՆԱԿ հիմնադրամ, ՏՄԱԿ-ներ</p> <p>1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ</p>	

			<p>ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների 20%-ի պարտադիր վերապատրաստման գործընթացը, որի մաս է կազմում «Համընդհանուր ներառում» բաժինը:</p> <p>3. Իրականացվել է վերապատրաստում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման, ռազմավարության, մեթոդաբանության հարցերի շուրջ:</p> <p>4. Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթադաստիարակչական գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից նախադպրոցական ուսումնական հաստատություններում պարբերաբար իրականացվում են վերապատրաստումներ:</p>		
63.	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ընթացիկ գործունեության մշտադիտարկում	<p>Հսկողություն՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների նկատմամբ,</li> <li>2. Աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ, «Մանկապարտեզ» կառավարման համակարգի կիրառման նկատմամբ:</li> </ol>	<p>Մանկապարտեզներում երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների, աշխատակիցների աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ վերահսկողության շրջանակում իրականացվել են այցեր, քննարկումներ, տրամադրվել խորհրդատվություն: «Մանկապարտեզ» կառավարման համակարգի կիրառման նկատմամբ հսկողությունը կրել է ամենօրյա և շարունակական բնույթ:</p>	<p>Աշխատակազմի հանրակրթության վարչություն, Երևան քաղաքի 12 վարչական շրջանների համապատասխան բաժիններ</p> <p>1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ</p>	
<b>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ</b>					
64.	Մայրաքաղաքի գործընկերային հարաբերությունների ընդլայնում	<p>Համագործակցության համաձայնագրերի կնքում, թարմացում, առկա համաձայնագրերի շրջանակում կապերի ակտիվացում, Երևանը՝ իբրև մշակութային խոշոր կենտրոնի ներկայացում: Ծրագրի նպատակն է բարձրացնել Երևանի հանրաճանաչելիու-</p>	<p>1) Ապրիլի 8-14-ը Երևան էր ժամանել Լիոնի քաղաքապետի գլխավորած պաշտոնական պատվիրակությունը: Քննարկվել են համագործակցության հետ կապված հարցեր, ինչպես նաև հստակեցվել են</p>	<p>Արտաքին կապերի վարչություն</p>	

<p>թյունը, ներգրավել օտարերկրյա ներդրումներ, ինչպես նաև աջակցել գրոսաշրջության զարգացմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է.</p> <ol style="list-style-type: none"> <li>1) ստորագրել համագործակցության համաձայնագրեր Եգիպտոսի Արաբական Հանրապետության մայրաքաղաք Կահիրեի, ՌԴ Նիժնի Նովգորոդ, ՉԺՀ Սիչուան քաղաքների հետ,</li> <li>2) ակտիվացնել համագործակցության կապերն արդեն իսկ կնքված համագործակցության համաձայնագրերի շրջանակներում (Փարիզ, Լոս Անջելես, Վենետիկ, Ռիգա, Սոֆիա, Աթենք, Բեյրութ, Լիոն, Մարսել, Քեմբրիջ (ԱՄՆ) և այլն),</li> <li>3) թարմացնել համագործակցության համաձայնագրերը Մոնտենեգրոյի մայրաքաղաք Պոդգորիցայի, Բելառուսի մայրաքաղաք Մինսկի, Իտալիայի Տոսկանա և Կանադայի Մոնրեալ քաղաքների հետ,</li> <li>4) Երևանի քաղաքապետարանի և Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև կնքված համագործակցության ծրագրի շրջանակներում նախատեսվում է անցկացնել Երևանի օրերը Սանկտ Պետերբուրգում, աջակցել ներդրումային միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովմանը, գործընկեր քաղաքներում ներդրումային շնորհանդեսների կազմակերպմանը,</li> <li>5) ակտիվացնել Երևանի տնտեսապես զարգացած գործընկեր քաղաքներից Երևան գործարար այցելությունների կազմակերպման աշխատանքները, ակտիվացնել կապերը Երևանի քաղաքապետարանի և գործընկեր</li> </ol>	<p>հաջորդ եռամյա համաձայնագրի ոլորտները:</p> <ol style="list-style-type: none"> <li>2) Մարտի 26-ից 29-ը Երևան է այցելել Քիշնևի քաղաքապետի գլխավորած պաշտոնական պատվիրակությունը: Այցի շրջանակներում քննարկվել են երկկողմ համագործակցության հետ կապված հարցեր:</li> <li>3) Մայիսի 29-ից հունիսի 1-ը Երևան է այցելել Ռոստով քաղաքապետի գլխավորած պաշտոնական պատվիրակությունը: Այցի շրջանակներում քննարկվել են երկկողմ համագործակցությանն առնչվող կոնկրետ հարցեր:</li> </ol> <p>Նոյեմբերի 1-ից 3-ը Երևան է այցելել ՉԺՀ Ցինդաո քաղաքի պաշտոնական պատվիրակությունը: Այցի շրջանակներում տեղի է ունեցել հանդիպում Երևանի քաղաքապետի հետ, քննարկվել է երկկողմ համագործակցության հարցեր, փորձի փոխանակում, համատեղ ծրագրերի իրականացում:</p>		
--	---	--	--



		<p>քաղաքների զբոսաշրջության պատասխանատուների միջև,</p> <p>6) իրականացնել եղբայրության պուրակներ և զբոսայգիներ հիմնելու ծրագրեր,</p> <p>7) խրախուսել և ընդլայնել վարչական շրջանների և գործընկեր քաղաքների, ինչպես նաև խոշոր քաղաքների վարչական միավորների միջև համագործակցությունը,</p> <p>8) տրամադրել տեղեկատվություն Երևանի գործընկեր քաղաքներին Երևանում անցկացվելիք միջոցառումների և փառատոների վերաբերյալ:</p>			
65.	<p>Միջազգային համագործակցությունների շրջանակներում համատեղ ծրագրերի մշակում և միջոցառումների իրականացում</p>	<p>Միջազգային համագործակցությունների շրջանակներում ծրագրերի իրականացում, մասնավորապես, ծրագրի շրջանակներում նախատեսվում է.</p> <p>1) ակտիվացնել աշխատանքները սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական հաստատությունների հետ հստակ ծրագրերի ներկայացման առումով, համագործակցել միջազգային և տարածաշրջանային կառույցների շրջանակներում,</p> <p>2) ցուցաբերել ակտիվ մասնակցություն AIMF-ի ամենամյա զագաթնաժողովներին, կազմակերպել փոխայցելություններ ֆրանսիական քույր և գործընկեր քաղաքների հետ և մշակել համատեղ ծրագրեր,</p> <p>3) ցուցաբերել ակտիվ մասնակցություն «Եվրոսիթիս» ասոցիացիայի աշխատանքներին, ինչպես նաև ապահովել հնարավոր ներգրավում Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրերին,</p> <p>4) ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գործող միջազգային և տարածաշրջանային կառույցների հետ բանակցությունների վարում՝ տեխնիկական օժանդակության տրամադրման վերաբերյալ,</p>	<p>Երևանի քաղաքապետարանի, Ֆրանկոֆոն քաղաքապետների ասոցիացիայի, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և Գրենոբլի Հողի ճարտարապետության ուսումնասիրության կենտրոնի միջև պայմանագրով կնքված Էրեբունի հնավայրի պահպանման, արժևորման, զբոսաշրջության խթանման և տուրիստական ծառայությունների ընդլայնման ծրագրի շրջանակներում սեպտեմբերի 12-ին Երևան է ժամանել Գրենոբլի Հողի ճարտարապետության ուսումնասիրության կենտրոնից Մաջիդ Միրբաբան:</p>	Արտաքին կապերի վարչություն	

		<p>5) իրականացնել Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի հետ համատեղ ծրագրեր,</p> <p>6) իրականացնել Հորդանանի Հաշիմյան Թագավորության մայրաքաղաք Ամմանի հետ համատեղ ծրագրեր,</p> <p>7) իրականացնել ՀՀ մարզերի հետ համատեղ ծրագրեր:</p>			
66.	<p>Համագործակցությունների շրջանակում քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատակիցների կարողությունների բարձրացում</p>	<p>Քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների աշխատակիցների կարողությունների բարձրացում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների աշխատակիցների վերապատրաստումների կազմակերպում և փորձագիտական աջակցություն, անհրաժեշտության դեպքում նաև օտար լեզուների դասընթացների կազմակերպում: Ծրագրի շրջանակներում կիրականացվեն նաև փորձի փոխանակման ծրագրեր քույր և գործընկեր քաղաքների հետ համագործակցությունների շրջանակում, որը կներառի.</p> <p>1) Երևանի և Թեհրանի քաղաքապետարանների ներկայացուցիչների փոխալրություններ,</p> <p>2) Երևանի քաղաքապետարանի և Լիոնի, Լիոնի Մետրոպոլի միջև համագործակցություն,</p> <p>3) Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի և Երևանի քաղաքապետարանի միջև համագործակցության շրջանակներում մասնագիտական սեմինարների և փորձի փոխանակման ծրագրի շարունակական</p>	<p>1) Երևանի և Իլ դը Ֆրանսի համագործակցության շրջանակներում ապրիլի 16-ից 22-ը փորձի փոխանակման նպատակով Երևանի քաղաքապետարանի պատվիրակությունը մեկնել է Փարիզ: Այցի ընթացքում պատվիրակությունը մասնակցել է թափոնների կառավարման /հավաքում, վերամշակում, ֆինանսավորում/ սեմինարին, այնուհետև տեղում ուսումնասիրություններ կատարելու նպատակով այցելել է թափոնների տեսակավորման, աղբահանության վերամշակման կենտրոններ, կոմպոստացման և այրման գործարան, թափոնների հավաքման ծառայություն և նրանց շարժական աղբավայրեր, ինչպես նաև թափոնների կառավարման վայր:</p> <p>2) Հունվարի 17-ից 19-ը Երևանի քաղաքապետի գլխավորած պաշտոնական պատվիրակությունը մեկնել է Թեհրան: Այցի շրջանակներում ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր Երևանի և Թեհրանի միջև քույր քաղաքների հարաբերություններ հաստատելու մասին:</p> <p>3) Մարտի 21-ից 25-ը քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանի գլխավորած պատվիրակությունը մեկնել է Էստոնիայի Հանրապետության Տարտու քաղաք:</p> <p>4) Հունիսի 13-ից 18-ը Լևոն Հովհաննիսյանի գլխավորած պատվիրակությունը մեկնել է ՉԺՀ Ցինդաո քաղաք: Այցի ընթացքում</p>	Արտաքին կապերի վարչություն	

		<p>իրականացում ֆրանսիական առաջատար մասնագետների մասնակցությամբ:</p>	<p>քննարկվել է երկկողմ համագործակցության հարցեր, ինչպես նաև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր:</p> <p>5) Հուլիսի 3-ից 5-ը Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանի գլխավորած պատվիրակությունը մեկնել է Իտալիայի Նեապոլ քաղաք բիզնես ֆորումին մասնակցելու, ինչպես նաև քննարկվել է Երևան-Նեապոլ համագործակցություն հաստատելու հետ կապված հարցեր:</p> <p>6) Հուլիսի 14-ից 17-ը Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանի գլխավորած պատվիրակությունը մեկնել է Մոլդովայի հանրապետության մայրաքաղաք Քիշնև երկկողմ համագործակցության հարցեր քննարկելու նպատակով:</p>		
--	--	---	--	--	--

**ՄՇԱԿՈՒՅԹ**

67.	<p>Մշակութային միջոցառումների իրականացում</p>	<p>Երևան քաղաքի բնակչության լայն զանգվածների ընդգրկում պետական, ազգային և այլ միջոցառումներին, ազգային մշակութի և արվեստի հաղորդակցվելու մատչելիության ապահովում, մշակութային միջավայրի պահպանում և զարգացում, հայ և համաշխարհային հոգևոր-մշակութային արժեքների վրա խարսխված մշակութային արտադրանքի ստեղծման և ծառայությունների մատուցման գործընթացի խթանում, հանրության մշակութային պահանջներին համապատասխան մշակութային միջոցառումների մշակում և իրականացում:</p>	<p>ԵՔ-ՄԱԾՁԲ-23/43</p> <p>Երևանի Շ. Ազնավուրի անվան հրապարակի տարածքում 2023 թվականի փետրվարի 19-ին գիրք նվիրելու օրվան նվիրված մշակութային միջոցառում, որի շրջանակում կայացել է համերգային ծրագիր «Կամի», «Բայ դե վեյ», «Կաթիլ» և «Նեմրա» բենդերի մասնակցությամբ, ինչպես նաև գործել են գրքի զեղչով վաճառքի տաղավարներ:</p> <p>ՀՀ Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ձեռք են բերվել Գիրք նվիրելու օրվան նվիրված մշակութային միջոցառումների իրականացման ծառայության մատուցում:</p> <p>ԵՔ-ՄԱԾՁԲ-23/51-1</p> <p>«Բլրեցի Եփփե» ներկայացման ցուցադրություն,</p>	<p>Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ 17.02.2023թ.</p> <p>«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ</p>	
-----	---	---	--	---	--

			<p>«Ատամնաբույժն...նորե՞ն» ներկայացման ցուցադրություն: ԵՔ-ՄԱԾՁԲ-23/51-2 Թ. Ալթունյանի անվան երգի-պարի անսամբլի համերգային ծրագրի իրականացում ԵՔ-ՄԱԾՁԲ-23/51-3 «Հիշիր վաղվա օրդ» ներկայացման ցուցադրություն, «Սիդ» ներկայացման ցուցադրություն, «Սիրելի Ելենա Սերգեննա» ներկայացման ցուցադրություն, «Մալիֆիսենտան» ներկայացման ցուցադրություն, «Կատուն շիկացած տանիքին» ներկայացման ցուցադրություն:  ԵՔ-ՄԱԾՁԲ-23/51-4 «Սեանս հոգեթերապևտի մոտ» ներկայացման ցուցադրություն, «Կալիֆորնիական սյուիտ» ներկայացման ցուցադրություն, «Գնա մեռի, արի սիրեմ» ներկայացման ցուցադրություն, «Հրավիրված եք ծնունդի» ներկայացման ցուցադրություն, «Մորզանի խնամին» ներկայացման ցուցադրություն:  ԵՔ-ՄԱԾՁԲ-23/51-5 «Մեծապատիվ մուրացկանները» ներկայացման ցուցադրություն, «Հարսնացու հյուսիսից» ներկայացման ցուցադրություն, «Դեկամերոն» ներկայացման ցուցադրություն:  ԵՔ-ՄԱԾՁԲ-23/51-6</p>	<p>03.03.2023թ.  Ժողովրդական երգի և պարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ 03.03.2023թ.  Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ 03.03.2023թ.  «Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ 03.03.2023թ. Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ 03.03.2023թ. Կ.Ս.Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ 03.03.2023թ. 7. Երևանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն» ՀՈԱԿ, 03.03.2023թ.</p>	
--	--	--	---	--	--

	<p>«Խանումա» ներկայացման ցուցադրություն, «Սկապենի արկածները» ներկայացման ցուցադրություն:</p> <p>ԵՔ-ՄԱԾՁԲ-23/51-7 «Ախ Աննա, Աննա կամ Կրքոտ կիրակի» ներկայացման ցուցադրություն, «Տիկնայք և Պարոնայք» ներկայացման ցուցադրություն, «Ֆիգարոյի ամուսնությունը» ներկայացման ցուցադրություն:</p> <p>ԵՔ-ՄԱԾՁԲ-23/51-8 «... և նորից Գարուն» ներկայացման ցուցադրություն, «Փափկիկը» ներկայացման ցուցադրություն, «Խատուտիկի գինի» ներկայացման ցուցադրություն, «Մինուս երկու» ներկայացման ցուցադրություն:</p> <p>ԵՔ-ՄԱԾՁԲ-23/51-9 «Պիաֆ Սիմֆոնիկ» խորագրով համերգային ծրագրի իրականացում</p> <p>ԵՔ-ՄԱԾՁԲ-23/51-10, «Հինգ պատմություն սիրո մասին» ներկայացման ցուցադրություն, «Կուլիսներում կամ թատրոնի անատոմիա» ներկայացման ցուցադրություն:</p> <p>ԵՔ-ՄԱԾՁԲ-23/51-11, «Ռոմեո և Ջուլիետ» բալետային ներկայացման ցուցադրություն,</p>	<p>Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն» ՊՈԱԿ 03.03.2023թ. Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ 03.03.2023թ. Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ 03.03.2023թ. Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ 03.03.2023թ. 12.«Էջի Պրինտ Իքս» ՍՊԸ 03.03.2023թ.</p>	
--	--	---	--

			<p>«Սպարտակ» բալետային ներկայացման ցուցադրություն:</p> <p>ԵՔ-ՄԱԱՇՁԲ-23/1  «Կանանց տոնի» շրջանակում իրականացվող մշակութային միջոցառումների հանրահռչակման և միջոցառումների հրավիրատուներ շահառուներին տրամադրելու նպատակով 22000-ական հրավիրատուների և ծրարների դիզայն և տպագրություն:</p> <p>«ՀՀ գնումների մասին» օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ձեռք են բերվել «Կանանց տոնին» նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցում, որի շրջանակում աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության և հանրակրթության վարչությունների հետ համագործակցությամբ, Երևանի տարբեր մշակութային կազմակերպություններում իրականացվեցին տոնական միջոցառումներ, որոնց ներկա է գտնվել շուրջ 22000 հանդիսատես:</p> <p>ՀՀ Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ձեռք են բերվել Մայրության և գեղեցկության տոնին նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ:</p> <p>ԵՔ-ՄԱԾՁԲ-23/109  Մայրության և գեղեցկության տոնին նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում:</p>	<p>«Բրիդջ» ՍՊԸ  07.04.2023թ.</p>	
--	--	--	---	--------------------------------------	--

			<p>ՀՀ Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ձեռք են բերվել Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ: ԵՔ-ՄԱԾՁԲ-23/126 Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում:</p> <p>ՀՀ Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ձեռք են բերվել «Ջազի միջազգային օրվան» նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ: ԵՔ-ՄԱԾՁԲ-23/41 Ջազի միջազգային օրվան նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում:</p> <p>ՀՀ Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ձեռք են բերվել Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների մրցույթ-փառատոն մշակութային միջոցառումների շրջանակում մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ: ԵՔ-ՄԱԾՁԲ-23/140 Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների մրցույթ-փառատոն մշակութային միջոցառումների շրջանակում մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում:</p>	<p>«Թի Էն Սաունդ» ՍՊԸ 21.04.2023թ.</p> <p>«Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ 20.02.2023թ.</p> <p>«Ա. Սպենդիարյանի անվան</p>	
--	--	--	---	---	--

			<p>ՀՀ Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ձեռք են բերվել «Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա ստուգատես-փառատոն» մշակութային միջոցառումների շրջանակում մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ: ԵՔ-ՄԱԾՁԲ-23/157</p> <p>«Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա ստուգատես-փառատոն» միջոցառման շրջանակում մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում:</p> <p>ՀՀ Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ձեռք են բերվել «Երեխաների իրավունքների պաշտպանության օր» մշակութային միջոցառումների շրջանակում մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ: ԵՔ-ՄԱԾՁԲ-23/156</p> <p>«Երեխաների իրավունքների պաշտպանության օր» միջոցառման շրջանակում մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում:</p> <p>ՀՀ Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ձեռք են բերվել Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ (բալետային ցուցադրություն): ԵՔ-ՄԱԾՁԲ-23/162</p>	<p>ԵՄԴ» ՀՈԱԿ 10.05.2023թ.</p> <p>«Ա. Սպենդիարյանի անվան ԵՄԴ» ՀՈԱԿ 06.06.2023թ.</p> <p>«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ 01.06.2023թ.</p>	
--	--	--	--	---	--



			<p>Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում (բեմի, տեխնիկական սպասարկման և ապահովման ծառայություններ): ԵՔ-ՄԱԾՁԲ-23/163</p> <p>Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում (բալետային ստեղծագործությունների ցուցադրությունների կազմակերպում):</p> <p>ՀՀ Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ձեռք են բերվել «Սիմֆոնիկ Երևան» խորագրով դասական երաժշտության համերգային ծրագիր մշակութային միջոցառման շրջանակում ծառայություններ: ԵՔ-ՄԱԾՁԲ-23/197</p> <p>«Սիմֆոնիկ Երևան» խորագրով դասական երաժշտության համերգային ծրագիր մշակութային միջոցառման շրջանակում ծառայություններ (տեխնիկական ապահովում):</p> <p>ԵՔ-ՄԱԾՁԲ-23/196</p> <p>«Սիմֆոնիկ Երևան» խորագրով դասական երաժշտության համերգային ծրագիր մշակութային միջոցառման շրջանակում ծառայություններ (համերգային ծրագիր):</p> <p>ՀՀ Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ձեռք են բերվել «Օպերա բաց երկնքի տակ» ծրագրի շրջանակում մշակութային</p>	<p>«Բրիդջ» ՍՊԸ 06.06.2023թ.</p> <p>«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ 06.06.2023թ.</p> <p>«Բրիդջ» ՍՊԸ 14.07.2023թ.</p> <p>Հայաստանի պետական սիմֆոնիկ</p>	
--	--	--	--	--	--

			<p>միջոցառումների կազմակերպման ծառայություններ: ԵՔ-ՄԱԾՁԲ-23/230 «Օպերա բաց երկնքի տակ» ծրագրի շրջանակում մշակութային միջոցառումների իրականացման ծառայությունների ձեռքբերում (տեխնիկական ապահովում):</p> <p>ԵՔ-ՄԱԾՁԲ-23/231 «Օպերա բաց երկնքի տակ» ծրագրի շրջանակում մշակութային միջոցառումների իրականացման ծառայությունների ձեռքբերում (Օպերային համերգային ծրագրեր):</p> <p>Իրականացվել է ստեղծարարական ծրագրերի դրամաշնորհային մրցույթ Հայ մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին ընդառաջ, որի շրջանակում կնքվել են պայմանագրեր:</p>	<p>նվազախումբ» ՊՈԱԿ 14.07.2023թ.</p> <p>«Բրիդջ» ՍՊԸ 05.09.2023թ.</p> <p>«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ 05.09.2023թ.</p> <p>«ՄՎԴ»-5 31.07.2023թ. «Լիլիթ Եղիազարյան» ԱԶ «ՄՎԴ»-7 31.07.2023թ. «Մաֆ Փրոդաքշն ՍՊԸ</p>	
--	--	--	---	--	--

			<p>Իրականացվել է «Թատերական Երևան» խորագիրը կրող դրամաշնորհի բաց մրցույթ, որի շրջանակում կնքվել են պայմանագրեր:</p>	<p>«ՄՎԴ»-8 31.07.2023թ. «Արամ Սահակյանց» ԱԶ «ՄՎԴ»-9 31.07.2023թ. «Էյար Թրիփ» ՓԲԸ «ՄՎԴ»-10 31.07.2023թ. «Նարեկ Սահակյան» ԱԶ «ՄՎԴ»-11 01.08.2023թ. «Լիլիթ Եղիազարյան» ԱԶ «ՄՎԴ»-14 08.08.2023թ. «Նարեկ Սահակյան» ԱԶ «ՄՎԴ»-16 10.08.2023թ. «Շուշան Բարսեղյան» ԱԶ «ՄՎՆ»-3 31.07.2023թ. «Սարեր» մշակութային ՀԿ «ՄՎՆ»-4 07.08.2023թ. «Տերյան մշակութային կենտրոն» ՀԿ «ՄՎԴ»-6</p>	
--	--	--	---	---	--

				<p>27.07.2023թ. «Երևանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն» ՀՈԱԿ «ՄՎԴ»-12</p> <p>03.08.2023թ. «Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն» ՊՈԱԿ «ՄՎԴ»-18</p> <p>18.08.2023թ. «Վանաձորի Հովհաննես Աբեյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ «ՄՎԴ»-19</p> <p>23.08.2023թ. «Անուշ Խերունց» ԱԶ «ՄՎԴ»-20</p> <p>23.08.2023թ. «Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» ՀՈԱԿ «ՄՎՆ»-1</p> <p>24.07.2023թ. «Երևանի Հ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ</p>	
--	--	--	--	---	--

			<p>Իրականացվել է «Երևանը կանանց համար» խորագիրը կրող դրամաշնորհի բաց մրցույթ, որի շրջանակում կնքվել են պայմանագրեր:</p> <p>ՀՀ Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ձեռք են բերվել Երևանի քաղաքապետի երդմնակալության արարողության շրջանակում ծառայությունների մատուցում:</p> <p>ԵՔ-ՀՄԱԾՁԲ-23/3 Երևանի քաղաքապետի երդմնակալության արարողության շրջանակում ձեռք են բերվել մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ: ՀՀ Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ձեռք են բերվել</p>	<p>«ՄՎՆ»-2 24.07.2023թ. «Դուփապարի հայկական ֆեդերացիա» մշակութային ՀԿ «ՄՎՆ»-5 09.08.2023թ. «Թեք տեղ» մշակութային ՀԿ «ՄՎՆ»-9 03.10.2023թ. «Բարեկամ» մշակույթի, արվեստի և սպորտի զարգացման կենտրոն» ՀԿ</p> <p>«ՄՎԴ»-30 ՖԱ Արփի Ոսկանյան «ՄՎԴ»-26 «Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ «ՄՎՆ»-12 «Երիտասարդական Միքս» ՀԿ «ՄՎԴ»-29 ՖԱ Արմենուհի Կարապետյան «ՄՎԴ»-31 ՖԱ Մարիա Գալստյան</p>	
--	--	--	--	--	--

			<p>«Արտիստը դպրոցին» ծրագրի շրջանակում մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ: ԵՔ-ՄԱԾՁԲ-23/272</p> <p>«Արտիստը դպրոցին» ծրագրի շրջանակում մշակութային միջոցառումների իրականացման ծառայություններ /վարպետության դասեր և համերգ/:</p> <p>ԵՔ-ՄԱԾՁԲ-23/270</p> <p>«Արտիստը դպրոցին» ծրագրի շրջանակում մշակութային միջոցառումների իրականացման ծառայություններ (հանրահոշակման ծառայություններ):</p> <p>ԵՔ-ՄԱԾՁԲ-23/271</p> <p>«Արտիստը դպրոցին» ծրագրի շրջանակում մշակութային միջոցառումների իրականացման ծառայություններ /դահլիճի վարձակալություն/:</p> <p>ՀՀ Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ձեռք են բերվել Ամանորին և Սուրբծննդյան տոներին նվիրված մշակութային միջոցառումների անցկացման շրջանակում մշակութային միջոցառման կազմակերպում Երևանի քաղաքապետարանում: ԵՔ-ՄԱԾՁԲ-23/295</p> <p>Ամանորին և Սուրբծննդյան տոներին նվիրված մշակութային միջոցառումների անցկացման շրջանակում մշակութային</p>	<p>«ՄՎԴ»-27 ՖԱ Նունե Թումանյան «ՄՎԴ»-28 ՖԱ Արմենուհի Հովսեփյան «ՄՎԴ»-25 «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ</p> <p>«Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ 09.10.2023թ.</p> <p>«Հայկ Մելիքյան» Ա/Ձ 08.12.2023թ.</p> <p>«Թայմ» ՍՊԸ 07.12.2023թ.</p> <p>«Կամերային երաժշտության</p>	
--	--	--	---	--	--

		<p>միջոցառման կազմակերպում Երևանի քաղաքապետարանում:</p> <p>ՀՀ Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ձեռք են բերվել Ամանորին և Սուրբծննդյան տոներին նվիրված մշակութային միջոցառումների անցկացման շրջանակում մշակութային միջոցառման կազմակերպման ծառայություններ: ԵՔ-ՄԱԾՁԲ-24/35 Ամանորի և Սուրբծննդյան տոնակատարությունների շրջանակում մշակութային միջոցառումների իրականացման ծառայություններ (Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում մշակութային միջոցառման կազմակերպում):</p> <p>ԵՔ-ՄԱԾՁԲ-24/34 Ամանորին և Սուրբծննդյան տոներին նվիրված մշակութային միջոցառումների անցկացման շրջանակում Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում մշակութային միջոցառման կազմակերպման ծառայություններ («Մարդուկ-Ջարդուկ» ներկայացման ցուցադրություն, («Մուկ» օպերայի ցուցադրություն):</p> <p>ԵՔ-ՄԱԾՁԲ-24/32 Ամանորի և Սուրբծննդյան տոնակատարությունների շրջանակում մշակութային միջոցառումների իրականացման ծառայություններ (Հ.Պարոնյանի անվան երաժշտական</p>	<p>ազգային կենտրոն» ՊՈԱԿ 06.12.2023թ.</p> <p>«Վահագն Հայրապետյան» ԱԶ 27.12.2023թ.</p> <p>«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ</p>	
--	--	--	---	--

			<p>կոմերիայի պետական թատրոնում մշակութային միջոցառման կազմակերպում):</p> <p>ԵՔ-ՄԱԾՁԲ-24/33 Ամանորին և Սուրբծննդյան տոներին նվիրված մշակութային միջոցառումների անցկացման շրջանակում «Արամ Խաչատրյան» համերգասրահում մշակութային միջոցառման կազմակերպման ծառայություններ («Պետյան և Գայլը» ներկայացման ցուցադրություն):</p> <p>ԵՔ-ՄԱԾՁԲ-24/31 Ամանորին և Սուրբծննդյան տոներին նվիրված մշակութային միջոցառումների անցկացման շրջանակում Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում մշակութային միջոցառման կազմակերպման ծառայություններ («Երկարագույլա Պեպին» ներկայացման ցուցադրություն):</p>	<p>21.12.2023թ.</p> <p>«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ 21.12.2023թ.</p> <p>«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ 28.12.2023թ.</p> <p>«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ 27.12.2023թ.</p> <p>«Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ 27.12.2023թ.</p> <p>«Երևանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն» ՀՈԱԿ 27.12.2023թ.</p>	
68.	Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում	Մշակութային նախնական մասնագիտական կրթության, արտադպրոցական	Երաժշտական և արվեստի դպրոցներում շարունակվել են երեխաների մշակութային	Երևանի ենթակայության	



	<p>արտադարձական դաստիարակություն</p>	<p>գեղագիտական դաստիարակության իրականացում, ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում հետազոտման նախապատրաստում, մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի վճարովի ուսուցման իրականացում, բնակչության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար արվեստի զանազան ճյուղերի, մշակույթի և արհեստների ուսուցողական ծրագրերի կազմակերպում, երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացում, օժտված և տաղանդավոր երեխաների և պատանիների բացահայտում, ապագա կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորում:</p>	<p>նախնական մասնագիտական կրթության, արտադարձական գեղագիտական դաստիարակության, երաժշտարվեստի և արվեստների ուսուցման իրականացումը, որոնք եզրափակվել են համերգներով: Դպրոցների աշակերտները մասնակցել են մրցույթների և ցուցահանդեսների՝ շահելով մրցանակներ և դիպլոմներ: Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցում իրականացվել են մի շարք բաց դասեր, համերգներ, այդ թվում՝ Հայ հոգևոր երաժշտության համերգ, «Սակավ կատարվող ստեղծագործությունների համերգ», երեխաների իրավունքների պաշտպանության օրվան նվիրված համերգ: Համերգների շարքն ամփոփվել է տարեկան հաշվետու համերգով: Ա.Սպենդիարյանի անվան երաժշտական մասնագիտական դպրոցի տարբեր բաժիններում կազմակերպվել է «Բացահայտում» խորագրով մրցույթփառատոն, որի արդյունքներն ամփոփվել են, տեղի է ունեցել համերգ և մրցանակների բաշխում: Կանանց տոնին նվիրված համադարձական «Բեմում են միայն տղաները» խորագրով համերգային ծրագիր է իրականացվել: «Ֆրանկոֆոնիա» ծրագրի շրջանակում ջազ-էստրադային բաժնի սաները կազմակերպել են «Ֆրանսիական շանսոն» խորագրով համերգային ծրագիր: Դպրոցի մի շարք սաներ մասնակցել են միջազգային մրցույթների՝ «Արտ Մյուզիք», «Կարլ-Սոֆիա» դաշնակահարների առցանց մրցույթին, Շվեդարիայի Բեռն քաղաքում առցանց կայացած մրցույթին զբաղեցնելով առաջին հորիզոնական, ՌԴ</p>	<p>երաժշտական և արվեստի դպրոցներ 2023թ. հունվար-դեկտեմբեր</p>	
--	--------------------------------------	--	--	---	--

			Սանկտ-Պետերբուրգ քաղաքում կայացած «Ֆորտե Ֆորում» միջազգային մրցույթին:		
69.	Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում և մշակույթի տներում արտադպրոցական դաստիարակություն	Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացում, սովորողների ազատ ժամանցի կազմակերպում, հետաքրքրությունների և նախասիրությունների զարգացման համար պայմաններ ստեղծում, մտավոր-հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացում, հայրենասիրական դաստիարակություն, բնապահպանական և կիրառական այլ ոլորտներում գիտելիքների ձևավորում, ապագա կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորում:	Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոններում իրականացվել են մշակույթի տարբեր բնագավառների գծով ուսուցման դասընթացներ: Կազմակերպվել են միջոցառումներ երեխաների և պատանիների հետաքրքրությունների և նախասիրությունների զարգացման, մտավոր-հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական, բնապահպանական և կիրառական այլ ոլորտներում գիտելիքների ձևավորման նպատակով, ինչպես նաև մի շարք թեմատիկ միջոցառումներ:	Երևանի ենթակայության մանկապատանեկան ստեղծագործության կենտրոններ 2023թ. հունվար-դեկտեմբեր	
70.	Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում	Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացում, երեխաների և մեծահասակների մտավոր-հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացում, հայրենասիրական դաստիարակություն, բնապահպանական և կիրառական այլ ոլորտներում գիտելիքների ձևավորում, ապագա կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորում:	Երևանի մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոնում իրականացվել է կրթադաստիարակչական բնույթի գործունեություն, բնակչության ազատ ժամանցի կազմակերպում, մասնավորապես՝ դպրոցի սաները մասնակցել են Սոչիում կայացած V International kids fashion week ցուցադրությանը: Մանկապատանեկան կենտրոնի «Կոունկ» պարային անսամբլը և «Կովկաս» պարային համույթը մասնակցել են Վրաստանի Քոբուլեթի քաղաքում կայացած միջազգային պարային փառատոնին: «Հայ աստղեր» պարային անսամբլը մասնակցել է Բուլղարիայի Վառնա քաղաքում կայացած Ժողովրդական պարերի միջազգային փառատոնին, որտեղ իրենց տարիքային խմբում զբաղեցրել են 1-ին հորիզոնականը: «Հայ աստղեր» պարային անսամբլն իր մասնակցությունն է ունեցել Կարեն	Երևանի ենթակայության մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոն 2023թ. հունվար-դեկտեմբեր	

			<p>Դեմիդյանի անվան մարզահամերգային համալիրի 40-ամյակին նվիրված լայնամասշտաբ միջոցառմանը:      Ք. Թբիլիսիում կայացած՝ Եվրոպայի գավաթի ճկասուներ զենքաձևի առաջնությանը մասնակցել են Կենտրոնի սուներամարտի ակումբի 3 սան՝ մինչև 14 տարեկանների մրցումներում զբաղեցնելով II և III տեղեր:      Ք. Լյուբլյանայում կայացած՝ Եվրոպայի գավաթի ճկասուներ զենքաձևի առաջնությանը մասնակցել են Կենտրոնի սուներամարտի ակումբի 4 սան՝ զբաղեցնելով II և III տեղեր: «Սանտա Լ» մոդելային դպրոցի սաները մասնակցել են Դուբայում կայացած World fashion week ցուցադրությանը, որտեղ ներկայացված էին հանրահայտ դիզայներների հագուստի նոր հավաքածուներ: Կազմակերպվել է «Ստեղծագործող կանայք հանուն տաղանդավոր երեխաների» տոնավաճառ, որի մասնակիցներն էին ստեղծագործող տիկնիկագործ հայ կանայք: «Կողք կողքի» 4-րդ միջազգային ներառական երաժշտական արտ փառատոնի շրջանակներում Մանկապատանեկան կենտրոնում տեղի ունեցավ սեմինար և վարպետության դաս ներառական կրթության ոլորտի՝ Ռուսաստանից, Գերմանիայից և Ֆրանսիայից ժամանած հեղինակավոր մասնագետների կողմից:</p>		
71.	Արտադպրոցական դաստիարակության հաստատությունների համար գույքի և երաժշտական գործիքների ձեռքբերում	Երաժշտական և արվեստի դպրոցների գործունեության արդյունավետության բարձրացում, անհրաժեշտ գույքով՝ երաժշտական գործիքներով և համապատասխան պարագաներով ապահովում:	Գործընթացի կազմակերպման փոփոխություններով և առաջացած տեխնիկական խնդիրներով պայմանավորված՝ ծրագիրը նախատեսված ժամկետներում չի իրականացվել:		

72.	Արտադարձական դաստիարակության երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում	Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում: Ծրագիրը գործում է 2007 թվականից, որի արդյունքում նշված դպրոցներում բացվել են ազգային նվագարանների նոր դասարաններ՝ խթանելով ազգային գործիքների պահպանումը, զարգացումը և տարածումը, ինչպես նաև ծրագրի արդյունքում կարևորվում է դասական երաժշտական՝ լարային և փողային գործիքների պրոպագանդումը: Ծրագրի շրջանակում ընդգրկված է 276 շահառու:	Ազգային նվագարանների և հայ երաժշտական ավանդույթների պահպանման, տարածման և հանրահռչակման նպատակով երաժշտական և արվեստի դպրոցներում իրականացվել է ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսման վարձավճարների փոխհատուցման ծրագիրը: Ծրագրի շրջանակում ընդգրկվել է 277 շահառու:	Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցներ 2023թ. հունվար-դեկտեմբեր	
73.	Գրադարանային ծառայություններ	Բնակչության գրադարանային-տեղեկատվության սպասարկում, հայ և համաշխարհային գրականության հանրահռչակում:	«Ա. Իսահակյանի անվան ԿԳ» ՀՈԱԿ-ն (այսուհետ՝ ՀՈԱԿ) 2023թ. ունեցել է 262918 այցելու, սպասարկվել են շուրջ 34872 ընթերցողներ, գրքատացքը՝ 461319: ՀՈԱԿ-ը, որը դեռևս 2004թ. միացել է «Հայաստանի գրադարանների ավտոմատացման ցանց» ծրագրին, 2023թ. շարունակել է մուտքագրումները ընդհանուր տեղեկատվական բազա և մուտքագրել 46369 անուն՝ 133981 միավոր գիրք: Մշտապես նորացվում են համաշխարհային տեղեկատվական դաշտում կազմակերպության երկու անհատական WEB էջերը. հասցե՝ 1. <a href="http://www.isahakyanlibrary.am">www.isahakyanlibrary.am</a> 2. <a href="http://www.yerevan.americancorners.am">www.yerevan.americancorners.am</a> , որտեղ տեղեկատվություն է տրված ՀՈԱԿ-ի և Ամերիկյան կենտրոն բաժնի պատմական տարեգրության և կառուցվածքի, ծառայությունների մասին, նաև մշտապես թարմացվում է «Նորություններ» դաշտը՝ 3 լեզվով /հայերեն, անգլերեն, ռուսերեն/:	Երևանի ենթակայության գրադարաններ 2023թ. հունվար-դեկտեմբեր	

			<p>ՀՈԱԿ-ի բոլոր մասնաճյուղերում ավարտվել են էլեկտրոնային &lt;&lt;ELGRAD&gt;&gt; և &lt;&lt;Koha&gt;&gt; ծրագրերով ավտոմատացված գրացուցակների ստեղծման աշխատանքները և բոլոր մասնաճյուղերում ևս կազմակերպվել է ընթերցողների էլեկտրոնային սպասարկումը և գրադարանային գործառույթների ավտոմատացումը: Կազմակերպվել են մասսայական բնույթի միջոցառումներ՝ հանդիպումներ շնորհանդեսներ, դասախոսություններ, ֆիլմերի ցուցադրություններ, ցուցահանդեսներ՝ որպես նոր ընթերցողների ներգրավման և մշակութային, կրթադաստիարակչական քաղաքականության իրականացման կարևորագույն միջոց:</p> <p>ՀՈԱԿ-ի ֆոնդը 2023թ. համալրվել է 7475 օրինակ նոր գրականությամբ:</p>		
74.	Համայնքային գրադարանների ֆոնդերի համալրում	Բնակչության գրադարանային-տեղեկատվական սպասարկման բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացում, հայ և համաշխարհային դասական և ժամանակակից գրականության հանրահռչակում:	<p>Երևանի համայնքային գրադարանները համալրվել են 482 անուն 12632 հատ գրքով: Գրքային ֆոնդը թարմացվել է Երևանյան հինգ հրատարակչությունների արտադրանքներով: Գնումների մասին ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն կազմակերպվել է էլեկտրոնային աճուրդ, որի շրջանակում պայմանագիր է կնքվել հետևյալ հրատարակչությունների հետ:</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ԵԲ-ԷԱՃԱՊՁԲ-23/71-1 (գրքեր)</li> <li>2. ԵԲ-ԷԱՃԱՊՁԲ-23/72-1 (գրքեր)</li> <li>3. ԵԲ-ԷԱՃԱՊՁԲ-23/100-1 (գրքեր)</li> <li>4. ԵԲ-ԷԱՃԱՊՁԲ-23/124-1 (գրքեր)</li> <li>5. ԵԲ-ԷԱՃԱՊՁԲ-23/111-1 (գրքեր)</li> <li>6. ԵԲ-ԷԱՃԱՊՁԲ-23/106-1 (գրքեր)</li> <li>7. ԵԲ-ԷԱՃԱՊՁԲ-23/108-1 (գրքեր)</li> <li>8. ԵԲ-ԷԱՃԱՊՁԲ-23/119-1 (գրքեր)</li> <li>9. ԵԲ-ԷԱՃԱՊՁԲ-23/122-1 (գրքեր)</li> </ol>	<p>1.«Արմավ հրատարակչություն» ՍՊԸ 13.04.2023թ.</p> <p>2.«Էդիթ Պրինտ» ՍՊԸ 14.04.2023թ.</p> <p>3.«Էդիթ Պրինտ» ՍՊԸ 21.04.2023թ.</p> <p>4.«Էդիթ Պրինտ» ՍՊԸ 22.05.2023թ.</p>	

			<p>10. ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/70-1 (գրքեր)</p> <p>11. ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/107-1 (գրքեր)</p>	<p>5. «Էդիթ Պրինտ» ՍՊԸ 02.05.2023թ. 6. «Անտարես» ՍՊԸ 26.04.2023թ.</p> <p>7. «Անտարես» ՍՊԸ 11.05.2023թ.</p> <p>8. «Անտարես» ՍՊԸ 04.05.2023թ.</p> <p>9. «Անտարես» ՍՊԸ 04.05.2023թ.</p> <p>10. «Վերնատուն Մեդիա» ՍՊԸ 21.04.2023թ.</p> <p>11. «Արևիկ հրատարակչություն» ՓԲԸ 26.04.2023թ.</p>	
75.	Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ	Մշակութային ժառանգության պահպանման և հանրահոշակման գործընթացի խթանում, Երևանի՝ որպես մշակութային հարուստ ժառանգություն և ավանդույթներ ունեցող քաղաքի տեղորոշում և հանրահոշակում, մշակութային զբոսաշրջության խրախուսում, բնակչությանը մշակութային արժեքներին ծանոթացում, ցուցադրությունների կազմակերպում:	Երևանի քաղաքապետարանի ենթակայության թանգարաններում շարունակում է իրականացվել թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանումը, կազմակերպվել են բազմաբովանդակ միջոցառումներ, ցուցահանդեսներ, դասախոսություններ, հանդիպում-քննարկումներ: Երևանի պատմության թանգարանում գրվել են 138 գիտական զույգագրման քարտեր և 44 ընդունման	Երևանի ենթակայության թանգարաններ 2023թ. հունվար-դեկտեմբեր	

		<p>ակտեր թանգարանում նոր ձեռք բերված առարկաների համար:Ֆոնդերը համալրվել են 416 առարկայով, որից 138 առարկա՝ հիմնական ֆոնդ, 278 առարկա՝ գիտաօժանդակ ֆոնդ:Հիմնական ֆոնդում ըստ ֆոնդային բաժինների ընդունվել են. 12 առարկա՝ կերպարվեստի ֆոնդ, 83-ը՝ ազգագրության ֆոնդ, 10-ը՝ արտադրական ֆոնդ, 18-ը՝ ֆոտո, ֆոնո, կինո աղբյուրների ֆոնդ, 5-ը՝ գրավոր աղբյուրների ֆոնդ, 8-ը՝ դրամագիտության ֆոնդ, 2 -ը՝ հնագիտության ֆոնդ:</p> <p>Համապատասխանաբար գիտաօժանդակ ֆոնդ է ընդունվել 64 առարկա՝ ֆոտո, ֆոնո, կինո աղբյուրների ֆոնդ, 79-ը՝ գրավոր աղբյուրների ֆոնդ, 3-ը՝ կերպարվեստի ֆոնդ, 2-ը՝ արտադրական ֆոնդ, 116-ը՝ ազգագրության ֆոնդ, 14-ը՝ դրամագիտության ֆոնդ: Կարեն Դեմիրճյանի թանգարանում իրականացվել է «Մեծ հայորդիների հանդիպումը. Գարգու և Կարեն Դեմիրճյան» խորագրով ցուցահանդեսը: Կազմակերպվել է «Խորհրդային ժառանգությունը, որպես կայունության երաշխիք» խորագրով ցուցահանդես, իրականացվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ Երևան քաղաքի պատմության թանգարանի հետ համատեղ Կարեն Դեմիրճյանի թանգարանի ամառային բացօթյա ցուցասրահում տեղի ունեցավ «Երիտասարդի ձայնը» խորագրով ցուցահանդես՝ նվիրված Երիտասարդների միջազգային օրվան: Ցուցահանդեսում իրենց աշխատանքները ներկայացրին երիտասարդ ստեղծագործողներ Հայաստանից, Ռուսաստանից, Իրանից և ԱՄՆ-ից: Ռիմա Դեմիրճյանի 90-ամյակի</p>		
--	--	---	--	--

		<p>կապակցությամբ թանգարանի ցուցասրահում անցկացվել է հուշ-երեկո, որի ընթացքում ցուցադրվել են Ռիմա Դեմիրճյանի հարցազրույցներից և տեսանկարահանումներից:</p> <p>Իրականացվել են Կարեն Դեմիրճյանի մասին հուշագրությունների հավաքագրում, շարունակվել են աշխատանքները «1975-2000թթ. Հայաստանի պատմության տարեգրություն» գրքի երկրորդ հատորի ստեղծման ուղղությամբ: Վազգեն Սարգսյանի 60-ամյա հոբելյանին ընդառաջ հավաքագրվել և մշակման է ենթարկվել Վազգեն Սարգսյանի մասին հուշագրություններ, փաստավավերագրական նյութեր, որոնք թանգարանի ավագ գիտաշխատող Ֆիրդուս Զաքարյանի հեղինակությամբ պատրաստվել է տպագրության: Ֆ. Նանսենի թանգարանում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ և դասախոսություններ՝ «Ֆրիտյոֆ Նանսենը մարդկության իրավունքի պաշտպան», «Նանսենը որպես 21-րդ դարի երիտասարդության ուսուցիչ և առաջնորդ», Ֆրիտյոֆ Նանսեն հետազոտողը»: Լույս է տեսել «Նորվեգիայի պատմությունը. վիկինգներից մինչև մեր օրերը» մեծածավալ գիրքը, ինչպես նաև տեղի ունեցավ լիտվացի մեծ գրող Անթանաս Վենուոլիսի «Կովկասյան լեգենդներ» գրքի շնորհանդեսը՝ լիտվերենից Ֆելիքս Բախչինյանի թարգմանությամբ: Մեծ հետաքրքրություն առաջացրեց հատկապես հեղինակի՝ հայկական ժողովրդական լեգենդի մոտիվներով գրված «Արարատի քնած գեղեցկուհին» ստեղծագործությունը: Առաջին անգամ Երևանում՝ ԺԱԹ-ում ներկայացվեց «Վերածննդի 10</p>		
--	--	--	--	--



		<p>հանճարներ» միջազգային նախագիծ՝ մուլտիմեդիա ցուցահանդեսը:</p> <p>Ցուցահանդեսին ներկայացված էին Վերածննդի դարաշրջանի (Վաղ, Բարձր, Ուշ) իտալացի 10 աշխարհահռչակ նկարիչներ՝ Բոտիչելլի, Բելլինի, Դա Վինչի, Միքելանջելո, Ռաֆայել, Ջորջոնե, Վենետո, Տիցիան, Տինտորետտո, Վերոնեզե:</p> <p>Ցուցադրության այցելուները ծանոթացել են արվեստագետների ամենահայտնի գլուխգործոցներին: Ժամանակակից պրոյեկցիոն տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ, ցուցադրությունը հազեցված էր անիմացիաներով և 3D էֆեկտներով՝ դասական երաժշտության ուղեկցությամբ: Հայերենով և ռուսերենով այցելուները ծանոթացան արվեստագետների կենսագրության կարևոր փաստերին:</p> <p>Ցուցադրության մասնակիցները շրջապատված էին Վերածննդի դարաշրջանի նկարիչների 3-6 մետրանոց հսկայական նկարներով, որոնք շարժվում էին անմիջապես նրանց աչքի առաջ:</p> <p>Իրականացել է Րաֆֆի Դավթյանի «Մարդու դռներ» խորագրով նախագիծը, որը ներառում է տարածության մեջ ինստալացված, բազմակի պատկերավորությամբ ներկայացված ֆոտոֆիգուրներ-մարդկային մարմիններ:</p> <p>Իրականացվել է «Անոն Բաբաջանյան» համերգային դահլիճի երկու ճեմասրահներում հայ մեծանուն նկարիչներ Մինաս Ավետիսյանի և Աշոտ Հովյաննիսյանի աշխատանքների ցուցադրությունը:</p> <p>Իրականացվել է կանադահայ արվեստագետ Լյուսիա Չուպակյանի «Կին և Ինքնություններ» խորագրով ցուցահանդեսի բացումը, Միրէլ Գոգիկյանի</p>		
--	--	--	--	--

		<p>«Հետադարձ հայացք» ցուցահանդեսի բացումը: Իրականացել է դիզայներ Վահան Խաչատրյանի և Միսս Հայաստան Լուսինե Թովմասյանի ընկերությանը նվիրված ցուցահանդես, որտեղ ներկայացված էր 18 տարիների պրոֆեսիոնալ նկարահանումներից ինչպես նաև անձնական արխիվներից լուսանկարներ: Լուսանկարների հետ մեկտեղ այցելուներին հնարավորություն ընձեռվեց տեսնել 30 զգեստ: «Եվրոպական ժառանգության օրերը» ավարտվեցին «Մենատիպ և խառը տեխնիկա. ստեղծագործենք միասին» աշխատարանով: Կայացել է «Գենդերային կառուցվածքներ» ցուցահանդեսը, որն իրականացվել է Միջազգային Փառատոն 2-ի շրջանակներում: Ցուցադրության շրջանակում ընդգրկված աշխատանքները ներկայացնում էին 2000-ականներից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանը: «Էրեբունի» ՊՀԱԹ-ում տեղի է ունեցել «Երևանի բիայնական դամբարանը» ժամանակավոր ցուցադրության հանդիսավոր բացումը, «Արտիս ֆուտուրա» ֆոնդի հետ համատեղ նկարահանված՝ «Էրեբունի» Ֆիլմի շնորհանդեսը: Կայացել է «Սիրո ուժն է անհաղթ» խորագրով միջոցառումը, որի ընթացքում թանգարան այցելած երիտասարդների համար սեպագրերով գրվել և տրամադրվել են իրենց անունները՝ ուրարտական ժամանակաշրջանի բարեմադթանքներով: Էրեբունի» ՊՀԱԹ-ում տեղի է ունեցել Գեղագիտության ազգային կենտրոնի կողմից՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի հետ համատեղ և ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ իրականացված «Ինքնաճանաչում»:</p>		
--	--	--	--	--

		<p>Էրեբունի» խորագրով Համահայկական մրցույթ-փառատոնի ամփոփիչ ցուցահանդեսի հանդիսավոր բացումը, հունիսի 1-ին Էրեբունի և Շենգավիթ արգելոց-թանգարաններում անվճար իրականացվել է «Արի՛ պեղենք միասին» կրթական ծրագիրը, կազմակերպվել է դասախոսությունների շարք՝ Ավագ Հարությունյանը հանդես է եկել «Արևադարձի խորհրդի մասին», իսկ Մ. Բադալյանը՝ «Գինին ու արևն Ուրարտում» խորագրով դասախոսությամբ: Էրեբունի» ՊՀԱԹ-ում կայացել է կենսաբանական գիտությունների դոկտոր Լևոն Եպիսկոպոսյանի «Գենետիկան և հայերի ծագումը» խորագրով դասախոսությունը: Նավասարդի կապակցությամբ, Կարմիր բլուր մասնաճյուղում այցելուների համար իրականացվել է նետաձգության կրթական ծրագիր: Եվրոպական ժառանգության օրերի շրջանակում, Էրեբունի թանգարանում կայացել է «Շունը հին Հայաստանում» ժամանակավոր ցուցադրության բացումը, Շենգավիթ մասնաճյուղում տեղի է ունեցել հնագետ Արմինե Հայրապետյանի «Զրույցներ օջախի շուրջ» խորագով Կուր-Արաքսյան ժամանակաշրջանին նվիրված դասախոսությունը, իսկ Կարմիր բլուր մասնաճյուղում՝ փորձարարական հնագիտության վարպետաց դաս: Բրիտանական թանգարանի և «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի համագործակցության շրջանակում սեպտեմբերի 5-ին, 6-ին և 7-ին Էրեբունի թանգարանում պրոֆեսոր</p>		
--	--	---	--	--

		<p>Իրվինգ Ֆինքելի կողմից իրականացվել են վարպետաց դասեր՝ 50 մասնակցի համար: Սեպտեմբերի 8-ին Էրեբունի թանգարանում մեկնարկել են «Պուշկինի անվան Գեղեցիկ արվեստների պետական թանգարան»-ի և «Ռուսաստանի վերականգնման պետական ինստիտուտ»-ի համագործակցության շրջանակում Էրեբունի թանգարանի հավաքածուում պահվող առավել վտանգված որմնանկարների հատվածների ամրակայման և կոնսերվացման երրորդ փուլի աշխատանքերը: Ա. Ս. Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարանում տեղի է ունեցել «Ուրարտուի թագավորությունը. հին Հայաստանի ժառանգությունը. Ուրաշտու-Հարմինուա-Արմինա» խորագրով ժամանակավոր ցուցադրության բացման հանդիսավոր արարողությունը: Ցուցադրությանը ներկայացված են «Էրեբունի» ՊՀԱԹ-ի, Հայաստանի պատմության թանգարանի, Երևանի քաղաքի պատմության թանգարանի և ռուսաստանյան մի շարք առաջատար թանգարանների (պետական Էրմիտաժ, Ա. Ս. Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարան, Ռուսաստանի պատմության պետական թանգարան ևն) նախաուրարտական, ուրարտական և հետուրարտական ժամանակաշրջանների հավաքածուներից ընտրյալ իրեր: «Էրեբունի» ՊՀԱԹ-ից այս ցուցադրությանը ներկայացվել են 53 հնագիտական առարկաներ: 2023 թվականին «Էրեբունի» ՊՀԱԹ-ն ունեցել է 40132 այցելու, Ֆ. Նանսենի թանգարանը՝ 1839, Կարեն Դեմիրճյանի թանգարանը՝ 2713, ԺԱԹ-ը՝ 17261, Երևանի պատմության թանգարանը՝ 20015:</p>		
--	--	--	--	--

76.	Թատերական ներկայացումներ	<p>Ազգային թատերարվեստի ավանդույթների պահպանում, դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում, հին բեմադրությունների վերականգնում, նոր բեմադրությունների ներկայացում, ժամանակից թատերգության ներկայացում, հայ և համաշխարհային հեղինակների բարձրարժեք ստեղծագործությունների բեմականացում:</p>	<p>Երևանի ենթակայության թատրոններում բեմադրվել են դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունները: «Երևանի Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն» ՀՈԱԿ-ում 2023թ. հանդիսատեսի դատին է հանձնվել երեք նոր ներկայացում՝ Մարկ Սովաժոնի «Չառ», Ալֆրեդ դը Մյուսեի «Լորենցաչո», Աստրիդ Լինդգրենի «Երկարագուլպա Պեպպին»: Թատրոնի կողմից կազմակերպվել է հյուրախաղ Գյումրի քաղաքում «Մեծ լռություն» ներկայացումով, ինչպես նաև Թատրոնը «Անկոչ Աննան» ներկայացումով մասնակցել է Ռուսաստանի Դաշնության Նովգորոդ քաղաքում կայացած միջազգային փառատոնին և հանդիսատեսի ու թատերագետների կողմից արժանացել բարձր գնահատականի: «Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ-ում 2023թ. 4 նոր ներկայացում է բեմադրվել՝ Պիեռ Կոռնեյլի «Սիդ», Պաուլո Կապպելլոնիի «Բարի լույս հրեշտակներս», Րաֆֆու «Խենթը» և «Բալերինա» երաժշտական ներկայացումը: Երևանի Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում 2023թ. ցուցադրվել է 154 ներկայացում, հանդիսատեսի թիվը կազմել է 40481, Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում՝ 195, հանդիսատեսի թիվը՝ 40705: Մ.Մկրտչյանի արտիստական թատրոնում հիմնանորոգման աշխատանքներով պայմանավորված՝ թատերական ներկայացումներ չեն ցուցադրվել: Գնումների մասին ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն կազմակերպվել է էլեկտրոնային աճուրդ, որի շրջանակում կնքվել է պայմանագիր:</p>	<p>Երևանի ենթակայության թատրոններ 2023թ. հունվար-դեկտեմբեր</p>	
-----	--------------------------	---	---	--	--

			<p>1. ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/115-1 (Ձեռք են բերվել «Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» ՀՈԱԿ-ի համար թատերական աթոռներ): «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն կազմակերպվել է բաց մրցույթ որի շրջանակում կնքվել է պայմանագիր:</p> <p>2. ԵՔ-ԲՄԱՊՁԲ-23/1 Ձեռք է բերվել «Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» ՀՈԱԿ-ի թատրոնի բեմի կոնստրուկցիաների և էլեկտրական ճախարակների համակարգ, «Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» ՀՈԱԿ-ի թատրոնի բեմի ձայնային համակարգ, «Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» ՀՈԱԿ-ի թատրոնի բեմի լուսային համակարգ:</p>		
77.	Երաժշտարվեստի և պարարվեստի համերգների կազմակերպում	Երաժշտական և պարային համերգային ծրագրերի կազմակերպում և իրականացում, օժտված երեխաների ստեղծագործական, կատարողական ձեռքբերումների, դեբյուտային ստեղծագործական աշխատանքների ներկայացում, միջոցառումների և մրցույթների, այդ թվում՝ համաքաղաքային հանրապետական, միջազգային մրցույթների, փառատոնների կազմակերպում և միջազգային մրցույթներին, փառատոններին մասնակցության ապահովում:	Երաժշտարվեստի և պարարվեստի համերգների կազմակերպման հաստատությունները՝ մանկական ֆիլիարմոնիաները, «Երևան» փողային նվագախումբը, «Հայ-Արտ» մշակութային կենտրոնը շարունակելով իրենց գործունեությունը 2023թ. իրականացրել են մի շարք ցուցահանդեսներ, միջոցառումներ, բաց դասեր: «Երևան» փողային նվագախումբը իրականացրել է նախապատրաստական աշխատանքներ, փորձերին զուգահեռ կատարվել են ստեղծագործությունների մշակումներ: Նվագախումբը բազմաժանր համերգային ծրագրերով ելույթներ է ունեցել Երևան քաղաքի այգիներում: «Յու. Բախչյանի անվան մանկական ֆիլիարմոնիա» ՀՈԱԿ-ի սաները մասնակցել են Հայաստանի Սպորտային Պարերի Ֆեդերացիայի /ՀՍՊՖ/	«Երևան» փողային նվագախումբ ՀՈԱԿ, «Հայ-Արտ մշակութային կենտրոն» ՓԲԸ, «Հայաստանի Փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլիարմոնիա» ՀՈԱԿ, «Յու. Բախչյանի անվան մանկական ֆիլիարմոնիա» ՀՈԱԿ	

		<p>պաշտոնական առաջնությանը՝ 16-1 մրցանակ, 5-11 մրցանակ, «Ոսկե սրինգ» փառատոնին, Ֆրանկոֆոնիային նվիրված միջոցառմանը, «Նոր 8-րդ հնչյուն» մրցույթ փառատոնի մրցանակաբաշխությանը, որտեղ երգչախումբն արժանացել է 1-ին կարգի դափնեկրի կոչման: Իրականացվել է Սպորտային պարերի աշխարհի չեմպիոն Սոֆիա Ֆիլիպչուկի վարպետության դասերը դպրոցի սաների հետ: Դպրոցի սաները մասնակցել են Իսպանիայում կայացած WDSF սպորտային պարերի առաջնություն /1-ին մրցանակ/, Հայաստանում կայացած WDSF սպորտային պարերի միջազգային առաջնությանը /3-2-րդ տեղ, 1-4-րդ տեղ/: Տարեվերջում ՀՈԱԿ-ի սաները ներկայացել են Ամանորյա համերգով:</p> <p>«Հայաստանի Փոքրիկ երգիչներ» մանկական Ֆիլհարմոնիա» ՀՈԱԿ-ում իրականացվել է նոր սաների ընդունելություն, նոր ծրագրի պատրաստում:</p> <p>Տեղի են ունեցել մի շարք մենահամերգներ՝ Պուշկինի անվան հանրակրթական դպրոցի դահլիճում «Հայաստանի ամենափոքրիկ երգիչներ» երգչախմբի համերգը՝ նվիրված մայրության տոնին, Կապանի արվեստի պետական քոլեջի Վահագն Ստամբուլյանի անվան երգեհոնային դահլիճում «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի մենահամերգը, «Երգով ու սիրով» երգչախմբային փառատոնի գլխավոր համերգը՝ Սյունիքի 12 երգչախմբերի մասնակցությամբ, Գորիսի պետական դրամատիկական թատրոնում մենահամերգ: Երգչախումբն իր մասնակցությունն է ունեցել Գերմանիայի Լայպցիգ քաղաքում կայացած հեղինակավոր Բախ փառատոնի շրջանակներում: «Հայաստանի</p>	<p>2023թ. հունվար-դեկտեմբեր</p>	
--	--	---	---------------------------------	--

			<p>փոքրիկ երգիչներ» կրտսեր երգչախմբի տարեվերջյան համերգն իրականացել է Սայաթ Նովայի անվան երաժշտական դպրոցում: «Հայ-Արտ» մշակութային կենտրոնում իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ «Վան Գոգի մուտիմեդիա ցուցահանդես» պրոյեկցիոն շոու, Այվազովսկի Վերածնված կտավներ» մուտիմեդիա ցուցահանդես, YEREVAN FASHION WEEK/Երևանի Նորածնության Շաբաթ (նորածնության բանախոսություններ և նորածնության շուկա), CYFEST մեդիաարվեստի փառատոն ցուցադրություն, ձայնային արվեստ, փերֆորմանսներ, դասախոսություններ, Գուստավ Կլիմտ և Ֆրիդա Կալո, Նիկոլայ Ռերիխ. մուտիմեդիա ցուցահանդես, Լոտտեն ստվերների երկրում /առաջին անիմատոր Լոտտե Ռայնիգերի անիմացիաների վիդեո ինստալյացիա և ցուցահանդեսի շրջանակում աշխատարաններ ու հանդիպումներ անիմատորների հետ, ԲԱՅ ԿԱՆՉ՝ երիտասարդ լուսանկարիչների համար «ՖՈՏՈՖԵՍ – 2023»-ին մասնակցելու համար:</p>		
<b>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ</b>					
78.	Փողոցների բարեկարգում	<p>Մայրաքաղաքի փողոցների, մայրուղիների, հրապարակների, բակային տարածքների և այլ ասֆալտապատման կարիք ունեցող տարածքների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքների իրականացում քաղաքի կայուն և համաչափ զարգացման գերակա սկզբունքի համատեքստում՝ բոլոր վարչական շրջաններում, շեշտը դնելով ծայրամասային վարչական շրջանների վրա: Կիրականացվեն նաև ճաքալցման</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ, Ավան, Նոր-Նորք վարչական շրջանների փոսային նորոգման աշխատանքներ:</li> <li>2. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Նուբարաշեն, Շենգավիթ, Աջափնյակ, Դավթաշեն վարչական շրջանների փոսային նորոգման աշխատանքներ:</li> <li>3. Երևան քաղաքի Արաբկիր, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների փոսային նորոգման աշխատանքներ:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. ԵՔ_ԲՄԱՇՁԲ-23/6-1 30.03.2023-01.12.2023թթ.</li> <li>2. ԵՔ_ԲՄԱՇՁԲ-23/6-2 05.04.2023-09.06.2023թթ.</li> <li>3. ԵՔ_ԲՄԱՇՁԲ-23/6-3</li> </ol>	



		<p>աշխատանքներ պոլիմերային և բիտումապոլիմերային մածուցիկ նյութերով, որը էապես երկարացնում է ասֆալտ-բետոնե ծածկի ծառայության ժամկետը և հողային պաստառով ճանապարհների հիմնանորոգման, ասֆալտապատման աշխատանքներ: Նախատեսվում է շարունակել մայթերի վերանորոգում և սալիկապատում:</p>	<p>4. Երևան քաղաքի Նոր-Նորք վ/2 փողոցների միջին նորոգում:  5. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Քանաքեռ-Զեյթուն, Շենգավիթ և Էրեբունի վ/2 փողոցների միջին նորոգման աշխատանքներ:  6. Երևան քաղաքի Արաբկիր վ/2 փողոցների միջին նորոգման աշխատանքներ:  7. Երևան քաղաքի Աջափնյակ վ/2 փողոցների միջին նորոգման աշխատանքներ:  8. Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի փողոցների միջին նորոգման աշխատանքներ:  9. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Կատովսկու փողոցի միջին նորոգման աշխատանքներ:</p>	<p>04.04.2023-01.12.2023թթ.  4. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/38-2  02.06.2023-30.09.2023թթ.  5. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/38-1  02.06.2023-30.10.2023թթ.  6. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/105  28.07.2023-25.11.2023թթ.  7. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/104  04.08.2023-01.12.2023թթ.  8. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/84  19.06.2023-16.10.2023թթ.  9. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/275  03.11.2023-02.12.2023թթ.</p>	
79.	Հանգստի գոտիների և բակային տարածքների բարեկարգում	<p>Նախատեսվում է հանգստի գոտիների պահպանում, բարեկարգում, նորերի կառուցում, բակային տարածքների կահավորում մանկական խաղերով և մարզասարքերով: Բոլոր վարչական շրջանների բակային տարածքներում կառուցել խաղահրապարակներ և մինի-ֆուտբոլի դաշտեր, ապահովել դրանց շահագործման անվտանգությունը և պահպանումը:</p>	<p>1. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կիկյան փ. հ.12 և հ. 14 շենքերի միացյալ բակի բարեկարգման աշխատանքներ:  2. Երևան քաղաքի Կիկյան փ. հ.4, 6, 8 և հ. 10 շենքերի միացյալ բակի բարեկարգման աշխատանքներ:  3. Նալբանդյան 21 հասցեի բակային մասի բարեկարգում:</p>	<p>1. ԵՔ_ԳՀԱՇՁԲ-22/92  03.05.2023-31.08.2023թթ.  2. ԵՔ_ԲՄԱՇՁԲ-23/5  21.04.2023-18.10.2023թթ.  3. ԵՔ_ԲՄԱՇՁԲ-23/11  05.05.2023-18.07.2023թթ.</p>	

80.	<p>Կրթական, նախադպրոցական, արտադպրոցական, մարզական և մշակութային հաստատությունների շենքերում և բակային տարածքներում վերանորոգման աշխատանքներ</p>	<p>Ըստ անհրաժեշտության կրթական, նախադպրոցական, արտադպրոցական, մարզական հաստատությունների շենքերում ընթացիկ նորոգման, հարդարման, ջերմամեկուսացման, դռների և պատուհանների փոխարինման, տանիքների, սանհանգույցների վերանորոգման, ջեռուցման/հովացման, օդափոխության և օդորակման, լուսավորության համակարգերի վերակառուցման աշխատանքների իրականացում: Նախատեսել վերականգնվող էներգիայի աղբյուրների ինտեգրման, հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի հասանելիության ապահովումը, արևային ֆոտովոլտային կայանների և արևային ջրատաքացուցիչների կիրառումը: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել Եվրոպական ներդրումային բանկի, ՄԱԶԾ և E5P Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամի աջակցությամբ:</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Շենգավիթ վ/շ 137 մանկապարտեզի շենքի հիմնանորոգման աշխատանքներ:</li> <li>2. Շենգավիթ վ/շ 143 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ:</li> <li>3. Շենգավիթ վ/շ 147 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ:</li> <li>4. Մալաթիա-Սեբաստիա վ/շ 77 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ:</li> <li>5. Մալաթիա-Սեբաստիա վ/շ 95 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ:</li> <li>6. Աջափնյակ վ/շ 44 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ:</li> <li>7. Աջափնյակ վ/շ 50 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ:</li> <li>8. Դավթաշեն վ/շ 61 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ:</li> <li>9. Շենգավիթ հ.140 մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման աշխատանքներ:</li> <li>10. Երևան քաղաքի Աջափնյակ վ/շ Գուրգեն Մարգարյանի անվան հ.41 մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման աշխատանքներ:</li> <li>11. Նոր Նորք վ/շ հ. 105 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ:</li> <li>12. Արաբկիր վ/շ հ.22 մանկապարտեզի բակի բարեկարգման աշխատանքներ:</li> <li>13. Արաբկիր վ/շ հ.23 մանկապարտեզի բակի բարեկարգման աշխատանքներ:</li> <li>14. Աջափնյակ վ/շ հ.48 մանկապարտեզի բակի բարեկարգման աշխատանքներ:</li> <li>15. Թիվ 109 մանկապարտեզի վերակառուցման աշխատանքներ:</li> <li>16. Թիվ 110 մանկապարտեզի վերակառուցման աշխատանքներ:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/33-1 09.05.2022թ.- 08.06.2023թ.</li> <li>2. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/33-2 03.05.2022թ.- 26.08.2023թ.</li> <li>3. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/33-3 17.05.2022թ. - 10.08.2023թ.</li> <li>4. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/74 24.06.2022թ.- 24.07.2023թ.</li> <li>5. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/75 01.07.2022թ.- 01.07.2023թ.</li> <li>6. ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/6 17.08.2022թ.- 25.12.2023թ.</li> <li>7. ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/5 06.09.2022թ.- 25.12.2023թ.</li> <li>8. ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/7 31.03.2023- 25.12.2023թթ.</li> <li>9. ԵՔ_ԲՄԱՇՁԲ-23/13 21.07.2023թ.- 23.09.2024թ.</li> <li>10. ԵՔ_ԲՄԱՇՁԲ-23/36</li> </ol>	
-----	--	---	--	--	--

			<p>17. Թիվ 71 մանկապարտեզի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>18. Թիվ 22 մանկապարտեզի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>19. Թիվ 23 մանկապարտեզի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>20. Երևան քաղաքի Լևոն Շանթի անվան թիվ 4 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի տանիքի վերանորոգման աշխատանքներ:</p> <p>21. Մուշե Իշխանի անվան թիվ 5 հիմնական դպրոցի տանիքի և առաստաղների մասնակի վերանորոգման աշխատանքներ:</p> <p>22. Շենգավիթ մարզադպրոցի 7 մարզադահլիճների հիմնանորոգում:</p>	<p>22.06.2023թ.- 21.06.2025թ.</p> <p>11. ԵՔ-ԲՄԱՇՁԲ- 23/43</p> <p>22.06.2023թ.- 23.12.2024թ.</p> <p>12. ԵՔ-ԲՄԱՇՁԲ- 23/112</p> <p>31.08.2023- 29.12.2023թթ.</p> <p>13. ԵՔ-ԳՀԱՇՁԲ- 23/79</p> <p>04.09.2023թ.- 01.02.2024թ.</p> <p>14. ԵՔ-ԲՄԱՇՁԲ- 23/85</p> <p>04.07.2023թ.- 30.01.2024թ.</p> <p>15. SW/EEK-003: ԼՈՏ 4</p> <p>29.04.2021թ.- 05.01.2023թ.</p> <p>16. SW/EEK-003: ԼՈՏ 4</p> <p>17.11.2021թ.- 05.01.2023թ.</p> <p>17. SW/EEK-002: ԼՈՏ 1</p> <p>20.05.2021թ.- 05.01.2023թ.</p> <p>18. SW/EEK-02: ԼՈՏ 2</p> <p>21.05.2021թ.- 31.10.2023թ.</p> <p>19. SW/EEK-02: ԼՈՏ 2</p> <p>21.05.2021թ.- 31.10.2023թ.</p>	
--	--	--	---	--	--

				<p>20. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/235 05.10.2023թ.- 03.01.2024թ. 21. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/213 16.08.2023- 14.10.2023թթ. 22. ԵՔ_ԲՄԱՇՁԲ-23/8 03.04.2023- 31.07.2023թթ.</p>	
81.	Առողջապահական հիմնարկների վերանորոգում	Նախատեսվում է իրականացնել նորոգման, ներքին հարդարման, ջերմամեկուսացման, դռների և պատուհանների, հատակների փոխարինման, տանիքների վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքներ:	<p>1. Երևան քաղաքի «N5 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգման և բակային տարածքի բարեկարգման աշխատանքներ: 2. Երևան քաղաքի թիվ 12 պոլիկլինիկա ՓԲԸ-ի շենքի վերանորոգման աշխատանքներ: 3. Երևան քաղաքի «Շտապօգնության» ՓԲԸ հ.1 ենթակայանի շենքի տանիքի և ջեռուցման համակարգի հիմնանորոգման աշխատանքներ:</p>	<p>1. ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/14 12.10.2022թ.- 24.01.2023թ. 2. ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/13 29.03.2023- 25.12.2023թթ. 3. ԵՔ-ՀՄԱՇՁԲ-23/1 01.12.2023- 25.12.2023թթ.</p>	
82.	Կամուրջների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման ծառայություններ	Նախատեսվում է իրականացնել կամուրջների և կամրջային կառույցների դեֆորմացիոն կարերի, ջրահեռացման խողովակների մաքրում, հենարանների և թռիչքային կառուցվածքների զննում, վնասվածքների դեպքում՝ վերանորոգում, բազրիքների, եզրաքարերի, լուսավորության սյուների և այլ էլեմենտների նորոգում, ներկում, երթևեկելի մասերի և մայթերի մաքրում, նորոգում:	<p>1. Կամուրջների և կամրջային կառույցների դեֆորմացիոն կարերի, ջրահեռացման խողովակների մաքրման և այլ աշխատանքներ: 2. Երևան քաղաքի «Հաղթանակ» կամրջի բարեկարգման աշխատանքներ:</p>	<p>1. ԵՔ_ԲՄԾՁԲ-23/1 22.02.2023- 25.12.2023թթ. 2. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/22 20.03.2023- 15.12.2023թթ.</p>	
83.	Ստորգետնյա հետիոտնային անցումներ	Ավտոտրանսպորտի ծանրաբեռնված երթևեկության պայմաններում քաղաքացիների անցուդարձն անվտանգ դարձնելու	9 գետնանցումների մոտ հաշմանդամներին հարմարեցված վերելակների տեղադրում:	ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/48 23.08.2023- 06.12.2023թթ.	

		նպատակով անհրաժեշտ են հետիոտնային վերգետնյա և ստորգետնյա անցումների նպատակով իրականացվում են անցումների վերանորոգման, ինչպես նաև նոր անցումների կառուցման աշխատանքներ:			
84.	Հիդրանտների վերանորոգում և նորերի կառուցում	Շենքերի և շինությունների հակահրդեհային անվտանգության ապահովում:	Երևան քաղաքի հակահրդեհային հիդրանտների վերանորոգման աշխատանքներ:	ԵԲ-ԲՄԱՇՁԲ-23/86 02.06.2023թ.- 16.01.2024թ.	
85.	Ադմինիստրատիվ շենքերի հիմնանորոգում և նորերի կառուցում	Ադմինիստրատիվ շենքերի հիմնանորոգման, նորերի կառուցման աշխատանքներ:	Լենինգրադյան փ. հ.16 վարչական շենքի որպես կառավարման կենտրոնի վերակառուցում:	ԵԲ-ԲՄԱՇՁԲ-23/21 28.03.2023- 23.12.2023թթ.	

**ՏՐԱՆՍՊՈՐՏ**

86.	Երևանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում նոր քաղաքային ավտոբուսների (հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված) շահագործման աշխատանքների կազմակերպում	Մայրաքաղաքի կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպումը նոր ավտոբուսներով, ուղևորների սպասարկման որակի և անվտանգության աստիճանի բարձրացում: Երևանի հասարակական տրանսպորտի ոլորտի համակարգային բարեփոխումների շրջանակներում, կարևորելով երթուղային ցանցի արդյունավետության ու ուղևորների սպասարկման որակի բարձրացումը, մշակվել և ստեղծվել է նոր երթուղային ցանց, որով նախատեսվում է բացառել միկրոավտոբուսների շահագործումը՝ դրանք փոխարինելով միջին և մեծ տեղատարողության քաղաքային ավտոբուսներով: Նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում նախատեսվում է անցկացնել մրցույթներ՝ ներկրվելիք միջին և մեծ դասի ավտոբուսների շահագործման աշխատանքները կազմակերպելու համար:	1. Կազմակերպվել է մայրաքաղաք ներկրված նոր, թվով 87 «ՄԱՆ» մակնիշի մեծ տեղատարողությամբ ավտոբուսների շահագործումը, նշված ավտոբուսներով սպասարկվում է թվով 8 երթուղի: 2. Կազմակերպվել է մայրաքաղաք ներկրված նոր, թվով 150 «ԺՈՆԳ ԹՈՆԳ» մակնիշի միջին տեղատարողության ավտոբուսների շահագործումը: Ընդհանուր առմամբ նշված մակնիշի ավտոբուսներով (361 հատ) սպասարկվում է թվով 31 երթուղի: 3. Կազմակերպվել է մայրաքաղաք ներկրված նոր, թվով 15 «ՅՈՒԹՈՆԳ» մակնիշի, շարժման ընթացքում լիցքավորվող տրոլեյբուսների աշխատանքը թվով 2 երթուղիներում (հ.հ.2ա և 10ա): 4. Բարեկարգվել է Լենինգրադյան 16 հասցեում գտնվող տարածքը, որտեղից ներկայումս կազմակերպվում է նոր ավտոբուսների շահագործման աշխատանքները:	Տրանսպորտի վարչություն «Երևանտրանս» ՓԲԸ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ	Չինական կողմի հետ տարված բանակցությունների արդյունքում, առանց լրացուցիչ հավելավճարի, 2024թ. հունվարի վերջին մայրաքաղաք կներկրվի թվով 30 «ԺՈՆԳ ԹՈՆԳ» մակնիշի ավտոբուս:
-----	---	--	--	---	---

87.	Մետրոպոլիտենի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում	Նախատեսվում է արդիականացնել՝ 1. մետրոպոլիտենի 3 վագոն՝ 2 գլխամասային, 1 միջանկյալ, 2. ձեռք բերել գնացքի 20 անվազույգեր, 3. 12 անվասայլակի շրջանակ, 4. իրականացնել 6 անվասայլակների և պնևմատիկ սարքավորումների վերանորոգում:	1) 2 հատ գլխամասային վագոնների վերանորոգում  2) Անվազույգերի ձեռքբերում՝ 24 հատ	«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	
88.	Մետրոպոլիտենի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում	Նախատեսվում է՝ 1. 825 Վ մալուխների փոխարինում-3400մ, 2. մետրոպոլիտենի բաց հատվածի լուսավորության հիմնանորոգում-1500մ, 3. կապի համակարգերի արդիականացում, 4. գերավազքով աշխատող թվով շարժասանդուղքների հիմնանորոգում, 5. թունելային օդափոխման համակարգի արդիականացում, 6. սկումուլյատորային կայանների վերազինում-9 համակարգ:	1) 825 վ մալուխների միջակապերի փոխարինում՝ 1100 մետր:  2) Գործարանային ենթակայանի Կ ՏԵ ուժային տրանսֆորմատորի փոխարինում: 3) Գծային արկղերի արդիականացում՝ 90 հատ: 4) Մալուխային կանգնակների և դարակների ձեռքբերում՝ 10000 լրակազմ: 5) Հզոր օդափոխման համակարգի արդիականացում՝ 14 հատ: 6) Հանրապետության հրապարակ կայարանի շարժասանդուղքների աստիճանների, քարշի շղթաների ձեռքբերում և փոխարինում է 3 շարժասանդուղք (երկուսն ավարտված է, մեկը ընթացքի մեջ է): 7) Ռելսերի ձեռքբերում 4300 մետր: 8) Փայտակոճերի ձեռքբերում՝ 1500 հատ:	«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	1. իրականացվել են մետրոպոլիտենի գծերով փայտակոճերի փոխարինումով վերաբեռնավորման աշխատանքներ, ընդամենը՝ -749.1 մետր, այդ թվում՝ - 1-ին գծով՝ 300,5 մետր, - 2-րդ գծով՝ 261,0 մետր, - «Շենգավիթ» կայարան՝ 114,2 մետր, - «Գործարանային» կայարան՝ 73,4 մետր, - կանգառավերանորոգման արտադրամասի տանիքի (5315քմ), դարպասների (10հատ) և պատուհանների (712,3 քմ) փոխարինում:

89.	<p>Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորների սպասարկման որակի և անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում</p>	<p>Նախատեսվում է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Նոր տրոլեյբուսների ձեռքբերում-30 հատ:</li> <li>2. Թիվ 14 քարշի ենթակայանի բարձր լարման մալուխների փոխարինում-3000մ:</li> <li>3. Թիվ 1 քարշի ենթակայանի տանիքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում-261քմ:</li> <li>4. Տարբեր փողոցներում տեղակայված հպակային ցանցի թվով 34 վթարային հենասյուների փոխարինում նորերով:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1) Ձեռք է բերվել թվով 15 չինական «ՅՈՒԹՈՆԳ» մակնիշի նոր տրոլեյբուսներ (շարժման ընթացքում լիցքավորվող, հպակային ցանցից դուրս մոտ 60 կմ ինքնավար վազքով):</li> <li>2) Վերակառուցվել է Գր.Լուսավորչի-Իտալիայի-Խորենացու-Ազաթանգեղոսի փողոցներով անցնող, 2055 մետր երկարությամբ 600Վ լարման ստորգետնյա մալուխային ցանցը:</li> <li>3) Փոխարինվել են տարբեր փողոցներում տեղակայված թվով 5 հենասյուներ:</li> <li>4) Վերանորոգվել են թվով 4 տրոլեյբուսներ:</li> <li>5) Վերանորոգվել են թվով 3 ավտոաշտարակներ:</li> <li>6) Հպակային ցանցի 3470 մետր ընդհանուր երկարությամբ հին պղնձալարերը փոխարինվել է նորերով:</li> </ol>	<p>«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ «ՅԵՆՏՈՒԱ ԿՈՒ» ՍՊԸ «ԵԷՏ-ԳՀԱԶԲ-23/23» 26.05.2023թ. «ԱՅԹԻԷՍ-Սերվիս ԱՐՄ» ՍՊԸ «ԵԷՏ-ԳՀԾԶԲ-23/43» 27.09.2023թ.</p>	
90.	<p>Երևան քաղաքում ճանապարհային երթևեկության կարգավորման և անվտանգության ապահովման նպատակով ճանապարհային նշանների, լուսացույցների ձեռքբերում և տեղադրում, ճանապարհային գծանշումների իրականացում</p>	<p>Տարվա ընթացքում իականացվել է գծանշումների թարմացման, ճանապարհային նշանների ձեռքբերման և տեղադրման, լուսացույցների սպասարկման, նոր լուսացույցների և դրանց սարքավորումների տեղադրման,ինչպես նաև հին լուսացույցների փոխարինման աշխատանքներ, որոնք ապահովում են անվտանգ երթևեկություն յուրաքանչյուր երթևեկության մասնակցի համար:</p>	<p>Ծրագրի շրջանակներում իրականացվել է Լուսային ազդանշանների 305 թիվ, սպասարկում (հատ) Հորիզոնական գծանշում 10 սմ (գծմ) 849434 Հորիզոնական գծանշում 15 սմ (գծմ) 629473 Հորիզոնական գծանշում ձեռքով 10 սմ (գծմ) 1056992 Պահպանապատերի հարդարում (քմ) 23938 Ուղղաձիգ գծանշում (պահպանապատերի ներկում) (քմ) 23938 Սառը պլաստիկով գծանշում 1670 (քմ) Թերմոպլաստիկով գծանշում 2838.72</p>	<p>«Պրոֆ Թրեյդ» ՍՊԸ ԵԲ-ԳՀԱԾԶԲ-23/276 16.10.2023թ. «Լոկատոր» ՓԲԸ ԵԲ-ԳՀԾԶԲ-23/99-1, 12.07.2023թ. «Դավ Փրոցեքթ» ՍՊԸ ԵԲ-ԲՄԾԶԲ-23/17 03.04.2023թ. «Նոստ-23» ՍՊԸ ԵԲ-ԲՄԾԶԲ-23/15-3</p>	

			Ճանապարհային նշանների պատրաստում և տեղադրում (հատ) 934 Տեղեկատվության նշանի (շիթ) պատրաստում և տեղադրում (քմ) 2.48	24.03.2023թ. «Գորեր» ՍՊԸ ԵՔ-ԲՄԾՁԲ-23/15-2 20.03.2023թ. «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ ԵՔ-ԲՄԾՁԲ-23/15-1 20.03.2023թ.	
91.	Հետիոտնային կանչի լուսացույցների ձեռքբերում և տեղադրում	Հետիոտների երթևեկության անվտանգության ապահովման նպատակով մայրաքաղաքի մի շարք փողոցների կահավորում հետիոտնային կանչի լուսացույցներով- 19 հատ:			Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ չի իրականացվել
92.	«Հետիոտնային կանչի» ռեժիմով աշխատող լուսացուցային համակարգերի սպասարկման, պահպանման, շահագործման և վթարավերականգնողական աշխատանքներ	Իրականացնել Երևան քաղաքում տեղադրված հետիոտնային կանչի ռեժիմով լուսացուցային համակարգերի սպասարկման, շահագործման և վթարավերականգնողական աշխատանքներ:	Ըստ անհրաժեշտության և պահանջի իրականացվել են թվով 28 հետիոտնային կանչի ռեժիմով աշխատող լուսացույցների սպասարկման, պահպանման և վթարավերականգնողական աշխատանքներ (պայմանագիր՝ ԵՔ-ԳՀԾՁԲ-23/99-1,12.07.2023):	«ԼՈՎԱՏՈՐ» ՓԲԸ	
93.	Հասարակական տրանսպորտի կանգառների կահավորում	Ուղևորների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով, Երևանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում, նախատեսվում է սահմանել նոր կանգառներ և շարունակել կանգառների կահավորման աշխատանքները: Նախատեսվում է կահավորել ևս 30 կանգառ:	Ձեռք է բերվել և մի շարք փողոցներում գործող կանգառներում տեղադրվել են կանգառասրահներ (պայմանագիր՝ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/8 15.02.2023, (20 հատ):	«ՋԵՄՄԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԻ» Ա/Ձ	Բացի այդ, «Աուդիոր էֆեկտ» ՍՊԸ-ի կողմից թվով 6 հին կանգառասրահներ փոխարինվել են նոր ոճի կանգառասրահներով
94.	Լենինգրադյան 16 հասցեում կառավարման կենտրոնի կառուցում (ստեղծում)	Երևան քաղաքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով իրականացվող կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառում երթակարգավարական	Ընթացքի մեջ են նշված հասցեում գտնվող շենքի քանդման և վերակառուցման աշխատանքները:	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարե-	



		Ճառայությունների մատուցման, դրանց որակի բարձրացման, տրանսպորտային միջոցների աշխատանքի նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու նպատակով:		կարգման վարչություն:	
95.	Ջրվեժի հավաքակայանի (Թևոսյան 5 հասցեում) հիմնանորոգում	Երևանի ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացում ներգրավված շարժակազմերի տեխնիկական սպասարկման, նորոգման, պահպանման համար անհրաժեշտ պայմանների ապահովում:	Նշված հասցեում ընթանում են շենք-շինությունների քանդման աշխատանքներ:	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչություն:	
96.	Գազալցակայանի կառուցում	Երևանի ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացում ներգրավված՝ բնական գազով աշխատող տրանսպորտային միջոցների լիցքավորման աշխատանքների կազմակերպման համար նպաստավոր պայմանների ապահովում:	Թևոսյան 5 հասցեում կառուցվել և շահագործման է հանձնվել գազալցակայանը, որը նախատեսված է թվով 160 ավտոբուսների սպասարկման համար:	«Պարկ գազ» ՍՊԸ	
97.	Տրանսպորտային միջոցների վլացման կետի կառուցում	Երևանի ներհամայնքային ուղևորափոխադրումների գործընթացում ներգրավված տրանսպորտային միջոցների վլացման աշխատանքների կազմակերպում, պատշաճ արտաքին տեսքի և սանիտարական վիճակի ապահովում:	Թևոսյան 12 հասցեում մոնտաժվել և գործում է տրանսպորտային միջոցների ավտոլվացման կետ:		
98.	Միասնական տոմսային համակարգի ներդրում	Երևանի հասարակական տրանսպորտում ուղեվարձի գանձման մեխանիզմների արդիականացում, վճարման գործընթացի կանոնավորում, ուղևորների սպասարկման որակի բարձրացում:	Միասնական տոմսային համակարգի ներդրման գործընթացի շրջանակում հասարակական տրանսպորտի շարժակազմերը և մետրոպոլիտենի անցարգելները համալրվել են վալիդատորներով և գործարկվել է էլեկտրոնային և թղթային տեսքով QR կոդ կրիչը: Աշխատանքները շարունակվում են:	«Թել-Սել» ՍՊԸ «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ	
99.	Խելացի խաչմերուկների ներդրում	Մայրաքաղաքի կարգավորվող խաչմերուկներում ճանապարհային երթևեկության կազմակերպման աշխատանքների բարելավում և արդիականացում, անվտանգ	Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ չեն իրականացվել:		

		գույքան մակարդակի բարձրացում, լուսացույցների կարգաբերում, երթևեկության մասնակիցների համար նպաստավոր պայմանների ապահովում:		
--	--	--	--	--

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

100.	Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի մշակում	<p>Երևան համայնքի համար ռազմավարական բնույթի քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթի ստեղծում՝ քաղաքաշինական գործունեության կանոնակարգման նպատակով և դրա միջոցով սահմանել տարածական զարգացման հիմնական ուղղությունները, օգտագործման ռեժիմները, պարտադիր պահանջներն ու օրենսդրության ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված սահմանափակումները, հողատարածքների կառուցապատման առաջնահերթ (մինչև 5 տարի), միջնաժամկետ (5-10 տարի) և հեռանկարային (10-տարի) փուլերը, հողամասերի նպատակային նշանակությունը և (կամ) դրանց փոփոխությունները՝ Օրենքի և Կարգի պահանջների կատարման ապահովմամբ, ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջների սահմանափակումներ:</p>	<p>Կատարվել են նախապատրաստական աշխատանքներ դեռևս 2022թ.: Երևան քաղաքի ավագանու 2022թ. սեպտեմբերի 13-ի N623-Ա «Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի մշակման նախագծային առաջադրանքը հաստատելու մասին» որոշմամբ հաստատվել է նախագծային առաջադրանքը, ուժը կորցրած համարելով Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի «Երևանի գլխավոր հատակագծի մինչև 2030 թվականը զարգացման ճշգրտման նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքը հաստատելու մասին» N303-Ա որոշումը: Ապակենտրոնացված համագործակցություն Իլ դը Ֆրանս շրջանի և Երևանի քաղաքապետարանի միջև Երևանի քաղաքային փոփոխությունների ծրագրի շրջանակներում: Աշխատանքներ են տարվել երեք ուղղություններով՝ քաղաքաշինություն, շարժունակություն, կոշտ թափոններ: Քաղաքաշինության մասով կարևորվել են հիմնական թեմաները և այդ ուղղությամբ գործողությունները՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) քաղաքաշինական գործակալություն,</li> <li>2) GIS-Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (US&lt;/GIS) (Geographic Information System) ԵՏՀ- Երկրատեղեկատվական համակարգ,</li> <li>3) Գլխավոր հատակագծի հետ կապված հարցեր:</li> </ol>	<p>Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն, Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին, Գնումների վարչություն, սահմանված կարգով ընտրված և պայմանագրով կնքված կազմակերպություն/կապալառու</p> <p>Պայմանագիր կնքված չէ: Նախատեսված է սկիզբը 2024թ. ծրագրով՝ հաստատված Երևան քաղաքի ավագանու N47-Ա 26.12.2023թ. որոշմամբ:</p>
------	--	--	---	--

			<p>Կազմվել է ՀՀ կառավարության որոշման նախագիծ (տեղեկանք հիմնավորմամբ) մեկ անձից կատարվող գնման տարբերակով հարցին ընթացք տալու համար: Որպես քաղաքային պլանավորման փաստաթուղթ կազմելիս ներկայացվող պահանջներում (նաև կառուցապատման կարգավորման ընթացակարգերում՝ կառուցապատման խտության վերանայումներ....) սահմանումներ ունենալ նկատի առնել 21.03.2023թ. NԼ/11893-23 գրությամբ ներկայացված Երևանի կլիմայի փոփոխության հարմարվողականության ռազմավարական ծրագրի լրամշակված նյութը՝ հատկապես Գործողությունների և քայլերից՝ մասնավորապես կետեր՝ 4, 4.1, 6.4, 10.3, 13.1, 14.2, 15.5, 16.2 նաև 9,15.3,17, 17.1): Նոր քաղաքաշինական նորմ է ընդունվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանով NO4-Ն 22.05.2023թ.: Նոր կարգ է հաստատվել N936-Ն 08.06.2023թ.:</p>		
101.	<p>Երևան քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագիծ (այդ թվում՝ հուշարձանների պահպանական գոտիների նախագիծ)</p>	<p>Հուշարձանների պահպանական գոտիները, բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերը ելակետային հիմք են տարածաշրջանների, քաղաքների և մյուս բնակավայրերի մանրամասն հատակագծման և կառուցապատման նախագծերի համար: Նախատեսվում է մշակված նախագծի ամբողջական վերանայումը՝ հուշարձանների ցանկի, այդ թվում նորահայտ, փաստացի կատարված փոփոխությունների արդյունքում: Նախագծի առաջադրանքը կներկայացվի ՀՀԿԳՄՍ և ՀՀ տարածքային</p>	<p>Տվյալ աշխատանքը «Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքի» 3-րդ կետի 4 ենթակետով ամրագրվել է հետևյալ կերպ. «4) պատմամշակութային հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանում և օգտագործում, Երևան քաղաքի պատմամշակութային հուշարձանների հիմնավորման նախագծի զուգահեռ լրամշակում և ներառում գլխավոր հատակագծի կազմում»: ՀՀԿԳՄՍ նախարարության 09.02.2023թ. N 01/14.1/2806-2023 գրությամբ ներկայացվել է (գրանցում 9460-23 առ 10.02.2023թ.) Երևանի գլխավոր</p>	<p>ՀՀԿԳՄՍ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություններ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն, Քաղաքաշինական գործունեության</p>	

		<p>կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների կողմից:</p>	<p>հատակագծի մաս կազմող Երևան քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագծի առաջադրանքը կարծիքի ներկայացնելու վերաբերյալ փաթեթ: Պատրաստվել է Երևանի քաղաքապետ Հր.Սարգսյանից գր. ՀՀ ԿԳՄՍ նախարարին N01/31936-23թ. առ 24.02.2023թ.: 2.4.Նոր կարգ է հաստատվել N936-Ն 08.06.2023թ.: Նոր քաղաքաշինական նորմ է ընդունվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանով N04-Ն 22.05.2023թ.:</p>	<p>հատուկ կարգավորման ծրագրերի բաժին, Գնումների վարչություն, սահմանված կարգով ընտրված և պայմանագրով կնքված կազմակերպություն/կապալառու Պայմանագիր կնքված չէ: Նախատեսված է սկիզբը 2024թ. ծրագրով հաստատված Երևան քաղաքի ավագանու N47-Ա 26.12.2023թ որոշմամբ:</p>	
102.	<p>Երևան քաղաքի ճանապարհատրանսպորտային ցանցի զարգացման համալիր սխեմայի մշակում</p>	<p>Նպատակն է քաղաքի ճանապարհափողոցային ցանցի զարգացման համալիր սխեմայի կազմումը, Երևանի Գլխավոր հատակագծի իրագործման ընթացքի ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկած անհրաժեշտ փոփոխությունների և լրացումների կատարումը: Ճանապարհափողոցային ցանցի բարելավում՝ կենտրոնի բեռնաթափում, կենտրոնի ճանապարհափողոցային ցանցի բարելավում, Երևանը շրջանցող մայրուղային ճանապարհների կազմակերպում:</p>	<p>2024-2028թթ. հնգամյա և 2024թ. տարեկան ծրագրերում ընդգրկված է տվյալ աշխատանքը Կատարվելու էր սույն աղյուսակի առաջին կետի /Գլխավոր հատակագծի/ շրջանակում:</p>	<p>Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն, Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին, Գնումների վարչություն, սահմանված կարգով ընտրված</p>	

				և պայմանագրով կնքված կազմակերպություն/կապալառու: Պայմանագիր կնքված չէ: Նախատեսված է սկիզբը 2024թ. ծրագրով հաստատված Երևան քաղաքի ավագանու N47-Ա 26.12.2023թ որոշմամբ:	
103.	Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի չմշակված հատվածների գոտևորման նախագծի մշակում	Նպատակն է մշակել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի չմշակված որոշ հատվածների գոտևորման նախագիծը, որը քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է, դրանով կսահմանվեն նշված տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջները՝ վարչական շրջանի ամբողջ տարածքում կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով: Գոտևորման նախագծով ապահովված տարածքը՝ 1205,5 հա, չմշակված նախագծային տարածքը՝ 1 310,5 հա:	Կատարվել են նախապատրաստական աշխատանքներ (դեռևս 2022թ.-ից): «Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքի վարչական տարածքում գտնվող՝ «Մարս» գործարանին հարող տարածքի գոտևավորման նախագծի և առաջնահերթ շինարարության կառուցապատման էսքիզների նախագծի հաստատման մասին», Պայմանագիր՝ ԱՇՁԲ-07/178-3-3 Երևաննախագիծ» ՓԲԸ-12.12.2009թ. N5414-Ա Երևանի քաղաքապետի որոշում: «Երևան քաղաքի մի շարք տարածքների գոտևավորման նախագծերի հաստատման մասին» Մալաթիա-Սեբաստիա (1363 հա) առանձին հատվածի համար, Պայմանագիր՝ ԱՇՁԲ-08/129, «Քաղաքաշինություն ԳՀԻ» ՓԲԸ-02.12.2009թ. N47-Ն Երևան քաղաքի ավագանու որոշում: Իսակովի պող. Լենինգրադյան և Աթենքի փողոցներով պարփակված տարածքների գոտևավորման և կառուցապատման նախագիծ՝ 2014թ. Երևաննախագիծ» ՓԲԸ պատվեր 2014թ. Ծածկագիր ՌԵՔ-ՊԸԱՇՁԲ-	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն, Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին, Գնումների վարչություն, սահմանված կարգով ընտրված և պայմանագրով կնքված կազմակերպություն/կապալառու: Պայմանագիր կնքված չէ: Նախատեսված է սկիզբը 2024թ.	

			<p>14/17 մշակվել է սակայն չի հաստատվել: Կազմվել էր Գոտիավորման նախագծի առաջադրանքի նախագիծը, որը ըստ է ներկայացվեր սահմանված կարգի պետք հանրային քննարկման, ուղարկվեր ՀՀ քաղաքին կոմիտե միջգեչատեսչական հանձնաժողովի եզրակացությունը ստանալու, որից հետո Երևանի ավագանու քննարկմանը կներկայացվեր: Նոր քաղաքաշինական նորմ է ընդունվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանով NO4-Ն 22.05.2023թ. ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 263-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին:</p>	<p>ծրագրով հաստատված Երևան քաղաքի ավագանու N47-Ա 26.12.2023թ որոշմամբ:</p>	
104.	<p>Երևանի Լենինգրադյան փողոցից հարավ ընկած նոր ձևավորվող թաղամասի («Նոյ» թաղամասի մոտ) Մոնթե Մելքոնյան փողոցի արևելյան հատվածի և Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա նախագծային մայրուղուն հարող հատվածի տարածքային հատակագծման նախագծի մշակում</p>	<p>Նախատեսվում է մշակել Երևանի Լենինգրադյան, Մոնթե Մելքոնյան փողոցների և Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա նախագծային մայրուղուն հարող իրար հետ կապվող տարածքներում առանձին տեղ-տեղ կառուցապատումներով հատվածները քաղաքաշինական, միասնական, գործառական և հատակագծային կապերով միմյանց փոխկապակցված միջավայր ձևավորել:</p>	<p>Երևանի Ծ.Իսակովի պողոտան Արշակունյաց պողոտային միացնող ավտոմայրուղու կառուցումը նախատեսված է 2023թ.՝ այս ծրագրի կետ 6-ով: Տվյալ աշխատանքը պլանավորվել էր մշակել նոր նախատեսվող կարգով: Ծրջանառվել էր ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակված ««Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի լրամշակված նախագիծը և «Տարածքի հատակագծման նախագծերի (փաստաթղթերի) մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման լրամշակված նախագիծը (գրություն 52110-22 առ 22.11.2022թ.): Սակայն այդ կարգը դեռևս չի ընդունվել: ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ճարտարապետության և քաղա-</p>	<p>Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն, Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին, Գնումների վարչություն, սահմանված կարգով ընտրված և պայմանագրով կնքված</p>	

			<p>քաշինության վարչության պետից ճշտվել է, որ դեռ քննարկումների փուլում է՝ հեռ. (+374 11) 62-17-25 31.03.2023թ.: Առկա է ՀՀ կառավարության 04.02.2021թ հ.142-Լ «Տնտեսական արձագանքման ծրագիրը և գործողությունների պլանը հաստատելու մասին» որոշում՝ կետ 11.Երևանի Նորագյուղ թաղամասի զարգացման հայեցակարգի և բիզնես ծրագրի ձևավորման ուղեցույցի մշակում: Տվյալ գտտու սահմաններում ստացվել են ներդրումային առաջարկներ՝ հիմքեր՝ N8385-23 առ 07.02.2023թ. գրությամբ և N15874-23 06.0.2023թ.:</p>	<p>կազմակերպություն/կապալառու: Պայմանագիր կնքված չէ: Նոր գլխավոր հատակագծի մշակմամբ՝ կնախատեսվի հետագայում:</p>	
105.	<p>Երևանի Ծովակալ Իսակովի պողոտան Արշակունյաց պողոտային միացնող ավտոմայրուղու կառուցում</p>	<p>Նախագծված ավտոմայրուղին հանդիսանում է Լենինգրադյան փողոց–Ծովակալ Իսակովի պողոտա կառուցված ավտոմայրուղու (Մոնթե Մելքոնյան) շարունակությունը, որն անցնելով Հրազդան գետի վրայով՝ միանում է Արշակունյաց պողոտային: Մայրուղու երկու հատվածների ամբողջականությունը հանդիսանում է մայրաքաղաքի կենտրոնի երթևեկության բեռնաթափման տարանցիկ լուծումներից մեկը:</p>	<p>Երևանի Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտային միացնող ավտոմայրուղու նախագիծը կատարվել է: Նախագիծը կազմվել է Երևանի քաղաքապետարանի և Էջիս Ինթերնեյշնլ ընկերության միջև կնքված CS/01 պայմանագրի շրջանակներում: Առկա է նախագծման թույլտվություն:</p>	<p>Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակի» ՀՈԱԿ, Գույքերի օտարման համար պետական լիազորմարմնի գործառույթը պատվիրակվել Երևանի քաղաքապետին:</p> <p>ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 11-ի N1357-Ն որոշմամբ գույքերի օտարման գործառույթները համակարգող և</p>	

			<p>պատասխանատու է Երևանի քաղաքապետը:</p> <p>ՀՀ կառավարությունը նախատեսում է 2023 թվականին Ասիական զարգացման բանկի հետ կնքել վարկային համաձայնագիր՝ Իսակով-Արշակունյաց ճանապարհա-հատվածի շինարարական աշխատանքների կառուցման համար: Սկիզբը՝ 2024թ., ավարտը՝ 2026թ.: 2024թ.՝ շինարարական աշխատանքների ընթացք, 2025թ.՝ շինարարական աշխատանքների ավարտ, 2026թ.՝ իրականացված շինարարական աշխատանքների թերությունների վերացման երաշխիքային ժամանակահատված և ավարտ: Ֆինանսավորումը՝ Ասիական զար-</p>	
--	--	--	--	--



				գացման բանկի հետ կնքված վարկային համաձայնագիր:	
106.	<p>Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասում մետրոպոլիտենի կայարանի կառուցում</p> <ul style="list-style-type: none"> <li>• նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտ,</li> <li>• շինարարական աշխատանքների անցկացման համար մրցութային գործընթացի մեկնարկ</li> </ul>	<p>Երևանում էլեկտրական հասարակական տրանսպորտի, էկոլոգիապես մաքուր, անվտանգ տրանսպորտային միջոցի զարգացմամբ քաղաքի շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցման ապահովում, կենտրոնի տրանսպորտային հոսքերի անարգել կազմակերպման համար բեռնաթափում, նաև քաղաքի վարչական շրջանների համաչափ զարգացման համար կարևոր խթան, դրանց գրավչության բարձրացմանն ուղղված քայլ, հնարավորինս ժամանակի կորստի կրճատմամբ շրջանները միմյանց կապող հնարավորություն:</p>	<p>Կատարվել են նախապատրաստական աշխատանքներ դեռևս 2021թ.:  Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասում մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի շրջանակներում 13.10.2021 թվականին հաղթող մասնակից է համարվել «Մետրոգիպրոտրանս» ռուսական ընկերությունը: ՆԵՔ-ԵՓՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով 09.11.2021թ. կնքվել էր պայմանագիր՝ առանց ֆինանսական միջոցների: «Քաղվածք Հայաստանի Հանրապետության կառավարության N17 նիստի» արձանագրությունից 28 ապրիլի 2022թ.: «Մետրոգիպրոտրանս» ընկերության կողմից ներկայացվել է ԵՔ-ԵՓՄԱՇՁԲ-22/1 ծածկագրով թիվ 1 համաձայնագիր և երաշխիքներ (գր. N16122-22 առ 14.06.2022թ.):2022թ. հուլիս ամսին տեղի է ունեցել «Մետրոգիպրոտրանս» ընկերության աշխատակիցների այցը Երևան՝ Աջափնյակ վ/շ-ի մետրոյի կառուցման աշխատանքների նպատակով: 2022 թվականի օգոստոսին «Մետրոգիպրոտրանս» ընկերության կողմից հանձնվել են նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման 1-ին փուլի արդյունքները՝ նախնական հաշվետվությունը, որտեղ ներկայացվել է սխեմատիկ երկու տարբերակներ, որից հետո ընթացքի մեջ է դրվել տարբերակների ուսումնասիրությունը մասնագիտական խմբի անդամների կողմից:</p>	<p>Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Գնումների վարչություն, Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն, Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն, Տրանսպորտի վարչություն, Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին, «Մետրոգիպրոտրանս» ընկերություն, ՆԵՔ-</p>	

		<p>մից: 2023 թվականի հունվարին նախատեսված էր տարբերակներից մեկի ընտրությունը և 2-րդ փուլի մեկնարկը, որի տևողությունը 90 օր է, և արդյունքում կներկայացվեր նախնական նախագիծը, ինչը կանցնի փորձաքննություն, որից հետո կմեկնարկի վերջնական նախագծի մշակման աշխատանքները: 06.02.2023թ. դրությամբ հանդիպում և տեխնիկական հարցերի շուրջ քննարկումներ են ընթացել ժամանած նախագծող կազմակերպության և տեղական մասնագետների հետ մետրոյի և կամրջի տեսակի նախընտրելի տարբերակների վերաբերյալ: 10.07.2023թ. ներկայացվել են բանկային երաշխիքները «Մետրոգիպրոտրանս» ընկերության կողմից, որի հիմքով կնքվել է 2-րդ փուլի մեկնարկի լրացուցիչ համաձայնագիրը, որի շրջանակներում կազմակերպվել են հանդիպումներ և ստացվել թույլտվություններ ազդեցության ենթարկվող տարածքում կոմունիկացիաների սեփականատերերից, ինչպես նաև գեոլոգիական հետազոտությունների նպատակով հորատման աշխատանքների տարածքներում գտնվող հողերի սեփականատերերի հետ: 3-րդ եռամսյակի առաջին տասնօրյակում նախատեսված է 2-րդ փուլի աշխատանքների հանձնումը: 4-րդ եռամսյակի ընթացքում իրականացվել են 3-րդ փուլի՝ վերջնական նախագծի մշակման աշխատանքները, որոնց նախնական տարբերակը հանձնվել է մասնագիտական խմբին փորձաքննությունների իրականացման և շահագրգիռ գերատեսչությունների դիտարկմանը: Հանձնված նախագծանախահաշվային փաստաթղթերի նախնական տարբերակի համար</p>	<p>ԵՓՄԱՇՁԲ-22/1 համաձայնագիր և երաշխիքներ Կատարման ժամկետը՝ նախագծային աշխատանքների համար 2024թ. 3-րդ եռամսյակ: Շինարարական աշխատանքների սկիզբը կնախատեսվի մոտավոր 2025թ. ին, իսկ ավարտը 2029թ. (կախված կապալառուի ընտրության մրցութային գործընթացից)</p>	
--	--	---	---	--

			«Մետրոգիպրոտրանս» ընկերությանը վճարվել է կանխավճար՝ մինչև փորձաքննությունների դրական եզրակացության ստացումը: 4-րդ եռամսյակի ընթացքում մշակվել և գնումների բաժնին է հանձնվել նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննության տեխնիկական առաջադրանքը և գնման հայտը՝ փորձաքննական ընկերության ընտրության բաց մրցույթ իրականացնելու նպատակով:		
107.	Քաղաքաշինական կադաստրային համակարգի ներդրում	Տարածքների զարգացման պլանավորման և կառավարման համար նորարարական տեխնոլոգիաներով՝ տեղեկատվական-վերլուծական կառավարման համակարգերի ներդրում: Այն հիմք է քաղաքաշինական քաղաքականության և տարածքային զարգացման ռազմավարության, քաղաքաշինական նախագծային փաստաթղթերի մշակման համար, անհրաժեշտ ելակետային տվյալների ամբողջական շրջանակի առկայություն, առանց որի անհնարին է ապահովել փաստաթղթի հավաստիությունը, արդիականությունը և զարգացման հեռանկարային ուղղությունների հիմնավորումները:	Երևան քաղաքի համար GIS-Աշխարհագրական տեղեկատվական համակարգի (USC/GIS) (Geographic Information System) ստեղծման ուղղությամբ պիլոտային փորձարկման աշխատանքներ են տարվել այն հետազայում ինտեգրված կադաստրի (գեոպորտալի) հետ փոխգործակցման նպատակով: Տվյալ ոլորտի շուկայում փորձ ունեցող առաջատար կազմակերպությունների հետ դիտարկվել են տարբերակներ արտադրանքի ֆունկցիոնալ հնարավորությունների և առկա պահանջներին համապատասխան լուծումներ գտնելու համար: Ապակենտրոնացված համագործակցություն էլ դը Ֆրանս շրջանի և Երևանի քաղաքապետարանի միջև Երևանի քաղաքային փոփոխությունների ծրագրի շրջանակներում (տեխնիկական առաքելության հաշվետվություն 2023թ. հունվարի 16-24): Հանդիպում-քննարկումներ են կայացել 09.03.2023թ. նշված հարցի վերաբերյալ՝ Քաղաքային պլանավորում/GIS- Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (USC/GIS) (Geographic Information System) ԵՏՀ-Երկրատեղեկատվական համակարգի մասին՝ համապատասխան մասնագետ-	«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ, Երևանի քաղաքապետարանի ստորաբաժնումներ: Նախատեսված է սկիզբը 2024թ. ծրագրով հաստատված Երևան քաղաքի ավագանու N47-Ա 26.12.2023թ որոշմամբ:	ՀՀ տարածքի քաղաքաշինական կադաստրի վարումը և կադաստրային ամփոփումը կատարում է քաղաքաշինական բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը: Պետական քաղաքաշինական կադաստրի վարումը և քաղաքաշինական գործունեության մոնիթորինգը կատարում է համայնքում համայնքի ղեկավարն, ամբողջ մարզի համար՝ մարզպետը:

			ների հետ, ներգրավելով Երևանի քաղաքապետարանի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնին: Նպատակն է քաղաքաշինական թվայնությունների գործընթացի ամբողջական իրականացումը առցանց համակարգի միջոցով/ ՀՀ կառավարության որոշման N1902-Լ 18.11.2021թ. որոշման հավելված 1 էջ 541/:		
108.	Հին Երևան պատմաճարտարապետական միջավայր	Կորցված և քանդված պատմության և մշակույթի հուշարձանների տեղափոխման եղանակով տարածքում վերստեղծել քաղաքաշինական գեղագիտական միջավայր՝ ճարտարապետական համալիր: ՀՀ վարչապետի 13.04.2022թ. հ. 384-Ա որոշմամբ ստեղծվել է քաղաքաշինական ծրագրերը համակարգող խորհուրդ, հաստատվել է դրա կազմը և աշխատակարգը: Տարածքում առկա է օտարման ենթակա 47 միավոր գույք:	ՀՀ վարչապետի 13.04.2022թ. հ. 384-Ա որոշմամբ ստեղծվել է քաղաքաշինական ծրագրերը համակարգող խորհուրդ: ՀՀ կառավարության 27.12.2018թ. հ. 1528-Ն «Երևան քաղաքի գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» որոշմամբ և դրա 24.11.2022թ. N1785-Ն փոփոխությամբ օտարման գործընթացի վերջնաժամկետը երկարաձգվել է 1 տարով և սահմանվել է 28.12.2023թ-ը.: ՀՀ կառավարության 29.08.2013թ. N945-Ն «ՀՀ կառավարության որոշումը Երևան քաղաքի գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածքների նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» /փոփոխված 01.06.2017թ. հ. 590-Ն որոշմամբ/: Ըստ ՀՀ փոխվարչապետի մոտ 2022թ. 23.11.2022թ.-ին կայացած՝ քաղաքաշինության ծրագրերը համակարգող խորհրդի առաջին նիստի արձանագրության N ՓՎ/123-2022 ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի կողմից ներկայացվել է «Հին	Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Տարածքը ձեռք բերող է «Ի ԷՄ ՍԻ» ՓԲԸ, Օտարման գործընթացի վերջնաժամկետն է 28.12.2023թ.: Տարածքը ձեռք բերողներ «Սերգե-Ազոպիգ Դեր-Սահագույան» ՍՊԸ, «Սթարլայն» ՍՊԸ գույքերի օտարումը ավարտել են և կառուցապատել տարածքը: Համաձայն կնքված գույքերի հանձնարարութ-	

		<p>Երևան» համալիրի կառուցապատման աշխատանքների մասին զեկույց 23.11.2022թ.-ին: Ներկայացնել համապատասխան տեղեկատվություն «Հին Երևան» համալիրի կառուցապատման նախագիծը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտամեթոդական խորհրդին ներկայացվելու վերաբերյալ: ՀՀ կառավարության 04.02.2021թ. հ.142-Լ «Տնտեսական արձագանքման ծրագիրը և գործողությունների պլանը հաստատելու մասին» որոշում կետ 4. «Հին Երևան» կառուցապատման ծրագրի իրագործում: Հողամաս N 1 (1696,79քմ)- «ՍԹԱՐԼԱՅՆ» ՍՊԸ ՇԻՆ. ԹՈՒՅԼՏ. 06.10.2022թ. N01/18-Դ-71337-1757 ավարտը՝ 19.07.2023թ. 18.01.2023թ., N01/18-Դ-107712-2 ավարտը՝ 18.01.2026թ. (ID-1162), 0-ական նիշից բարձր հարկայնության համար վճարումը դեռևս չի կատարվել.</p> <p>Հողամաս N 2 (1790,10քմ)-«ՍԵՐԳԵ-ԱԳՈՊԻԳ ԴԵՐ ՍԱՀԱԳՈՒՅԱՆ» ՍՊԸ ՇԻՆ. ԹՈՒՅԼՏ. 06.04.2018թ. N01/18-22731-303 ավարտը՝ 02.02.2019թ. մինչև 0-ական նիշը (ID-2186), առկա է քրեական վարույթ,</p> <p>Հողամաս N 3 (3282,64քմ)- «ՕԼԴ ՍԻԹԻ» ՓԲԸ (իրացնող «Ի ԷՄ ՍԻ» ՓԲԸ) -3 գույքի իրացման հարցը բաց է:</p> <p>Հողամաս N 4 (13148.81քմ)- «ՕԼԴ ՍԻԹԻ» ՓԲԸ (իրացնող «Ի ԷՄ ՍԻ» ՓԲԸ) ՇԻՆ. ԹՈՒՅԼՏ. 06.04.2018թ. N01/18-22731-303 ավարտը՝ 02.02.2019թ. մինչև 0-ական նիշը (ID-2186), առկա է քրեական վարույթ, 46 գույքի իրացման և երկու ինքնակամ շինության հարցը բաց է:</p>	<p>յան պայմանագրի իրականացվել է 13 գույքերի գնահատման աշխատանքները, սեփականատերերին արվել են գնային առաջարկներ, 2 գույքերի մասով կնքվել է օտարման պայմանագիր, 11 գույքերի մասով «Ի ԷՄ ՍԻ» ՓԲԸ կողմից օտարման հայց է ներկայացվել դատարան: Հունիսի 28-ն կնքվել է ևս մեկ հանձնարարության պայմանագիր թվով 33 գույքերի օտարման մասով: Իրականացվել է թվով 30 գույքերի գնահատման աշխատանքները, կատարվել է գնային առաջարկներ, վարվում են բանակցություններ:</p>	
--	--	--	--	--

			<p>Երևանի քաղաքապետի տեղակալ Ս.Մաչյանի անունից գրություն է ուղարկվել «Սթարլայն» ՍՊԸ տնօրեն Արմեն Մուրադյանին (պատշաճ կերպով կատարել 21.01.2013թ. կնքված պայմանագրով 7.8 կետով նախատեսված պարտավորությունները ամբողջ կազմով) (26.01.2023թ. NO4/12686-23):</p> <p>ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը կից գիտամեթադական խորհրդի արտագնա նիստում 29.03.2023թ. (նախագահող նախարար Ժ.Անդրեասյան) քննարկվել է «Հին Երևան» նախագիծը (Աբովյան փողոցից Քոչինյան փողոց ընկած հատված): Իրականացված քննարկումների և տեղի ունեցած քվեարկության արդյունքում նախագիծը որոշակի վերապահումներով արժանացել է հավանության:</p>		
109.	Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցում	<p>1. Երևան քաղաքի 33-րդ թաղամասի կառուցապատման ծրագրի շրջանակներում իրականացվող բազմաֆունկցիոնալ թաղամասի կառուցում: Ընթանում են առկա գույքերի իրացման, որոշ հատվածներում հողային և շինարարական աշխատանքներ:</p> <p>2. ՀՀ վարչապետի 13.04.2022թ. հ. 384-Ա որոշմամբ ստեղծվել է քաղաքաշինական ծրագրերը համակարգող խորհրդ, հաստատվել է դրա կազմը և աշխատակարգը:</p> <p>3. Ըստ կառուցապատողների կողմից ներկայացված բանավոր տեղեկատվության 08.08.2022թ. դրությամբ առկա է չօտարված մոտ 115 գույք+38 գույք Տիգրան Մեծ փողոցի շենքերից և ևս 46 գույք Խանջյան 7 հասցեի շենքից:</p>	<p>Երևանի 33 թաղամասի կառուցապատման սխեմայով Երևանի քաղաքապետարանի կողմից՝ համալիր փորձաքննություն անցած և հաստատված նախագծերի հիման վրա, 2022թ.-ին տրամադրվել են շինարարության թույլատվություններ թվով վեց հատվածների (լոտերի՝ (8,9,(2,4,5), 14,15,16) համար՝</p> <p>Լոտ 2,4,5- «ՍԻԹԻ ՍԵՆԹՐ ԴԻՎԵԼԸՓՄԵՆԹ» ՓԲԸ, «ԱԴԱՆԱ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ, «ԲԻԹԼԻՍ» ՍՊԸ 16.03.2022թ.,N01/18-22634-354, Լոտ 8- «ՋԻ ԷՄ ԴԵՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ, «ՏՐԱՊԻՉՈՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ 13.06.2022թ. N01/18-Դ-4311-978, 31.08.2022թ. N01/18-Դ-36644-1557, Լոտ 9- «ԱԿՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ 18.03.2022թ.,N01/18-Բ-288-404,</p>	<p>Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակի» ՀՈԱԿ</p> <p>Տարածքը ձեռք բերողներ են՝ «Սիթի Սենթր Դիվելոպմենթ» ՓԲԸ, «Վան Քոնսթրաքշն» ՍՊԸ և «ՋԻ ԷՄ ԴԵՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ, «Էրզրում Քոնսթրաքշն»</p>	

<p>Երևանի քաղաքապետարանի կողմից՝ համալիր փոճաքննություն անցած և հաստատված նախագծերի հիման վրա, տրվել են շին. թույլատվություններ՝ 13.06.2022թ-ին 8-րդ լոտում «Տրապիզոն Քոնսթրաքշն» և «ՋԻ ԷՄ ԴԵՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ-ին, 18.03.2022թ-ին 9-րդ լոտում «Ակն Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին, 16.03.2022թ-ին 2-րդ, 4-րդ և 5-րդ լոտերում «Ադանա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին, 18.08.2021թ-ին 15-րդ լոտում «Բայազետ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին:</p>	<p>Լոտ 14-«ԲԱԲԵՐԴ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ 29.08.2022թ. N01/18-Դ-56485-1530  Լոտ 15- «ԲԱՅԱԶԵՏ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ 18.08.2022թ. N01/18-Մ-11907  Լոտ 16- «ԷԼԻՏ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ 23.11.2022թ. N01/18-Դ-99877-2133, 2023թ. Լոտ 8 -«ՋԻ ԷՄ ԴԵՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ,  17.05.2023թ. N01/18-Դ-36975-745 «Ե» մասնաշենք ID 13057  Լոտ 7 և Լոտ 8 «ՈՒՐԻՄԱ ՔՈՆՍԹՐԱՔՇԵՆ» ՍՊԸ ԵՎ -«ՋԻ ԷՄ ԴԵՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ 20.12.2023թ. N01/18-Դ-145060-2697 «Բ» մասնաշենք  Լոտ 3, Լոտ 6, Լոտ 7 ԵՎ -«ՋԻ ԷՄ ԴԵՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ, «ՎԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇԵՆ» ՍՊԸ, «ՈՒՐԻՄԱ ՔՈՆՍԹՐԱՔՇԵՆ» ՍՊԸ 20.12.2023թ. N01/18-Դ-142589-2699 «Գ» մասնաշենք:  Ըստ ՀՀ փոխվարչապետի մոտ 2022 թվականի 23.11.2022թ.-ին կայացած՝ քաղաքաշինության ծրագրերը համակարգող խորհրդի առաջին նիստի արձանագրության N ՓՎ/123-2022 կազմակերպել քննարկում ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչների հետ՝ «Ֆիրդուսի» /33-րդ թաղամասում առկա խնդիրների առնչությամբ՝ պայմանագրերը կնքած, բայց բնակելի տարածքները չազատած բնակիչների և դատական նիստերի ուշացումների մասով և Քաղաքաշինության ծրագրերը համակարգող խորհրդի առաջիկա նիստին ներկայացնել առաջարկություններ առկա խնդիրներին լուծում տալու վերաբերյալ:</p>	<p>ՍՊԸ, «Բիթլիս Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Ադանա Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Բայազետ Քոնսթրաքշն» ՍՊԸ և «ՋԻ ԷՄ ԴԵՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ, «Ուրմիա Քոնսթրաքշն» ՍՊԸ և «ՋԻ ԷՄ ԴԵՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ, «Տրապիզոն Քոնսթրաքշն» ՍՊԸ և «ՋԻ ԷՄ ԴԵՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ, «Դիարբեքի Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Ակն Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Մանազկերտ Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Սասուն Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Ջեյթուն Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Բաբերդ Քոնսթրաքշն» ՍՊԸ և «Տարսոն Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Կարս Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Արդահան Քոնսթրաքշն» ՍՊԸ, «Իգդիր Քոնսթրաքշն» ՍՊԸ:</p>	
---	---	--	--

	<p>ՀՀ վարչապետի 13.04.2022թ. հ. 384-Ա որոշմամբ ստեղծվել է քաղաքաշինական ծրագրերը համակարգող խորհուրդ:  ՀՀ կառավարության N332-Ն 22.03.2018թ. «Երևան քաղաքի 33-րդ թաղամասի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» որոշման (փոփոխությամբ՝ N2089-Ն 29.12.2022թ. որոշման) օտարման գործընթացի վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2023 թվականի ապրիլի 16-ը:  Առկա է դեռևս չօտարված 72 գույք, որից 45 գույքի օտարման հայցով ձեռքբերող կազմակերպությունները դիմել են դատարան:  ՀՀ կառավարության 04.02.2021թ. հ.142-Լ «Տնտեսական արձագանքման ծրագիրը և գործողությունների պլանը հաստատելու մասին» որոշում (կետ 2. Երևան քաղաքի 33-րդ թաղամասի (Ֆիրդուսի) կառուցապատման ներդրումային ծրագրի ակտիվացում):</p>	<p>Սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետ է 16.04.2023թ. (բացառությամբ՝ N332-Ն որոշման հ.1 հավելվածի 14-րդ կետի 2-րդ ենթակետի 2-րդ սյունակում նշված տարածքի 01.09.2023թ., նշված ժամկետում նշված տարածքի սեփականատերերին գնային առաջարկներ չի կատարվել ձեռքբերողի կողմից, ինչի պատճառով նշված մասով՝ /Խանջյան 7 շենք/ կառավարության որոշումը համարվել է անվավեր):  Իրականացվել են գնային առաջարկներ: 01.01.2023թ. մինչ օրս կնքվել են 40 գույքերի օտարման պայմանագրեր:</p>	
--	---	---	--



				Ներկայումս տարածքում առկա թվով 72 չօտարված գույքեր, որոնցից թվով 45 գույքերի մասով հայց է ներկայացվել դատարան օտարման գործընթացը դատական կարգով լուծելու համար, 19 գույքի մասով որոշումը համարվել է անվավեր, 5 միավոր գույքեր չեն օտարվելու, իսկ 3 գույքերի մասով տվյալները ճշտվում են/:	
110.	Երևան քաղաքի Ամիրյան, Սարյան, Փ. Բուզանդի փողոցներով սահմանափակված տարածքի ներդրումային ծրագիր	ՀՀ կառավարության 31 օգոստոսի 2017 թվականի նիստի N 37-24 արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել «ՋԻ ԷՄ ԴԵՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ներդրումային ծրագրին: Ծրագրով առաջարկվել է հանրային գերակա շահ ճանաչել Ամիրյան, Սարյան և Բուզանդի փողոցներով պարպակված տարածքի նմատմամբ: Նախատեսվում է կառուցել մեկ բազմաֆունկցիոնալ շենք և մեկ հասարակական նշանակության շինություն:	ՀՀ կառավարության որոշում 31.08.2017թ. N37-24 «Կառուցապատման ներդրումային ծրագրին հավանություն տալու մասին»: ՀՀ կառավարության որոշում 31.08.2017թ. N1148-Ա «Հողամասի և անշարժ գույքի փոխանակության մասին»: ՀՀ կառավարության որոշում 29.07.2021թ. N1224-Ա «Երևանի քաղաքապետին լիազորություն վերապահելու մասին»: ՀՀ կառավարության որոշում 17.11.2022թ. N1749-Ն «Երևան քաղաքի Ամիրյան, Սարյան, Փ. Բուզանդի փողոցներով սահմանափակված տարածքի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին»: Երևանի քաղաքապետի որոշում 14.12.2022թ. N4417-Ա «ՀՀ	Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Օտարվող սեփականության ձեռք բերող է «ՋԻ ԷՄ ԴԵՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ, սեփականության օտարման	

		<p>կառավարության 2022թվականի նոյեմբերի 17-ի N1749-Ն որոշման կատարումն ապահովող միջոցառումների մասին»: ՃՀԱ- 23.10.2017թ. N01/18-07/2-60249-711 բազմաբնակարան շենքի կառուցման, «ՋԻ ԷՄ ԴԵՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ-ին, Ամիրյան փող. հ.26/4 Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի և Մուշեղ Իշխանի անվան հ.5 հիմնական դպրոցի միջանկյալ տարածքում (Բնակելի շենքը նախագծել 2 ստորգետնյա 19 վերգետնյա առավելագույն բարձրությունը 66մ):</p> <p>Շին թույլտվություն-01.12.2017թ. N01/18-Ա-8367-1184 (ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/2973/05/19 վարչական գործով 26.08.2019թ. որոշմամբ ընդունվել է վարույթ 01.12.2017թ. տրված հ.01/18-Ա-8367-1184 շինարարության թույլտվությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին:01.12.2017թ. տրված հ.01/18-Ա-8367-1184 շինարարության թույլտվությունը կասեցված է:)</p> <p>Ավարտական ակտ 10.06.2019թ. N01/19-19/49581 (ID-1442 ):</p> <p>Պայմանագիր՝ 27.06.2021թ.(Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի/հանդես է գալիս ՀՀ կառավարության 29.07.2021թ. N1224-Ա որոշման հիման վրա և «ՋԻ ԷՄ ԴԵՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ միջև):</p> <p>Երևանի քաղաքապետի 14.12.2022թ. N4417-Ա որոշման հիման վրա թողարկվել է հողամասի հատակագիծ ձեռք բերողի «ՋԻ ԷՄ ԴԵՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ-ի անունով N65-2023թ. 27.02.2023թ., S=4090.29քմ, ելք է կատարվել 10.03.2023թ.:</p> <p>ՃՀԱ- 02.02.2023թ. N01/18-07/2-Դ-128560-31 (ID-12656): բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր, «ՋԻ ԷՄ ԴԵՎԵԼՈՓԵՐ» ՍՊԸ-ին,</p>	<p>գործընթացն սկսելու վերջնական ժամկետը 2024 թվականի հունվարի 1-ն է: Նկարագրության արձանագրությունների կազմման վերջնաժամկետ է 2023թ. մարտի 17-ը:</p>	
--	--	--	--	--

			Ամիրյան, Սարյան, Բուզանդ փողոցներով սահմանազատված տարածք: «Ա» մասնաշենք մինչև 18 հարկ, «Բ» առավելագույն բարձրությունը 9.5մ: Քանդման թույլտվություն 07.14.2023թ. N01/18-Դ-28763-25 ավարտը 07.07.2023թ:		
111.	Երևան քաղաքում Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության նոր մարզադպրոցի կառուցում	Երևան քաղաքում առողջ ապրելակերպի խթանման, մարզական ոլորտի զարգացման, սպորտային գործառույթների կազմակերպման պայմանների բարելավմամբ պայմանավորված՝ «Հրազդան» մարզադաշտի մոտ (Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի բարձունքի ստորոտում, Հրազդանի ձորում գտնվող մարզական գոտու «Հրազդան» մարզադաշտին հարակից՝ հյուսիսարևմտյան հատվածում), սպորտային գոտին զարգացնելով, նույն գործառնական նշանակությամբ նոր մարզադպրոցի կառուցում:	Երևանի քաղաքապետի N1939-Ա 25.05.2022թ. որոշում «Երևան քաղաքում Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության նոր մարզադպրոցի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և կառուցման աշխատանքների կազմակերպական միջոցառումների իրականացման մասին» Հայտարարվել է նախագծային աշխատանքների կատարման մրցույթ: Մրցույթը կայացել է: Աշխատանքների կատարման պայմանագիր ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-22/20 առ 29/07/22թ.: Շահել է «Երևաննախագիծ» ՓԲԸ-ը: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 19.11.2022թ. NԳԱ//31323-2022 գրությամբ առաջարկվել է կատարել Հրազդանի կիրճ թիվ 4 հասցեում «Հրազդան մարզահամալիր» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 3.9525հա հողամասի բաժանում գույքային միավորների՝ առանձնացնելով 1.5509հա հատվածը մարզադպրոցի կառուցման նպատակով: ՀՀ կառավարության 30.03.2023թ. N402-Ն «Որպես նվիրատվություն գույք ընդունելու, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին ամրացնելու և Երևան համայնքին նվիրաբերելու մասին» որոշում:	Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակի» ՀՈԱԿ Հողամասի ձևակերպման հետ կապված աշխատանքների պատասխանատուները (ՀՀ ՏԿԵ նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե, Երևան համայնք, «Հրազդան մարզահամալիր» ՓԲԸ) և ժամկետներն ըստ՝ ՀՀ կառավարության 30.03.2023թ. N402-Ն որոշման 15509քմ հողամասը սեփականության իրավունքով նվիրաբերվել է	

			<p>Հրազդանի կիրճ հ.4 հասցեում գտնվող 15509քմ հողամասը Երևան համայնքին նվիրաբերվել է «Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության նոր մարզաբազայի կառուցման նպատակով:</p> <ol style="list-style-type: none"> <li>1) Եռամսյա ժամկետում պայմանագրի կնքում և գույքի հանձնման-ընդունման աշխատանքներ:</li> <li>2) Նոտարական վավերացում և պետական գրանցում:</li> <li>3) Երևան համայնքի հետ հողամասի նվիրաբերության պայմանագրի կնքում, դրա պետական գրանցում համայնքի միջոցների հաշվին:</li> </ol> <p>Երևան համայնքի հետ հողամասի հանձնման-ընդունման աշխատանքներ:</p>	<p>Երևան համայնքին: Երևաննախագիծ» ՓԲ ընկերության հետ կնքվել է նախագծանախահ աշվային փաստաթղթերի ձեռքբերման գնման պայմանագիր: Պայմանագրով ժամկետ է սահմանվել 2024թ. հունվարի 15-ը, որը հնարավոր է երկարաձգվի մինչև մարտի 15-ը: 08.01.2024թ. ՇՄԱԿ 1-ին լսումը տեղի է ունեցել: Նախատեսված է շարունակությունը 2024թ.-ի ծրագրով՝ հաստատված Երևան քաղաքի ավագանու N47-Ա 26.12.2023թ որոշմամբ:</p>	
112.	Երևան քաղաքի Կասկադ համալիրի տարածքում թանգարանի և հարակից հատվածի կառուցապատման ներդրումային ծրագիր	Կասկադ ճարտարապետական-կոթողային համալիրը հասցնել ավարտուն տեսքի: Կասկադ-համալիրով քաղաքի հյուսիսային և կենտրոնական հատվածները միմյանց կապել՝ համալիրն ամբողջական տեսքի բերելու անհրաժեշտություն:	<p>Երևանի քաղաքապետարանում տեղի են ունեցել Կասկադ համալիրի ծրագրի հայեցակարգի կազմավորման հարցերի վերաբերյալ քննարկումներ:</p> <p>«Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N625-Ա «Գույքը որպես նվիրաբերություն</p>	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և	

		<p>ընդունելու մասին» որոշման 1-ի կետով որպես նվիրաբերություն ընդունել է «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամի սեփականությունը հանդիսացող Երևանի Կասկադ համալիրի զբաղեցրած հողամասի չկառուցապատված մասը: Երևան քաղաքի ավագանու որոշման կատարման ապահովման գործընթացով՝ նվիրաբերության պայմանագրի նախագծի կազմման ուղղությամբ նախնական աշխատանքներ են տարվել Երևանի քաղաքապետի N1576-Ա 19.06.2023թ. «Երևանի քաղաքապետի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի Հ.4385-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու, Երևանի քաղաքապետի 2013 թվականի դեկտեմբերի 11-ի Հ.6283-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու, Թամանյան փողոցի Հ.10 հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին» որոշում և դրա հիման վրա թողարկվել է 131911.10քմ մակերեսով հողամասի հատակագիծ N157-23թ. 21.06.2023թ. (նպատակային նշանակությունը-կատեգորիան՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ օգտագործման նպատակը հասարակական կառուցապատման): Նվիրաբերության պայմանագրի ձևակերպման նպատակով 131911.10քմ մակերեսով հողամաս գույքային միավորների բաժանման հատակագծեր են թողարկվել 17.11.2023թ.՝ 1.Ալ.Թամանյան հ.10/1 հասցե-S=115306.49քմ, 2.Արտեմի Այվազյան հ.2/1-S=583.76քմ, 3.Ալ.Թամանյան հ.10 հասցե-S=16020.92քմ: Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամը պատրաստականություն է</p>	<p>քաղաքաշինության վարչություն, Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն, Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին: Նախատեսված է 2024թ. ծրագրով հաստատված Երևան քաղաքի ավագանու N47-Ա 26.12.2023թ որոշմամբ:</p>	
--	--	---	--	--

			<p>հայտնել ք. Երևան, Թամանյան փողոց հ.10/1 հասցեի գույքը (Ըստ 08122023-01-0043 վկայականի տվյալների՝ 11.530649հա հողամաս և 50քմ մակերեսով պոմպակայան) նվիրաբերել Երևան համայնքին: Այդ նպատակով հիմ-նադրամի կողմից ներկայացվել է գույքի նվիրաբերության մասին պայմանագրի նախագիծը՝ քննարկելու և առաջարկություններ ներկայացնելու համար (Երևանի քաղաքապետարանի ԱԳԿ վարչության պետ Վ.Խաչատրյանի զեկուցագիր 18.12.2023թ.ՆՆ/69439-23):Նախագիծը շրջանառվության մեջ է կարծիքներ ստանալու նպատակով 11.01.2024թ.:</p>		
113.	Երևան քաղաքում նոր ճոպանուղու կառուցման ներդրումային ծրագիր	Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի արդիականացման, ինչպես նաև քաղաքում զբոսաշրջության զարգացման նպատակով նախատեսվում է կառուցել նոր ճոպանուղի՝ Աջափնյակ վարչական շրջանից դեպի Կենտրոն վարչական շրջան:Նախատեսվող ճոպանուղու երկարությունը կազմում է մոտ 2075 մետր:	Երևան քաղաքում նոր ճոպանուղու կառուցման ներդրումային ծրագիր է քննարկվել և Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի արդիականացման, ինչպես նաև քաղաքում զբոսաշրջության զարգացման նպատակով նախատեսվում է նոր ճոպանուղի՝ Աջափնյակ վարչական շրջանից դեպի Կենտրոն վարչական շրջան: Նախատեսվող ճոպանուղու երկարությունը կազմում է մոտ 2075 մետր: Երևանի քաղաքապետարանի աշխ. Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության կողմից համակարգվող հարց (Մանկական երկաթուղու հետ կապված առաջարկված ներդրումային ծրագրի հետ առնչվող տարբերակը «Ռիդ» ՍՊԸ գր. N106147-22 առ 07.123.2022թ.): ՀՀ էկոնոմիկայի նախարարության 15.02.2023թ. N01/2629-2023 գրությամբ (գրանցված 15.02.2013թ. N11117-23)՝ կապված ՀՀ Երևան քաղաքում «Մանկական Երկաթուղի» այգու արդիականացման և ընդլայնման ներդրումային ծրագրի և	Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն, Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն, Տրանսպորտի վարչություն,	

			<p>Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում ճոպանուղու կառուցման իրականացման նպատակով «Մանկական Երկաթուղի» ՍՊԸ առանց մրցույթի հողամասեր տրամադրելու և գույքն ուղղակի վաճառքով օտարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով կար առաջարկ ճոպանուղու իրականացման համար:</p>	<p>Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին: Նախատեսված է 2024թ.-ի ծրագրով հաստատված Երևան քաղաքի ավագանու N47-Ա 26.12.2023թ որոշմամբ:</p>	
114.	<p>Երևանի մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցում «Սասուցի Դավիթ» և «Ջորավար Անդրանիկ» մետրոյի կայարանների միջև՝ (Քրիստափորի փողոցի մոտակայքում)</p> <ul style="list-style-type: none"> <li>• նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտ,</li> <li>• շինարարական աշխատանքների անցկացման համար մրցութային գործընթաց, կառուցման մեկնարկ</li> </ul>	<p>Երևանում էլեկտրական հասարակական տրանսպորտի, էկոլոգիապես մաքուր, անվտանգ տրանսպորտային միջոցի մետրոպոլիտենի գոյություն ունեցող ցանցի զարգացման այլընտրանքային հնարավորություն: Էսքիզային նախագիծը ենթադրում է «Սասուցի Դավիթ» և «Ջորավար Անդրանիկ» կանգառների միջև հեռավորության նվազեցում, տրանսպորտային խնդիրների թեթևացում, ավտոմեքենաների կրճատում, մարդկային հոսքերի կառավարում, հասանելիության հեշտացում, մետրոյի զարգացում, շրջակա միջավայրի տնտեսական էֆեկտ և շահութաբերություն:</p>	<p>Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են Կենտրոն վարչական շրջանում նոր կայարանի («Սասուցի Դավիթ» և «Ջորավար Անդրանիկ» մետրոյի կայարանների միջև՝ (Քրիստափորի փողոցի մոտակայքում)) նախագծային լուծումների դիտարկումը: 2019թ. տվյալներից՝ հարցը քննարկելով «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ում տնօրենի Ժ/պ Գ.Ավետիսյանի կողմից ուղարկվել է քաղաքապետարան պատասխան գրություն 01.11.2019թ. հ.39/02-11-499: Առկա է «Տարբերակ» ճարտարապետական արվեստանոցի կողմից ներկայացված էսքիզային առաջարկը: Համապատասխան ստորաբաժանումներից հավաքագրվում են ելակետային նյութեր տեխնիկական առաջադրանքի կազմման նպատակով: Նախապատրաստվում է տեխնիկական առաջադրանք, որի հիման վրա ընթանալու են նախագծային աշխատանքները: Հանդիպում է տեղի ունեցել 24.03.2023թ. նախագծային խնդիրների մասով՝ մետրոպոլիտենի աշխատակիցների հետ շահագործմանը</p>	<p>Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն, Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն, Տրանսպորտի վարչություն, Քաղաքաշինական գործունեության հատուկ</p>	

			վերաբերվող տեխնիկական հարցերով և նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով ընկերության ընտրության գնման գործընթացի տեխնիկական առաջադրանքի վերջնականացման ուղղությամբ, որին հաջորդելու է պատասխանատու ստորաբաժանման որոշումը և գնման գործընթացի մեկնարկը: Երևանի քաղաքապետի որոշմամբ ձևավորվել է պատասխանատու ստորաբաժանում: Քննարկվում է մետրոյի կայարանի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար իրականացվող մրցույթի փուլերը և տեսակը, տեխնիկական առաջադրանքի և գնման հայտի բաղադրիչները:	կարգավորման ծրագրերի բաժին: Նախագծային աշխատանքների մրցույթի իրականացման ժամկետ՝ 2024թ. երկրորդ եռամսյակ: Նախատեսված է 2024թ.-ի ծրագրով հաստատված Երևան քաղաքի ավագանու N47-Ա 26.12.2023թ որոշմամբ:	
115.	Երևան քաղաքում երկու ստորգետնյա ավտոկայանատեղերի կազմակերպման ծրագիր	Երևանի առկա հասարակական, խոշոր վարչական, բազմագործառույթ օբյեկտներով խիտ կառուցապատված միջավայրում կայանատեղերի կազմակերպման քաղաքաշինական կարևորագույն պրոբլեմի՝ քաղաքային միջավայրում տրանսպորտային երթևեկության կազմակերպման պայմանների բարելավման (փողոցների թողունակության բարձրացման) և ավտոտրանսպորտային միջոցների կայանման ու պահպանման ապահովման խնդիրների լուծում, այդպիսով բարենպաստ կենսամիջավայրի կազմակերպում, բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավում, հետիոտնային ուղիների ազատագրում և անվտանգ շարժման կազմակերպում, գոտու բարեկարգմամբ սանիտարահիգիենիկ պայմանների բարելավում, արտանետումների կանխարգելում, զբոսաշրջության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում և այլն:	Համաձայն հաստատված ժամանակացույցի նախատեսված էր 2-րդ եռամսյակից Երևան քաղաքի Ստ.Շահումյանի անվան հրապարակի և իր հարակից տարածքներով հասարակական բազմագործառույթ խիտ կառուցապատված գոտում՝ մի տրանսպորտային հանգույցում, որտեղ հատվում են Երևան քաղաքի Մ. Խորենացի, Վ.Սարգսյան, Բեյրութի, Իտալիայի, Դեղատան փողոցները, ստորգետնյա ավտոկայանատեղի կառուցման համար դեռևս նախորդ տարիներին «ԿԱՄԱՐ ԲԻՉՆԵՍ ՍԵՆԹԵՐ» ՓԲԸ-ի կողմից Երևանի քաղաքապետարան ներկայացվել էր ներդրումային առաջարկ, որը քննարկվել էր և համարվել իրատեսական:	Շահումյան հրապարակի ստորգետնյա ավտոկայանատեղի համար նախատեսվող ներդրումային ծրագրի հետ կապված «ԿԱՄԱՐ ԲԻՉՆԵՍ ՍԵՆԹԵՐ» ՓԲԸ-ն պատրաստականություն է հայտնել ծրագրի իրականացման վերաբերյալ:	



116.	Քաղաքային կենցաղային թափոնների կառավարման ծրագիր	Նուբարաշենի խճուղուն հարող և Աջափնյակի աղբավայրերի փակում և նոր քաղաքային աղբավայրի կառուցում: Նախատեսվում է մեկնարկել Նուբարաշենի խճուղուն հարող առկա աղբավայրին հարակից տարածքում նոր աղբավայրի կառուցման ծրագիրը:	Ծրագրի շինարարական աշխատանքների իրականացման 2022թ. մրցույթը չեղարկվել է: ՎՋԵԲ-ի կողմից վարձվել է խորհրդատու, որն այժմ իրականացնում է Ծրագրի տեխնիկատնտեսական հիմնավորման թարմացման գնահատում: Գնահատման հաշվետվությունը և նախընտրելի տարբերակը ուղարկվել է ՀՀ կառավարություն: Ներկայումս ընթանում է վարկային և դրմաշնորհային համաձայնագրերի երկարաձգման գործընթաց: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Եվրոմիության աջակցությամբ նախատեսվում է Երևան քաղաքում կառուցել ԵՄ չափանիշներին համապատասխան սանիտարական աղբավայր, փակել Երևանի գործող աղբավայրը:	Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ	
117.	Քաղաքային արտաքին լուսավորություն	28 փողոցներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները: Առկա էներգատար լուսատուները փոխարինել խնայող LED տիպի լուսատուներով, փոխել/ամրացնել լուսավորության հենասյուները, փոխել լուսավորության հենասյուների բարձակները, տեղադրել ստորգետնյա հաղորդողիներ՝ պլաստիկ խողովակաշարերով, տեղադրել լուսավորության համակարգի նոր մալուխներ՝ ստորգետնյա հաղորդողիներում ներդնել լուսավորության ցանցի կառավարման համակարգ:	Շինարարական աշխատանքներն ընթացքում են: Պայմանագրի իրականացման ժամկետը երկարացվել է մինչև 2023 թվականի նոյեմբերի 21-ը: ՎՋԵԲ, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերություն (E5P): Ներկա դրությամբ, աշխատանքներն իրականացվում են Երևան քաղաքի Մյաննիկյան պողոտայում, Աճառյան և Ամիրյան փողոցներում: Ի սկզբանե ծրագրում ներառված չեն եղել օպերատորների, լուսացույցերի, տրանսպորտային միջոցների կայանման տեսալուսանկարահանող սարքերի, ճանապարհային ոստիկանության տեսախցիկների համար նախատեսված հավելյալ աշխատանքեր, որոնք ավելացվել են նախագծում համապատասխանեցնելով շահագրգիռ կողմերի հետ, որն էլ իր հերթին ավելացրել է աշխատանքների ծավալը և միևնույն	Պատվիրատու «Երքաղլույս» ՓԲԸ, Կապալառու ONNINEN OY Ընկերություն, Լուսադիոդային (ԼԵԴ) լուսավորության համակարգի մատակարարումը և տեղադրումը Երևանում ԵՐՎԼԵԴ/1 Պայմանագիրը կնքվել է 2019թ. հունվարի 11-ին:	

			<p>ժամանակ իր հետ բերել նոր բազում խնդիրներ կապված ստորգետնյա կոմունիկացիաների հետ, տեղի են ունեցել էական աշխատանքային պայմանների փոփոխություններ և ծրագիրը կատարելու համար ևս անհրաժեշտ են փոփոխություններ:</p>		
118.	<p>Երևանի էներգաարդյունավետության ծրագիր</p>	<p>15 մանկապարտեզներում նախատեսվում է ամբողջապես վերակառուցել մանկապարտեզները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• առկա էներգատար լուսատուները փոխարինել խնայող LED տիպի լուսատուներով,</li> <li>• տեղադրել օդափոխման համակարգ</li> <li>• փոխել ջուր/կոյուղու համակարգը</li> <li>• տեղադրել ջեռուցման նոր համակարգ</li> <li>• փոխել էլեկտրահաղորդման գծերը</li> <li>• տեղադրել արևային վահանակներ</li> <li>• իրականացնել սեյսմիկ ամրացում</li> <li>• ներքին հարդարում, և այլն</li> </ul> <p>35 մանկապարտեզներում նախատեսվում է իրականացնել բացառապես էներգախնայողությամբ միտված միջոցառումներ:</p>	<p>15 մանկապարտեզներից 14-ում համապատասխան պայմանագրերը ստորագրված են: Եվս մեկի մրցույթը նախատեսվում է հայտարարել առաջիկայում: Թվով 10 մանկապարտեզներում շինարարական աշխատանքներն ավարտվել են: Բացի վերոգրյալից, 35 մանկապարտեզներում նախատեսված է իրականացնել միայն էներգախնայող միջոցառումներ, որի պայմանագիրը ստորագրվել է Երևանի քաղաքապետարանի և Արհովշին ՍՊԸ-ի միջև 2023 թվականի հունվարի 31-ին:</p>	<p>Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Շինարարության և բարեկարգման վարչություն</p>	
119.	<p>Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի կառուցում (Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատված)</p>	<p>Նախատեսվում է կառուցել Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածը: Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատված – 9.4 կմ</p>	<p>Բաբաջանյան-Աշտարակ շինարարական աշխատանքներն ընթացքում են: Աշխատանքները նախատեսվում է ավարտել 2023 թ. 4-րդ եռամսյակում: Բաբաջանյան-Աշտարակ Շին. Թույլտվություն 20.06.2023թ. հ.01/18-Դ-67379-1025 ժամկետը 6 ամսով- 20.12.2023թ. 23.08.2023թ. հ.01/18-Ն/41648-1664 ժամկետը 5 ամսով-23.01.2024թ. Ա. Բաբաջանյան փողոցի 1 կմ հատվածի շինարարական աշխատանքներն ավարտվել են:</p>	<p>Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ: Ճանապարհահատվածի շինարարական</p>	

			Շին. Թույլտվություն 13.09.2022թ. հ.01/18-Դ-53882-1635 ժամկետը 2 տարի մեկ ամսով-13.10.2024թ, 03.07.2023թ. հ.01/18-Դ-34346-1101 ժամկետը 03.11.2024թ.:	աշխատանքներն ավարտվել են:	
120.	Շիրակ փողոցի հարևանությամբ ավտոբուսների հավաքակայանի կառուցում	Նախատեսվում է Շիրակ փողոցի հարևանությամբ կառուցել ավտոբուսների հավաքակայան նոր ձեռք բերվող ավտոբուսների կայանման, լիցքավորման և սպասարկման համար:	«Կառավարության որոշում N181-Ն 17.02.2022թ. «Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի փողոցի և Արշակունյաց պողոտայի հատման վայրի հետնամասում գտնվող տարածքում առկա գույքերի նախնական ուսումնասիրման մասին»:	Շիրակի ավտոբուսային հավաքակայանի կառուցումը որևէ վարկային համաձայնագրով նախատեսված չէ:	
121.	Երևանը Ջվարթնոց օդանավակայանին կապող այլընտանքային ճանապարհ	Բաբաջանյան-Աշտարակ ճ/հ-ից դեպի Ջվարթնոց օդանավակայան նոր ճանապարհի կառուցում:	2024-2028թթ. հնգամյա և 2024թ. տարեկան ծրագրերում ընդգրկված է տվյալ աշխատանքը:	Ջվարթնոց օդանավակայանին կապող այլընտանքային ճանապարհի կառուցումը որևէ վարկային համաձայնագրով նախատեսված չէ: Նախատեսված է սկիզբը 2024թ. ծրագրով հաստատված Երևան քաղաքի ավագանու N47-Ա 26.12.2023թ որոշմամբ:	
322.	<p>Նոր Նորք վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում</p>	<p>Համապատասխան մասնագետների կողմից կկազմակերպվի և կիրականացվի տնային այցելություններ, որոնց արդյունքում գնահատված սոցիալական կարիքի հիման վրա կկազմվեն անհատական սոցիալական ծրագրեր և կտրամադրվի անհրաժեշտ սոցիալական աջակցություն: Հիշատակի և տոնական օրերին իրականացվող միջոցառումների շնորհիվ կարժևորվեն թիրախ խմբերում ընդգրկված անձիք:</p>	<p>ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/197-1 Թվով 73 ընտանիքի տրամադրվել է սրբիչների հավաքածու:</p> <p>ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/81-1 Թվով 4 աջակցության կարիք ունեցող ընտանիքի թվով 4 դպրոցահասակ երեխաներին տրամադրվել է դպրոցական պայուսակ՝ գրենական պիտույքներով:</p> <p>ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/81 Թվով 216 աջակցության կարիք ունեցող ընտանիքի թվով 292 դպրոցահասակ երեխաներին տրամադրվել է դպրոցական պայուսակ՝ գրենական պիտույքներով:</p> <p>ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/65-2 Թվով 27 աջակցության կարիք ունեցող ընտանիքի երեխաներին տրամադրվել է 35 մարզական հագուստ:</p> <p>ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/65-1 Թվով 98 աջակցության կարիք ունեցող ընտանիքի տրամադրվել է անկողնային հավաքածու:</p> <p>ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/42-1 Թվով 30 սոցիալական աջակցության կարիք ունեցող անձի համար կազմակերպվել է էքսկուրսիա դեպի քաղաք Գյումրի: Թվով 30 սոցիալական աջակցության կարիք ունեցող անձի համար</p>	<p>«ԱՁ Կարեն Սարգսյան» 31.08.2022թ.</p> <p>«Հայկ և Նարեկ ՍՊԸ» 20.08.2022թ.</p> <p>«ԱՁ ԼՈՒՍԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ» 21.04.2023թ.</p> <p>«Աշան-Արմ» ՍՊԸ 26.04.2023թ.</p> <p>«Պրովիզ» ՍՊԸ 26.04.2023թ.</p> <p>«ՊԵՅՅՈ» ՍՊԸ 28.03.2023թ.</p> <p>«ԱՁ ԼՈՒՍԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ»</p>	<p>Բոլոր ծրագրերը պատշաճ իրականացվել են</p>
------	---	--	--	---	---



			կազմակերպվել է էքսկուրսիա դեպի Նորավանք: Թվով 24 սոցիալական աջակցության կարիք ունցող անձի համար կազմակերպվել է էքսկուրսիա դեպի Հաղարծին-Գոշավանք:  ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/86 Թվով 25 սոցիալական աջակցության կարիք ունցող անձի համար կազմակերպվել է էքսկուրսիա դեպի Գառնի-Գեղարդ: Թվով 25 սոցիալական աջակցության կարիք ունցող տարեցի համար կազմակերպվել է էքսկուրսիա դեպի Սաղմոսավանք:	23.06.2023թ.	
<b>ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ</b>					
323.	Ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգում և պահանում	Նախատեսված է 15070 քմ ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում: Աշխատանքները ներառում են վնասված, վթարված, ձևախախտված ծածկի քանդում, առաջացած շին. աղբի բարձում, տեղափոխում (թափոնատեղի), խճե հիմքի իրականացում (մինչև 10%) և 4սմ ասֆալտ-բետոնե ծածկի իրականացում: Աշխատանքները ներառում են դիտահորերի և անձրևոսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում:	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կազմվել է մրցութային փաթեթ, ներկայացվել աշխատակազմի գնումների վարչություն և կնքվել է պայմանագիր՝ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/57 ծածկագրով:	«ԵՂՆԻԿԻՊԵՍ» ՍՊԸ 30.03.2023- 30.11.2023թթ.	
324.	Եզրաքարերի վերանորոգում	Նախատեսված է 3050 գծմ եզրաքարերի փոխարինում	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կազմվել է մրցութային փաթեթ, ներկայացվել աշխատակազմի գնումների վարչություն և կնքվել է պայմանագիր՝ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/58 ծածկագրով:	«ԻՆԳՐԱԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ 06.04.2023- 30.11.2023թթ.	
325.	Հենապատերի վերանորոգում	Նախատեսված է թվով 5 հենապատի հիմնանորոգման և կառուցման աշխատանքներ:	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կազմվել է մրցութային փաթեթ, ներկայացվել աշխատակազմի գնումների		

			<p>վարչություն և կնքվել թվով 3 պայմանագիր և իրականացվել հետևյալ աշխատանքները՝</p> <p>ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/175 Նորք-Մարաշ վարչական շրջանի թիվ 121 և 124 մանկապրտեզների պարսպի կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքներ:</p> <p>ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/133 Նորք-Մարաշ վարչական շրջանի հիշատակի պուրակի հենապատի կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքներ:</p> <p>ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/306 Նորք-Մարաշ վարչական շրջանի Ս. Խանզադյան փողոցի արգելապատնեշի կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքներ:</p>	<p>«ԱՏԱՇԻՆ» ՍՊԸ 14.07.2023- 30.11.2023թթ.</p> <p>«ՏՈՆՈՅԱՆ»ՍՊԸ 16.06.2023- 30.11.2023թթ.</p> <p>«ՀԱՅՇԻՆ» ՍՊԸ 27.11.2023- 30.11.2023թթ.</p>	
326.	Բակային տարածքների բարեկարգում և վերանորոգում	<p>Նախատեսված է բակային տարածքների հիմնանորոգման և կառուցման աշխատանքներ բակերում մայթերի եզրաքարերի վերանորոգում, նստարանների, զրուցատաղավարների, աղբամանների տեղադրում: Ծրագիրը ներառում է նաև երեխաների համար խաղահրապարակներում սպորտային մարզագույքի, մանկական խաղերի տեղադրում, հնացած և վնասված խաղերի վերանորոգում և նորերով փոխարինում: Բակերն ավելի գեղեցիկ ու հարմարավետ դարձնելու նպատակով կստեղծվեն նոր սիգամարգեր, կիրականացվի ծառատունկ, ծաղկապատում, ջրագծերի վերականգնում:</p>	<p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կազմվել է մրցութային փաթեթ, ներկայացվել աշխատակազմի գնումների վարչություն և կնքվել թվով 1 պայմանագիր՝</p> <p>ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/73 Նորք-Մարաշ վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների ընթացիկ նորոգման և պահպանման աշխատանքներ:</p>	<p>«ՈՒՌԲԱՆ ՊԼԱՆԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ 28.04.2023- 25.12.2023թթ.</p>	

327.	Ոռոգման ցանցի կառուցման և վերանորոգման աշխատանքներ	Ըստ ծրագրի նախատեսվում է Նորք-Մարաշ վարչական շրջանի փողոցներում անհրաժեշտ ոռոգման ցանցի հիմնանորոգում՝ ընդամենը 650զժմ ծավալով, հասարարական հանգստի վայրերի /այգիների/ և խաղահրապարակների կանաչապատ տարածքների խնամք և պահպանում:	<p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կազմվել է մրցութային փաթեթ, ներկայացվել աշխատակազմի գնումների վարչություն և կնքվել թվով 2 պայմանագիր՝</p> <p>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/121 Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան-Ա. Արմենակյան փողոցների խաչմերուկից մինչև Բուժաշխատողների փողոց ոռոգման ցանցի կառուցման աշխատանքներ</p> <p>ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/133 Նորք-Մարաշ վարչական շրջանի հիշատակի պուրակի հենապատի կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքներ</p>	<p>«ԷԼՇԻՆ» ՍՊԸ 23.08.2023- 20.04.2024թթ.</p> <p>«ՅԵՆՏՈՒԱ ԿՈՒԼ» ՍՊԸ 29.12.2023- 30.06.2024թթ.</p>	
328.	Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ	Նախատեսված է իրականացնել Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածում անհրաժեշտ Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ:	<p>Արտաքին լուսավորության ցանցի կառուցման նպատակով «ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲԸ-ի հետ կնքվել թվով 2 պայմանագիր և կատարվել հետևյալ աշխատանքները՝</p> <p>«ԵՀՆՄՎՇ-23/01» «Արտաքին լուսավորության ցանցի կառուցում՝ Նորք 11-րդ փողոց 27/5 հասցեից դեպի 13-րդ փողոց միացնող հատված» «Արտաքին լուսավորության ցանցի կառուցում՝ Օհան Դուրյան փողոց հայ փոստի դիմացի հատված:</p> <p>«ԵՀՆՄՎՇ-23/02» «Արտաքին լուսավորության ցանցի կառուցում՝ Լուսինե Զաքարյան 1-ին նրբ. 10 հասցեից դեպի Դավիթ Բեկ փողոց միացնող հատված»:</p>	<p>«ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲԸ 20.06.2023- 05.12.2023թթ.</p> <p>«ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲԸ 13.09.2023- 05.12.2023թթ.</p>	

329.	Մայրուղիների և փողոցների վերանորոգում և կառուցման	Նախատեսվում է իրականացնել Նորք-Մարաշ վարչական շրջանի Մայթերի գեղարվեստական սալիկապատում, առկա է աշխատանքների 4 նախագիծ:	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կազմվել է մրցութային փաթեթ, ներկայացվել աշխատակազմի գնումների վարչություն և կնքվել թվով 1 պայմանագիր՝ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/99 Նորք-Մարաշ վարչական շրջանի մայթերի և փողոցների ընթացիկ նորոգման աշխատանքներ:	«ՈՒՌԲԱՆ ՊԼԱՆԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ 02.05.2023- 30.11.2023թթ.	
330.	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն	Կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն տրամադրում:	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կազմվել է մրցութային փաթեթ, ներկայացվել աշխատակազմի գնումների վարչություն և կնքվել թվով 1 պայմանագիր՝ Նորք-Մարաշ վարչական շրջանի սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների հուղարկավորության կազմակերպում՝ ԵՔ-ՄԱԾՁԲ-23/8	«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀՈԱԿ 09.05.2023- 25.12.2023թթ.	
331.	Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցության ծրագիր	Կարիքի գնահատման արդյունքում բազմազավակ, երիտասարդ և այլ ընտանիքներին անհրաժեշտ սոցիալական աջակցության տրամադրում:	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կազմվել է մրցութային փաթեթ, ներկայացվել աշխատակազմի գնումների վարչություն, կնքվել թվով 6 պայմանագիր և ձեռք է բերվել հետևյալ ապրանքները՝  «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/315-1» Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքում բնակվող բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին վառարանների ձեռք բերում 1 հատ:  «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/315-2» Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքում բնակվող բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող	«ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐԱՍՈՖԹ» ՍՊԸ 14.11.2023- 25.12.2023թթ.  ՇՈՒՇԱՆ ՏԵԽՆԻԿՍ» ՍՊԸ 15.11.2023- 05.12.2023թթ.	

		<p>ընտանիքներին էլեկտրական տաքացուցիչների ձեռք բերում 2 հատ:</p> <p>«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/315-3» Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքում բնակվող բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին հեռուստացույցների ձեռք բերում 1 հատ:</p> <p>«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/245-1» Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքում բնակվող բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին 3 հատ կենցաղային սառնարանների ձեռք բերում Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքում բնակվող բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին 5 հատ լվացքի մեքենաների ձեռք բերում</p> <p>«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/245-2» Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքում բնակվող բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին 2 հատ հեռուստացույցների ձեռք բերում</p> <p>«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/249-1» Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքում բնակվող բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին 1 հատ երկհարկանի մահճակալների ձեռք բերում Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքում բնակվող բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող</p>	<p>«ԼՈՒՍԻԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ» ԱԶ 14.11.2023- 04.12.2023թթ.</p> <p>«ԶԻԳՁԱԳ» ՍՊԸ 28.08.2023- 17.09.2023թթ.</p> <p>«ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ 28.08.2023- 17.09.2023թթ.</p> <p>«ՎԱՆԴԵԿՈՐ» ՍՊԸ 28.08.2023- 20.09.2023թթ.</p> <p>«ԳՈՒՍՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ 28.08.2023- 20.09.2023թթ.</p>	
--	--	--	--	--

			<p>ընտանիքներին 2 հատ զգեստապահարանների ձեռք բերում</p> <p>«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/249-1»</p> <p>Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքում բնակվող բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին 4 հատ մեկ տեղանոց մահճակալների ձեռք բերում:</p>		
332.	Կենսամակարդակի բարելավմանն ուղղված սոցիալական նպատակային ծրագրերի իրականացում	Հասարակության սոցիալական բեռնվածվածության և աղքատության մեղմացման նպատակով տոնական և հիշատակի օրերին միջոցառումների կազմակերպում	<p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կազմվել է մրցութային փաթեթ, ներկայացվել աշխատակազմի գնումների վարչություն և կնքվել է 4 պայմանագիր և անցկացվել է հետևյալ միջոցառումները՝</p> <p>«ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/127-1»</p> <p>Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքում բնակվող սոցիալական տարբեր խմբերի պատկանող երեխաներին թվով 70 մաչանենց տուրիզմ և արտ:</p> <p>Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքում բնակվող սոցիալական տարբեր խմբերի պատկանող տարեցների ժամանցն ու հանգիստը կազմակերպելով էքսկուրսիաներ:</p> <p>«ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/92»</p> <p>Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքում բնակվող սոցիալական տարբեր խմբերի պատկանող երեխաների համար մնջախաղի կազմակերպում:</p> <p>«ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/235-1»</p> <p>Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքում բնակվող սոցիալական տարբեր խմբերի պատկանող երեխաների դպրոցական պայուսակների ձեռքբերում:</p>	<p>«ԱԶ ԼՈՒՍԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ»</p> <p>05.10.2023-25.12.2023թթ.</p> <p>«ԻՎԵՆԹ ՍԻԹԻ»</p> <p>05.10.2023-07.07.2023թթ.</p> <p>«ՀՈՎ-ԱՐՍ» ՍՊԸ</p> <p>16.08.2023-05.09.2023թթ.</p> <p>«ՇՈՒՇԱՆ ՏԵԽՆԻԿՍ» ՍՊԸ</p> <p>10.05.2023-</p>	

			<p>«ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/101-1» Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքում բնակվող սոցիալական տարբեր խմբերի պատկանող երեխաների դպրոցական պայուսակների ձեռքբերում:</p>	30.05.2023թթ.	
333.	Հուղարկավորության ծախսեր	Աջակցություն հարազատ չունեցող ընտանիքներին՝ հուղարկավորության ծախսերը հոգալու համար	<p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կազմվել է մրցութային փաթեթ, ներկայացվել աշխատակազմի գնումների վարչություն և կնքվել թվով 1 պայմանագիր՝</p> <p>1.Նորք-Մարաշ վարչական շրջանի սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների հուղարկավորության կազմակերպում՝ ԵՔ-ՄԱԾՁԲ-23/8:</p>	«ԲՆԱԿԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀՈԱԿ 09.05.2023- 25.12.2023թթ.	
334.	Մշակութային միջոցառումների իրականացման ծրագիր	<p>ՀՀ պետական, ազգային և եկեղեցիական տոների կազմակերպում և անցկացում բնակչության ներգրավմամբ, բնակիչների մասնակցություն ազգային տոներին՝</p> <ol style="list-style-type: none"><li>1.«Բանակի օր» տոնակատարություն,</li><li>2.«Տեառնընդառաջի տոնակատարություն»,</li><li>3. «Կանանց տոն-Մարտի 8»</li><li>4.«Սուրբ Զատիկի տոնակատարություն»,</li><li>5. Ապրիլի 7 «Մայրության և գեղեցկության տոն»,</li><li>6.«Եղեռնի տարելիցին նվիրված միջոցառումներ»,</li><li>7. «Հաղթանակի և Խաղաղության /Մայիսի 9/»,</li><li>8..«Երեխաների իրավունքների պաշտպանության միջ. Օր»,</li><li>9.«Վերջին զանգի տոնակատարություն»,</li><li>10.«Համբարձման տոն»,</li></ol>	<p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կազմվել է մրցութային փաթեթ, ներկայացվել աշխատակազմի գնումների վարչություն և կնքվել է 3 պայմանագիր և անցկացվել է հետևյալ միջոցառումները՝</p> <ol style="list-style-type: none"><li>1. «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/10-1»</li><li>1. «Հայոց բանակի օր»</li><li>2. «Տեառնընդառաջի տոնակատարություն»</li><li>3. «Սբ. Զատիկի տոնակատարություն» 4. «Եղեռնի 108-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ»</li><li>5. «Հաղթանակի և խաղաղության տոն»</li><li>6. «Վերջին զանգի տոնակատարություն»</li><li>7. «Երեխաների իրավունքների պաշտպանություն»</li><li>8. «Ցտեսություն մանկապարտեզ»</li></ol> <p>2. «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/10-2» 1. «Կանանց տոն-մարտի 8»,</p>	«ԱՁ ԼՈՒՍԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ» ՄՊԸ 19.01.2023- 25.12.2023թթ.	«ՊԵՅՅՈՒՄ» ՄՊԸ 23.01.2023-

		<p>11.«Ցտեսություն մանկապարտեզ» տոնակատարություն,  12. Նոր Մարաշի վերածնության օր,  13.Ուսուցչի օր,  14.Ամանորյա տոնակատարություն  15. 2023թ-ին նախատեսված ամանորյա քաղցրավենիքի փաթեթների երեխաների համար</p>	<p>2.«Մայրության և գեղեցկության տոն»,  3. «Համբարձման տոնակատարություն»  4. «Նոր մարաշի վերածնության օր»  5. «Ուսուցչի օր»  6. «Ամանորյա տոնակատարություններ»  3. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/78»  1. 2023թ-ին երեխաների համար նախատեսված ամանորյա քաղցրավենիքի փաթեթների ձեռքբերում</p>	<p>25.12.2023թթ.   «ԱՐՄՎԻԼԳՐՈՒՊ» ՍՊԸ 13.12.2023-02.01.2024թթ.</p>	
335.	Սպորտային միջոցառումների իրականացման ծրագիր	<p>Սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում բնակչության տարբեր տարիքային խմբերի մասնակցությամբ, վարչական շրջանի երիտասարդ ընտանիքների ընդգրկում սպորտային ծրագրերին:  Նախատեսվում է անցկացվել հետևյալ ծրագրերը՝  1. ՀՀ վարչապետի գավաթ սիրողական սեղանի թենիսի մրցաշար  2. ՀՀ անկախության 32-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների քաղաքային մարզական խաղեր  3. ՀՀ ազգային ժողովի գավաթի խաղարկություն  4. Երեխաների պաշտպանության միջազգային օր  5.«Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոն  6. Լավագույն մարզական ընտանիք  7. Շախմատի օլիմպիադա  8. Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդների 2023թ.հանրապետական ռազմամարզական խաղեր  9. Մասնակցություն լայնամասշտաբ սպորտային միջոցառումներին</p>	<p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կազմվել է մրցութային փաթեթ, ներկայացվել աշխատակազմի գնումների վարչություն և կնքվել է 2 պայմանագիր և անցկացվել է հետևյալ միջոցառումները՝   1. «ԵՔ-ԷԱԾԾՁԲ-23/13-1»  1. ՀՀ վարչապետի գավաթ սիրողական սեղանի թենիսի մրցաշար  2. ՀՀ անկախության 32-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների քաղաքային մարզական խաղեր  3. ՀՀ ազգային ժողովի գավաթի խաղարկություն  4. Երեխաների պաշտպանության միջազգային օր  5.«Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոն  6. Լավագույն մարզական ընտանիք  7. Շախմատի օլիմպիադա  8. Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդների 2023թ.հանրապետական ռազմամարզական խաղեր  9. Մասնակցություն լայնամասշտաբ սպորտային միջոցառումներին</p>	<p>«ՊԵՅՅՈՒՆ» ՍՊԸ  27.01.2023-25.12.2023թթ.</p>	



		10. "Կաշվե գնդակ" ֆուտբոլի առաջնություն 11. ՀՀ վարչապետի գավաթ սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշար 12. ՀՀ վարչապետի գավաթ սիրողական խճուղավազքի մրցաշար 13. Սպորտային բաց առաջնությունների մասնակցություն	10. «Կաշվե գնդակ» ֆուտբոլի առաջնություն 11. ՀՀ վարչապետի գավաթ սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշար 12. ՀՀ վարչապետի գավաթ սիրողական խճուղավազքի մրցաշար 13. Սպորտային բաց առաջնությունների մասնակցություն 2. «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/13-2» «Առողջ սերունդ» պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոն	«ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ» Ա/Ձ 30.01.2023-25.12.2023թթ.	
--	--	--	--	--	--

**ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ**

336.	Նուբարաշեն վարչական շրջանի փողոցների, մայթերի և միջբակային տարածքների մասնակի և կապիտալ վերանորոգում, ասֆալտապատում	7500քմ ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում, 1500զծմ մայթերի վերանորոգում, 700 քմ մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ԳԱՇՁԲ-23/86-1 Իրականացվել են ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ հետևյալ հասցեներում՝ Նուբարաշեն 6-րդ փողոց 1-ին նրբանցք հ. 1 շենքի շենքի բակային տարածքում, 1-ին, 3-րդ, 5-րդ, 13-րդ, 9-րդ փողոցներում: Աշխատանքներն ավարտվել են:	«ԱՇ ՇԻՆ» ՍՊԸ 25.04.2023-30.09.2023թթ.	2023 թ. բյուջեով հաստատվել է 4707քմ ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում,
			Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ԳԱՇՁԲ-22/12-1	«ԳՐԻԳ ՇԻՆ» ՍՊԸ 20.04.2023-30.09.2023թթ.	485քմ մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում  Աշխատանքները իրականացվել են թերի, ոչ ամբողջական, ինչի վերաբերյալ և «ԳՐԻԳ ՇԻՆ» ՍՊ ընկերությունը

					սահմանված կարգով ծանուցվել է: Ներկայումս պատրաստվում է քաղաքապետի որոշման նախագիծ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով
337.	Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում	Նուբարաշեն 7-րդ փողոցին հարակից այգու կառուցում	Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/55 Իրականացվել են Նուբարաշեն 7 -րդ փողոցի հարակից այգու տարածքի բարեկարգման աշխատանքներ: Աշխատանքներն ավարտվել են:	«ԱԼ-ՄԱՔ» ՍՊԸ 19.04.2023- 18.07.2023թթ.	
338.	Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում	Նուբարաշեն 6-րդ փողոց 1-ին նրբ. 1 շենքի բակի բարեկարգում Նուբարաշեն 6-րդ փողոց ¼ շենքի բակի բարեկարգում, Նուբարաշեն 6-րդ փողոց ¼ շենքին հարակից վոլեյբոլի դաշտի վերանորոգում	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/40-1 Նուբարաշեն 6-րդ փողոց 1-ին նրբ.1 շենքի բակի բարեկարգման աշխատանքներն ավարտվել են: Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ՀԲՄԽԾՁԲ-23/20-2	«ՍՈԼԱՐ ՑԵՆՏՐ» ՍՊԸ 30.03.2023- 16.07.2023թթ.	2023թ. զարգացման ծրագրում ընդգրկված հասցեներից բացի բյուջեի քննարկումից հետո հաստատվել է նաև Նուբարաշեն 12-րդ փող. 4-րդ շենքի բակային

		<p>Իրականացվել են Նուբարաշեն 6 -րդ փողոց 1/4 շենքի տարածքի բարեկարգման աշխատանքներ:</p> <p>Աշխատանքները կավարտվեն 2024 թվականի առաջին եռամսյակում: Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/40-5</p> <p>Նուբարաշեն 6-րդ փողոց ¼ շենքին հարակից վոլեյբոլի դաշտի վերանորոգման աշխատանքներն ավարտվել են երկրորդ եռամսյակում:</p> <p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/55</p> <p>Իրականացվել են Նուբարաշեն 12 -րդ փողոց 4 շենքի տարածքի բարեկարգման աշխատանքներ: Աշխատանքներն ավարտվել են:</p> <p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/225-2</p> <p>Իրականացվել են Նուբարաշեն 6 -րդ փողոց հ.150 բազմաբնակարան շենքի բակի բարեկարգման աշխատանքներ: Աշխատանքները սկսվել են և կավարտվեն 2024թ. առաջին եռամսյակում:</p> <p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/225-1</p>	<p>«ԷԼ-ՍԹՐՈՅ» ՍՊԸ 13.04.2023- 17.07.2023թթ.</p> <p>«Ս. Տ. Ս. ԳՐՈՒՊ» ՍՊԸ 30.03.2023- 16.07.2023թթ.</p> <p>«ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ 30.03.2023- 18.07.2023թթ.</p> <p>«ՎԻՌԱՆԺ» ՍՊԸ 24.08.2023- 21.02.2024թթ.</p> <p>«Ս.Տ.Ս ԳՐՈՒՊ» ՍՊԸ 21.08.2023- 15.02.2024թթ.</p>	<p>տարածքի բարեկարգումը, 11-րդ փող հ.1 շենքի բակային տարածքի բարեկարգումը 6-րդ փող հ. 150 շենքի բակային տարածքի բարեկարգումը</p>
--	--	--	--	--

			Իրականացվել են Նուբարաշեն 11 -րդ փողոց հ.1 բազմաբնակարան շենքի բակի բարեկարգման աշխատանքներ:		
339.	Նուբարաշեն վարչական շրջանում կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում և ոռոգում	Ծաղկապատման և ծառատունկի իրականացում	Կանաչ տարածքների պահպանման աշխատանքներ իրականացվել են 9-րդ փողոցի կենտրոնական զբոսայգում, 11-րդ փողոցի հարակից զբոսայգում, 6-րդ փողոցի պուրակում, Պողոս Նուբարի անվան պուրակում՝ Խոտհունձ՝ 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ և 20-րդ փողոցների կանաչապատ տարածքներում, իրականացվել են սիզամարգերի մաքրում թափված տերևներից, չորուկներից, իրականացվել է 7300 քմ պատահական աղբի հավաքում կանաչապատ տարածքներից: Իրականացվել են վարչական շրջանում առկա 6 հուշարձանների հարակից տարածքների ընթացիկ մաքրման աշխատանքներ:		
340.	Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների նորոգում	4500քմ թեք տանիքների հիմնանորոգում կիրականացվի՝ Նուբարաշեն 11-րդ հ. 7-րդ, հ. 14-րդ և 6-րդ փողոց հ. 112-րդ և հ. 113-րդ շենքերում	Նուբարաշեն համատիրության հետ կնքվել է սուբսիդավորման պայմանագիր: Նուբարաշեն 11-րդ հ. 7-րդ, հ. 14-րդ և 6-րդ փողոց հ. 112-րդ և հ. 113-րդ շենքերում իրականացվել են թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքներ:	«Նուբարաշեն» համատիրություն ԹԺՎ 7 սուբսիդիայի հատկացման պայմանագիր 24.01.2023-22.12.2023թթ.	
341.	Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ	Նուբարաշեն 6փ 1/3-րդ և 6փ. 1նրբ. 1-ին շենքերի շքամուտքերի վերանորոգում	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/54 Իրականացվել են Նուբարաշեն 6 -րդ փողոց 1-ին նրբանցք հ. 1 շենքի շքամուտքերի վերանորոգման աշխատանքներ:	«Նաիրա Խաչատրյան Սամվելի» ԱԶ 22.03.2023-31.07.2023թթ.	

342.	Կապիտալ շինությունների ստեղծում	Նուբարաշեն 1-ին փողոցի ֆուտբոլի դաշտին կից հանդերձարանի կառուցում	Աշխատանքները գտնվում են նախագծման փուլում:	«ԷԼՍՈՆ» ՍՊԸ 09.03.2023- 20.10.2023թթ.	
343.	Եզրաքարերի վերանորոգում	Նախատեսված է 1500 գծմ եզրաքարերի վերանորոգում	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/21 Իրականացվել են եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ հետևյալ հասցեներում՝ Նուբարաշեն 11-րդ փողոց հ. 15 շենքի բակային տարածքում, 6-րդ փողոց հ. 1/2 շենքի բակային տարածքում, 6-րդ փողոցի սկզբնամասում, Նոր Ջմյունիայի և 7-րդ փողոցներում:	«ԷԼՍՈՆ» ՍՊԸ 09.03.2023- 20.10.2023թթ.	2023 թ. բյուջեի քննարկման արդյունքում հաստատվել է 490 գծմ բետոնե եզրաքարերի տեղադրման և 1000 գծմ բազալտե եզրաքարերի տեղադրման աշխատանքներ
344.	Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում ու պահպանում	1 հատ զրուցարանի տեղադրում Նուբարաշեն 11փ. 12 շենքին հարակից հասցեում 100 հատ նստարանի տեղադրում Նուբարաշեն 9-րդ փողոցի գլխավոր զբոսայգում:  100 հատ նստարանի տեղադրում Նուբարաշեն 9-րդ փողոցի գլխավոր զբոսայգում:	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ԷՄՃԱՊՁՊ-23/110  Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/8	Ա/Ձ Էրիկ Հարությունյան 26.04.2023- 26.05.2023թթ.  Ա/Ձ Գայանե Արշավիրի Բաբոյան 20.03.2023- 20.04.2023թթ.	2023 թ. բյուջեի քննարկման արդյունքում հաստատվել է 30 հատ նստարանի տեղադրում
345.	Ջրագծի կառուցում	Նախատեսված է 250 գծմ ջրագծի կառուցում Նուբարաշեն 16 փողոցում	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/53 Նուբարաշեն 16-րդ փողոցում իրականացվել են 250 գծմ ջրագծի կառուցման աշխատանքներ:	«ԷԿՈՋՐՍԻՆ» ՍՊԸ 06.04.2023- 11.07.2023թթ.	

346.	Մշակութային միջոցառումների անցկացում	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացում՝ 15 մշակութային միջոցառումների կազմակերպում	<p>Իրականացվել են մարզամշակութային կազմակերպությունների շենք-շինությունների պահպանման և գործունեության կազմակերպման ուսումնասիրություններ</p> <p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել պայմանագիր ԵՔ-ԳՀԾՁԲ-23/36-1</p> <p>Հայոց բանակի կազմավորման 32-րդ տարեդարձի առթիվ վարչական շրջանում տեղակայված զորամասում կազմակերպվել է միջոցառում: Միջոցառման ավարտին հանձնվել են շնորհակալագրեր և նվերներ:</p> <p>ԵՔ-ԳՀԾՁԲ-23/36-1</p> <p>Նուբարաշեն վարչական շրջանի Սրբոց Նահատակաց եղեղեցու բակում Տեառնընդառաջի տոնին նվիրված կազմակերպվել է հյուրասիրություն և նորապսակ զույգերին հանձնվել են նվերներ:</p> <p>ԵՔ-ԳՀԾՁԲ-23/36-2</p> <p>1. Նուբարաշեն վարչական շրջանի կենտրոնական փողոցներում և զբոսայգիներում ծաղիկներ ու շնորհավորական բացիկներ են նվիրվել կանանց ու աղջիկներին</p> <p>2. Կանանց տոնին նվիրված կազմակերպվել են այցեր վարչական շրջանում գործող կրթամշակութային և այլ կազմակերպություններ՝ կանանց ու աղջիկներին նվիրվել են ծաղիկներ ու շնորհավորական բացիկներ:</p>	<p>ԱՁ Լուսինե Ղազարյան 28.01.2023թ.</p> <p>ԱՁ Լուսինե Ղազարյան 13.02.2023թ.</p> <p>«ԲԱԳԱՌԹ» ՍՊԸ 08.03.2023թ.</p> <p>«ԲԱԳԱՌԹ» ՍՊԸ 09.03.2023թ.</p> <p>«ԲԱԳԱՌԹ» ՍՊԸ 09.03.2023թ.</p> <p>18.03.2023թ.</p>	
------	--------------------------------------	--	---	--	--

			<p>3. Կանանց տոնին նվիրված վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կանանց ու աղջիկներին տրվել են նվերներ և ծաղիկներ</p> <p>4. Վարչական շրջանի Վիլի Մոկացյանի անվան երաժշտական դպրոցում ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում կազմակերպվել է համերգ</p> <p>5. Կազմակերպվել է վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնի «Լինա-լայֆ» պարային համույթի մասնակցությունը համազգային թատրոնում կայացած «Երաժշտական Կոլիզեյ» Հանրապետական փառատոնին</p> <p>6. Վարչական շրջանի Վիլի Մոկացյանի անվան երաժշտական դպրոցում տեղի է ունեցել համերգ ԱՄՆ-ից ժամանած «ՎԵՄ» համույթի մասնակցությամբ, որի առաջին ջութակահարն է դպրոցի բարերար Մովսես Պողոսյանը:</p> <p>7.«Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ» խորագիրը կրող ծրագրի շրջանակում վարչական շրջանի թիվ 34 գրադարանում կազմակերպվել են Մկրտիչ Կորյունի 110-ամյակին և մայրենի լեզվին նվիրված գրական միջոցառումներ:</p> <p>ԵՔ-ԳՀԾՁԲ-23/36-1</p> <p>8.Մայրության, գեղեցկության և սիրո տոնին նվիրված վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնում «Նուրի» բենդի մասնակցությամբ կազմակերպվել է միջոցառում: Հրավիրվել են 44-օրյա պատերազմում զոհված և վիրավորում ստացած տղաների մայրերը, քույրերը և կանայք:</p>	<p>26.03.2023թ.</p> <p>28.03.2023թ.</p> <p>02.04.2023-07.04.2023թթ. ԱԶ Լուսինե Ղազարյան 07.04.2023թ.</p> <p>10.04.2023-24.05.2023թթ.</p>	
--	--	--	---	--	--

			<p>Բոլոր կանանց ու աղջիկներին նվիրվել են ծաղիկներ և նվերներ:</p> <p>9. Կազմակերպվել է Վիլլի Մոկացյանի անվան երաժշտական դպրոցի աշակերտների մասնակցությունը Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների միջև անցկացվող ամենամյա մրցույթ-փառատոնին՝ տարբեր անվանակարգերում:</p> <p>10. Հուշարձանների պահպանության օրվա կապակցությամբ դպրոցական տարիքի երեխաների մասնակցությամբ կազմակերպվել է վարչական շրջանի հուշարձանների լվացման և շրջակա տարածքների մաքրման աշխատանքներ:</p> <p>ԵԲ-ԳՀԾՁԲ-23/36-2</p> <p>11. Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների աշխատակիցների մասնակցությամբ կազմակերպվել է այց Նուբարաշեն վարչական շրջանի 6 փողոցի սկզբնամասում տեղակայված Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող խաչքար և Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու և ծաղիկներ դնելու անմեղ զոհերի հիշատակին:</p> <p>12. Քաղաքացու օրվան նվիրված վարչական շրջանի կենտրոնական զբոսայգում կազմակերպվել է տոնական միջոցառում:</p> <p>13. Պարի միջազգային օրվան նվիրված վարչական շրջանի</p>	<p>18.04.2023թ.</p> <p>«ԲԱԳԱՌԹ» ՍՊԸ 24.04.2023թ.</p> <p>29.04.2023թ.</p> <p>29.04.2023թ.</p>	
--	--	--	--	--	--



			<p>մարզամշակութային կենտրոնի պարային խմբերի մասնակցությամբ կենտրոնական զբոսայգում կազմակերպվել է տոնական միջոցառում:</p> <p>14. Երևանի կենդանաբանական այգու բացման արարողությանը նվիրված միջոցառումները կազմակերպվել են Նուբարաշենի մարզամշակութային կենտրոնի աջակցությամբ, որտեղ իրենց կատարումներով ներկայացել են կենտրոնի պարային խմբերը: ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/58-1</p> <p>15. Աշխատավորի օրվան նվիրված կազմակերպվել է պարզևատրման ցերեկույթ և վարչական շրջանի ղեկավարի կողմից թվով 15 աշխատակցի տրվել են շնորհակալագրեր և նվերներ:</p> <p>16. Վարչական շրջանի Վիլի Մոկացյանի անվան երաժշտական դպրոցում կազմակերպվել է դաշնակահար Արտեմ Խառատյանի մենահամերգը: ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/58-1</p> <p>17. Հաղթանակի և խաղաղության տոնին նվիրված վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների աշխատակիցների մասնակցությամբ իրականացվել է տոնական քայլերթ դեպի «Արցախյան պատերազմներում զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող խաչքար» և «Անհայտ զինվորի» հուշարձան՝ հարգանքի տուրք է մատուցվել և կատարվել է ծաղկեղբման արարողություն:</p>	<p>01.05.2023թ.</p> <p>ԱՁ Լուսինե Ղազարյան 01.05.2023թ.</p> <p>06.05.2023թ.</p> <p>ԱՁ Լուսինե Ղազարյան 09.05.2023թ.</p>	
--	--	--	--	---	--

			<p>18. Հայաստանի Առաջին Հանրապետության օրվան նվիրված վարչական շրջանի կենտրոնական զբոսայգում կազմակերպվել է տոնական համերգ «Նուրի» բենդի և մարզամշակութային կենտրոնի պարի խմբերի մասնակցությամբ:</p> <p>19. Կազմակերպվել է վարչական շրջանի Վիլի Մոկացյանի անվան երաժշտական դպրոցի վոկալ բաժնի աշակերտ Գևորգ Մկրտչյանի մասնակցությունը «Խաչատուր Ավետիսյան» համահայկական մրցույթին, ով արժանացել է առաջին կարգի մրցանակի:</p> <p>ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/58-1</p> <p>20. Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան նվիրված վարչական շրջանի կենտրոնական զբոսայգում հարակից տարածքում կազմակերպվել է կավճանկարում և տոնական մեծ միջոցառում ամֆիթատրոնում, պրոֆեսիոնալ վարողի, խաղավար և ժանգլոր ծաղրածուների, մուլտ հերոսների, աճպարարի, երգիչների մասնակցությամբ:</p> <p>ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/58-1</p> <p>21. Նուբարաշենի օրվան նվիրված վարչական շրջանի կենտրոնական զբոսայգում կազմակերպվել է մեծ տոնակատարություն, որի շրջանակում կազմակերպվել է հեծանվաշքերթ, մեծ հյուրասիրություն, սպորտային և պարային մրցույթներ, ձեռքի աշխատանքների ցուցադրություն, համերգային ծրագրեր:</p>	<p>29.05.2023թ.</p> <p>28.05.2023թ.</p> <p>ԱՁ Լուսինե Ղազարյան 01.06.2023թ.</p> <p>ԱՁ Լուսինե Ղազարյան</p>	
--	--	--	---	--	--

		<p>22. ՀՀ սահմանադրության և պետական խորհրդանշանների օրվան նվիրված կազմակերպվել է վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնի սաների և աշխատակիցների մասնակցությունը Ազատության հրապարակից մեկնարկած ՀՀ տոնական քայլերին և տոնական միջոցառումներին:</p> <p>23. Կազմակերպվել է մարզամշակութային կենտրոնի պարի խմբերի մասնակցությունը Գյումրի քաղաքում կայացած «Արվեստի կամուրջ» հանրապետական համերգ-փառատոնին:</p> <p>24. Նուբարաշեն վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնում կազմակերպվել է ժողովրդական և ժամանակակից պարերի խմբերի տարեվերջյան հաշվետու համերգներ:</p> <p>25. Կազմակերպվել է Նուբարաշեն վարչական շրջանի բնակիչների մասնակցությունը Արարատյան Հայրապետական Թեմի կողմից կազմակերպված Վարդավառի տոնին նվիրված տոնական երթին և տոնախմբությանը:</p> <p>26. Վարդավառի տոնին նվիրված Նուբարաշենի Սրբոց Նահատակաց եկեղեցում մատուցվել է Սուրբ պատարագ և փողոցներում ու բակերում ջրցան մեքենայով բնակիչներին ապահովվել է ջրով և երեխաների մասնակցությամբ կազմակերպվել է վարչական շրջանի արձանների լվացում:</p> <p>ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/58-1</p> <p>Երկրում տիրող իրավիճակից ելնելով վերոնշյալ պայմանագրով նախատեսված</p>	<p>24.06.2023թ.</p> <p>05.07.2023թ.</p> <p>09.07.2023թ.</p> <p>13.07.2023- 14.07.2023թթ.</p> <p>15.07.2023թ.</p> <p>16.07.2023թ.</p>	
--	--	--	--	--

			<p>«Անկախության օրվան» նվիրված միջոցառումը չի կայացել:</p> <p>28.Նուբարաշեն վարչական շրջանի Սրբոց Նահատակաց եկեղեցում կատարվել է հոգեհանգստյան աղոթք նվիրված Արցախյան պատերազմների ժամանակ զոհված հերոսների հիշատակի:</p> <p>ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/58-1</p> <p>29.Ուսուցչի օրվա և գրադարանավարի օրվա կապակցությամբ կազմակերպվել են այցելություններ վարչական շրջանում գործող կրթամշակութային հաստատություններ, մանկավարժներին տրվել է ծաղիկներ, շնորհավորական բացիկներ:</p> <p>30.Վարչական շրջանի թիվ 34 գրադարանում կազմակերպվել է հանդիպում հայ ժամանակակից գրողներ Արմեն Ավոյի և Բորիկ Բաղդասարյանի հետ:</p> <p>31.Կազմակերպվել է վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնի պարային խմբերի մասնակցությունը Կամուրջ մշակութային կենտրոնում կազմակերպված Ամանորի տոնական միջոցառմանը:</p> <p>32.Ամանորի և Սուրբ ծննդյան տոներին նվիրված վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնում կազմակերպվել է տոնական միջոցառում պարի փոքրերի խմբերի մասնակցությամբ:</p>	<p>ԱՁ Լուսինե Ղազարյան 21.09.2023թ.</p> <p>27.09.2023թ.</p> <p>27.09.2023թ.</p> <p>ԱՁ Լուսինե Ղազարյան 05.10.2023թ.</p> <p>15.12.2023թ.</p> <p>16.12.2023թ.</p>	
--	--	--	--	---	--

			<p>ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/58-1</p> <p>33.Վարչական շրջանի կենտրոնական զբոսայգում տեղադրված տոնաձառի մոտ կազմակերպվել է Ամանորի և Սուրբ ծննդյան տոներին նվիրված տոնական մեծ միջոցառում և տոնաձառի լույսերի վառման արարողություն՝ Հայաստանի Հանրային ռադիոյի «Արեվիկ» մանկապատանեկան անսամբլի, հեքիաթի հերոսների, ձմեռ պապի, ծյունանուշի մասնակցությամբ:</p> <p>34.Ամանորի և Սուրբ ծննդյան տոներին նվիրված վարչական շրջանի երաժշտական դպրոցում կազմակերպվել է տոնական հաշվետու համերգ:</p> <p>35.Ամանորի և Սուրբ ծննդյան տոներին նվիրված վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնում պարուսույցների բեմադրմամբ, պարի խմբերի սաների մասնակցությամբ ներկայացվել է «Ինչպես Գրինչը գողացավ Սուրբ ծնունդը» տոնական մյուզիքլը:</p>	<p>19.12.2023թ.</p> <p>ԱԶ Լուսինե Ղազարյան 20.12.2023թ.</p> <p>25.12.2023թ.</p> <p>26.09.2023թ.</p>	
347.	Կրթական միջոցառումների կազմակերպում	Կրթական միջոցառումների կազմակերպում, ծանոթացում արդի գրականության և ժամանակակից գրողների	<p>Իրականացվել է նախադպրոցական կազմակերպությունների շենք-շինությունների պահպանման և գործունեության կազմակերպման հետևողականություն: Իրականացվել է հսկողություն մանկապարտեզներում սննդի որակի, ժամկետների պահպանման, ուսումնադաստիարակչական աշխատանքների պատշաճ ընթացքն ապահովելու ուղղությամբ</p> <p>1. Վարչական շրջանի թիվ 34 գրադարանում հայտարարվել է</p>	<p>20.02.2023-28.02.2023թթ.</p> <p>«ԲԱԳԱՌԹ» ՍՊԸ</p>	

			<p>«Թումանյանական օրեր» և վարչական շրջանի հանրակրթական դպրոցների ու մանկապարտեզների սաների մասնակցությամբ կազմակերպվել են միջոցառումներ:</p>	20.02.2023թ.	
			<p>ԵՔ-ԳՀԾՁԲ-23/36-2</p> <p>Թումանյանական օրերի շրջանակում վարչական շրջանում կազմակերպվել են ներքոնշյալ միջոցառումները և նվիրվել են Թումանյանական ստեղծագործությունների գրքեր մասնակից բոլոր դասարաններին.</p>	21.02.2023թ.	
			<p>1. Վարչական շրջանի հ.175 միջն. դպրոցում կազմակերպվել է հանդիպում մանկագիր Աննա Կոստանյանի հետ:</p>	22.02.2023թ.	
			<p>2. Վարչական շրջանի թիվ 34 գրադարանում կազմակերպվել է հանդիպում երաժիշտ երգահան, մանկագիր Հասմիկ Ասատրյանի հետ:</p>	23.02.2023թ.	
			<p>3. Վարչական շրջանի հ.175 միջն. դպրոցում կազմակերպվել է հանդիպում մանկագիր Օլգա Դարյանի հետ</p>	28.02.2023թ.	
			<p>4. Վարչական շրջանի թիվ 34 գրադարանում կազմակերպվել է հանդիպում մանկագիր Հռիփսիմե Խրիմյանի հետ</p>		
			<p>5. Վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնում կազմակերպվել է Թումանյանական պոեզիայի երեկո դերասան Սամվել Բաղինյանի, գրող-հրապարակախոս Սյուզի Եփրեմյանի և գրականագետ Ալբերտ Մնացականյանի մասնակցությամբ</p>		
			<p>6. Պոեզիայի միջազգայի օրվան նվիրված թիվ 34 գրադարանում</p>		

			<p>կազմակերպվել է Չարենցյան ընթերցումներ հանրակրթական դպրոցների աշակերտների մասնակցությամբ:</p> <p>7.Ծաղկազարդին և Սուրբ Զատկի տոներին նվիրված վարչական շրջանի մանկապարտեզներում, նախակրթարանում և դպրոցներում կազմակերպվել են գեղեցիկ միջոցառումներ, որտեղ ներկա է եղել վարչական շրջանի Սրբոց Նահատակաց եկեղեցու քահանա Տեր Բարդուղիմեոս Հակոբյանը:</p> <p>8.Քաղաքացու օրվան նվիրված վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնում կազմակերպվել է հանդիպում-քննարկում հանրակրթական դպրոցների ավագ դասարանների աշակերտների հետ:</p> <p>9.Վարչական շրջանի թիվ 34 գրադարանում կազմակերպվել է գրական ցերեկույթ Ե. Չարենցին նվիրված:</p> <p>10.Դպրոց-մանկապարտեզ համագործակցության շրջանակում կազմակերպվել է վարչական շրջանի մանկապարտեզների սաների մասնակցությունը Երևանի հ.175 միջնակարգ դպրոցում տարրական դասարանների աշակերտների կողմից ներկայացվող «Թե ինչու վարդը փշեր ունեցավ» խորագրով տիկնիկային ներկայացմանը:</p> <p>ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/58-1</p> <p>11.Կազմակերպվել է մասնակցություն հանրակրթական դպրոցների ավարտական դասարանների «Վերջին</p>	<p>10.04.2023թ.</p> <p>29.04.2023թ.</p> <p>17.05.2023թ.</p> <p>22.05.2023թ.</p>	
--	--	--	---	---	--

			<p>զանգ»-ի միջոցառումներին, շրջանավարտներին տրվել են շնորհավորական բացիկներ, ծաղիկներ, դասարաններին տորթեր, դպրոցներին նվերներ:</p> <p>12. Գրքի երևանյան վեցերորդ փառատոնի շրջանակում կազմակերպվել է վարչական շրջանի գրադարանի աշխատակիցների և ընթերցողների մասնակցությունը Արամ Պաչյանի «Եթե սա գրող է» գրքի շնորհանդեսին:</p> <p>13. Կազմակերպվել է մասնակցություն Վիլի Մոկացյանի անվան երաժշտական դպրոցի տարեվերջյան հաշվետու համերգին և տրվել են ավարտական վկայականները:</p> <p>14. Կազմակերպվել է Վիլի Մոկացյանի անվան երաժշտական դպրոցի կլարնետի դասարանի 3 աշակերտների մասնակցությունը Վաղարշապատ քաղաքում անցկացվող «Փոքրիկ քայլ» մրցույթին: Աշակերտներից երկուսը արժանացել են 2-րդ և 3-րդ կարգի մրցանակների:</p> <p>15. Վարչական շրջանի թիվ 34 գրադարանում կազմակերպվել է Վ. Դավթյանի ծննդյան 100 ամյակին նվիրված միջոցառում:</p> <p>ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/58-1</p> <p>16. Գիտելիքի, գրի և դպրության օրվա կապակցությամբ կազմակերպվել է այցելություն հանրակրթական դպրոցներ, մանկապարտեզներ, նախակրթարան, բոլոր 1-ին դասարանցիներին տրվել է նվերներ՝ գրենական պիտույքներ:</p>	<p>ԱՁ Լուսինե Ղազարյան 26.05.2023թ.</p> <p>27.05.2023թ.</p> <p>19.06.2023թ.</p> <p>24.06.2023թ.</p> <p>31.07.2023թ.</p>	
--	--	--	---	---	--



			<p>17. Գիտելիքի, գրի և դպրության օրվա կապակցությամբ վարչական շրջանի մանկապարտեզներում կազմակերպվել է մանկական զվարճալի միջոցառումներ ծաղրածուների և հեքիաթների հերոսների մասնակցությամբ:</p> <p>18. Կազմակերպել է Նուբարաշեն վարչական շրջանում գործող Երևանի Ղ.Ալիշանի անվան հ.95 միջնակարգ դպրոցի բացմանը նվիրված տոնական միջոցառում, որին ներկա է եղել ՀՀ վարչապետը:</p> <p>19. Կազմակերպվել է վարչական շրջանի անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաների հանգիստը Հանքավանի «Լուսաբաց» ճամբարում:</p> <p>20. «Գրադարանավարի օր» ծրագրի շրջանակում կազմակերպվել է մասնակցություն Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում կազմակերպված «Ալեն Մարգարյան հերոսը» խորագրով գրքերի նվիրատվությանը:</p> <p>21. «Արտիստը դպրոցին» ծրագրի շրջանակում վարչական շրջանի Վիլլի Մոկացյանի անվան երաժշտական դպրոցում կազմակերպվել է վարպետության դաս անվանի դաշնակահար Հայկ Մելիքյանի մասնակցությամբ:</p> <p>22. Վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնի պարի բոլոր խմբերում կազմակերպվել են բաց դասեր:</p> <p>23. Վարչական շրջանի թիվ 34 գրադարանում կազմակերպվել է</p>	<p>ԱԶ Լուսինե Ղազարյան 01.09.2023թ.</p> <p>01.09.2023թ.</p> <p>04.09.2023թ.</p> <p>Հուլիս-օգոստոս</p> <p>06.10.2023թ.</p> <p>15.11.2023թ.</p>	
--	--	--	--	---	--

			<p>միջոցառում նվիրված՝ ՀՀ Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի ծննդյան 66-ամյակին:</p> <p>24. Վարչական շրջանի Վիլի Մոկացյանի անվան երաժշտական դպրոցում կազմակերպվել է վոկալ և փողային բաժինների դասարանների համերգները:</p> <p>ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/58-1</p> <p>25. Վարչական շրջանի մանկապարտեզներում, նախակրթարանում և հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում կազմակերպվել են Ամանորի տոնական միջոցառումներ և երեխաներին տրվել են քաղցրավենիքի փաթեթներ:</p> <p>ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/58-1</p> <p>26. Ամանորի և Սուրբ ծննդյան տոներին նվիրված վարչական շրջանի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների բոլոր աշակերտներին և մանկապարտեզների ավագ խմբերի երեխաներին տրամադրվել են Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի Ամանորի տոնական ներկայացման տոմսեր և ապահովվել է տրանսպորով նրանց տեղափոխումը:</p>	<p>15.11.2023- 18.11.2023թթ.</p> <p>27.11.2023թ.</p> <p>22.12.2023- 23.12.2023թթ.</p> <p>ԱՁ Լուսինե Ղազարյան 19.12.2023- 27.12.2023թթ.</p> <p>ԱՁ Լուսինե Ղազարյան 25.12.2023թ.</p>	
348.	Սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում	Օրացույցային պլանով նախատեսված 7 սպորտային միջոցառումների կազմակերպում	<p>1. Վարչական շրջանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոցում կազմակերպվել և անցկացվել է փնջային մրցաշար 5-րդ բանակային կորպուսի 36 զինծառայողի մասնակցությամբ</p> <p>ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/18-1</p>	<p>30.01.2023- 02.02.2023թթ. «Պեցցո» ՍՊԸ Փետրվար-մարտ</p>	

		<p>2. Կազմակերպվել է «ՀՀ հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող «Սպորտլանդիա» մարզական միջոցառման ներդպրոցական և շրջանային փուլերի մրցումները:</p> <p>3. Կազմակերպվել է «ՀՀ հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների միջև «Սպարտակիադա» մարզական միջոցառման ներդպրոցական և շրջանային փուլերի մրցումները</p> <p>4. Կազմակերպվել է մարզամշակութային կենտրոնի ծյուղոյի մարզիկների մասնակցությունը Չարենցավան քաղաքում կայացած 2023թ. ծյուղոյի Հայաստանի Հանրապետության պատանիների և երիտասարդների առաջնությանը</p> <p>5. Վարչական շրջանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոցում անցկացվել է 4-րդ կարգի համար որակավորման մրցաշար</p> <p>ԵՔ-ԷԱԾԾՁԲ-23/18-1</p> <p>6. Կազմակերպվել է շրջանային փուլի մրցումներում հաղթած հ.175 միջն. դպրոցի 4-6-րդ և 95 միջն. դպրոցի 1-3-րդ դասարանների աշակերտների մասնակցությունն Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների միջև անցկացվող «Սպորտլանդիա» մարզական միջոցառմանը</p> <p>ԵՔ-ԷԱԾԾՁԲ-23/18-1</p> <p>7. Կազմակերպվել և ապահովվել է շրջանային փուլում հաղթած թիմերի մասնակցությունը «ՀՀ մարզերի,</p>	<p>Փետրվար-մարտ</p> <p>04.02.2023- 05.02.2023թթ. 11.02.2023 - 12.02.2023թթ.</p> <p>14.02.2023- 22.02.2023թթ.</p> <p>«Պեցցո» ՍՊԸ 24.03.2023թ.</p> <p>«ՊԵՅՅՈՒ» ՍՊԸ ապրիլ-մայիս</p> <p>08.04.2023թ.</p>	
--	--	---	--	--

			<p>Երևան քաղաքի և Արցախի հանրապետության հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների միջև սպարտակիադա» մարզական միջոցառման քաղաքային և հանրապետական փուլերի մրցումներին՝ հրաձգություն, բազկամարտ, ֆուտբոլ, հնգամարտ մարզաձևերով:</p> <p>8. Կազմակերպվել է վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնի ձյուդոյի սաների մասնակցությունը Երևանում կայացած ձյուդոյի ֆեդերացիայի պատանիների և դեռահասների գավաթի խաղարկությանը: Մասնակիցները զբաղեցրել են 2-րդ և 3-րդ մրցանակայի տեղեր:</p> <p>9. Կարչական շրջանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոցում անցկացվել է 3-րդ կարգի համար որակավորման մրցաշար: Սաներից 3-ը ստացել են 3-րդ կարգ:</p> <p>10. Կազմակերպվել է վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնի ձյուդոյի 2 սանի մասնակցությունը Ռուսաստանի Դաշնության Պողոլսկ քաղաքում կայացած ձյուդոյի միջազգային մրցաշարին:</p> <p>11. Կազմակերպվել է մարզամշակութային կենտրոնի ձյուդոյի սաների մասնակցությունը Արմավիր քաղաքում կայացած Արմավիրի գավաթի 9-րդ խաղարկության հանրապետական մրցաշարին: Մասնակիցները զբաղեցրել են 2-րդ և 3-րդ մրցանակային տեղեր:</p> <p>12. Կազմակերպվել է մարզամշակութային կենտրոնի ձյուդոյի սաների մասնակցությունը Ռ. Հակոբջանյանի</p>	<p>14.04.2023- 22.04.2023թթ.</p> <p>15.04.2023- 16.04.2023թթ.</p> <p>22.04.2023թ.</p> <p>28.05.2023թ.</p> <p>02.05.2023- 12.05.2023թթ. 23.05.2023- 31.05.2023թթ.</p> <p>«ՊԵՅՑՈ» ՍՊԸ Մարտ-ապրիլ</p>	
--	--	--	--	--	--

			<p>անվան հանրապետական 7-րդ հուշամրցաշարին: Մասնակիցները զբաղեցրել են 2-րդ և 3-րդ մրցանակային տեղեր:</p> <p>13.Վարչական շրջանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոցում անցկացվել են 2-րդ և 3-րդ կարգերի համար որակավորման մրցաշարեր: Սաներից 1-ը ստացել է 2-րդ կարգ, 3-ը 3-րդ կարգ:</p> <p>ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/18-1</p> <p>14.Կազմակերպվել են ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության խաղերի ներդպրոցական և շրջանային փուլերի մրցումները:</p> <p>15.Վարչական շրջանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոցում անցկացվել է 4-րդ կարգի համար որակավորման մրցաշար: Սաներից 5-ը ստացել են 4-րդ կարգ:</p> <p>16.Կազմակերպվել է մարզամշակութային կենտրոնի և Գրանդ Սպորտ սպորտային համալիրի ֆուտբոլի թիմերի ընկերական ֆուտբոլային հանդիպումը Գրանդ Սպորտ սպորտային համալիրում:</p> <p>17.Կազմակերպվել է մարզամշակութային կենտրոնի ձյուդոյի սաների մասնակցությունը Սիսիան քաղաքում կայացած «Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոցի ձյուդոյի հանրապետական մրցաշարին»: Մասնակիցները զբաղեցրել են 1-ին, 2-րդ և 3-րդ մրցանակայի տեղեր:</p> <p>ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/18-2</p> <p>18.Վարչական շրջանի մանկապարտեզների սաների</p>	<p>10.06.2023-17.06.2023թթ.</p> <p>12.06.2023թ.</p> <p>15.06.2023թ.</p> <p>«ԲԱԳԱՌԹ» ՍՊԸ 30.05.2023-01.06.2023թթ.</p> <p>«ՎՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ 16.06.2023-23.06.2023թթ.</p>	
--	--	--	--	---	--

			<p>մասնակցությամբ կազմակերպվել է «Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված 2023թ. մարզահամերգային տոնահանդես» մարզական միջոցառման շրջանային փուլը և ապահովվել է հաղթող մանկապարտեզի թիմի մասնակցությունը քաղաքային փուլին: ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/60-1</p> <p>19. Կարչական շրջանում կազմակերպվել է «Տարեցների հանրապետական խաղերի» շրջանային փուլի մրցումները շախմատ, շաշկի, դարթս և նարդի մարզաձևերում և ապահովվել է հաղթող տարեցների մասնակցությունը քաղաքային փուլի մրցումներին: Տարեցների կենտրոնին և մրցանակային տեղեր գրաված տարեցներին տրվել են նվերներ: ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/60-1</p> <p>20. Կազմակերպվել է «Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի գավաթ» 2023թ. մանկապատանեկան փառատոնի շախմատի մրցաշարը:</p> <p>21. Կազմակերպվել է «Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի գավաթ» 2023թ. մանկապատանեկան փառատոնի ձյուդոյի մրցաշարը:</p> <p>22. Կազմակերպվել է նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի ներդպրոցական փուլի մրցումները:</p> <p>23. Կազմակերպվել է մարզամշակութային կենտրոնի ձյուդոյի սաների մասնակցությունը Գյումրի քաղաքում կայացած Պետրոս Նազարյանի անվան հանրապետական մրցաշարին: Սաները</p>	<p>«ՎՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ 17.07.2023թ.</p> <p>29.07.2023թ.</p> <p>Սեպտեմբեր</p> <p>09.09.2023թ.</p> <p>16.09.2023թ.</p> <p>17.09.2023թ.</p> <p>01.10.2023թ.</p>	
--	--	--	---	---	--

			<p>զբաղեցրել են 1-ին, 2-րդ մրցանակային տեղերը:</p> <p>24. Կազմակերպվել է մարզամշակութային կենտրոնի ծյուղոյի սաների մասնակցությունը «Լոռու մարզի ծյուղոյի ֆեդերացիայի գավաթ» բաց առաջնության հանրապետական մրցաշարին: Սաները զբաղեցրել են 2-րդ, 3-րդ մրցանակային տեղերը:</p> <p>25. Կազմակերպվել է մարզամշակութային կենտրոնի և Միկայի ֆուտբոլի թիմերի ընկերական ֆուտբոլային հանդիպումը:</p> <p>26. Կազմակերպվել է մարզամշակութային կենտրոնի ծյուղոյի սաների մասնակցությունը Հունաստանի Ամինդետն քաղաքում կայացած դեռահասների և պատանիների ծյուղոյի միջազգային մրցաշարին: Մրցաշարին մասնակցել է կենտրոնի սան՝ Տիգրան Սարկիսյանը ով և զբաղեցրել է 3-րդ մրցանակային տեղը:</p> <p>27. Կազմակերպվել է մարզամշակութային կենտրոնի ծյուղոյի սաների մասնակցությունը Երևանի «Միկա» մարզադահլիճում կայացած Սերգեյ Օհանյանի անվան ծյուղոյի հանրապետական մրցաշարին: Կենտրոնի սաները զբաղեցրել են 1-ին, 2-րդ մրցանակային տեղերը:</p> <p>28. Վարչական շրջանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոցում անցկացվել է 4-րդ կարգի համար որակավորման մրցաշար: Սաներից 3-ը ստացել են 4-րդ կարգ:</p> <p>29. Կազմակերպվել է մարզամշակութային կենտրոնի ծյուղոյի սաների մասնակցությունը Մ.Մեծլումյանի անվան հանրապետական մրցաշարին: Կենտրոնի</p>	<p>08.10.2023թ.</p> <p>11.10.2023- 19.10.2023թթ.</p> <p>21.10.2023թ.</p> <p>22.11.2023- 30.11.2023թթ.</p> <p>03.12.2023թ.</p>	
--	--	--	--	---	--

		<p>սաները զբաղեցրել են 2-րդ, 3-րդ մրցանակային տեղերը:</p> <p>30. Վարչական շրջանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոցում անցկացվել է 4-րդ կարգի համար որակավորման մրցաշար: Սաներից 5-ը ստացել են 4-րդ կարգ:</p> <p>31. Կազմակերպվել է մարզամշակութային կենտրոնի ձյուդոյի սաների մասնակցությունը «ԻՊՊՈՆ» ակումբի փակ առաջնությանը: Կենտրոնի սանը զբաղեցրել է 1-ին մրցանակային տեղը:</p> <p>32. Վարչական շրջանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոցում անցկացվել է 3-րդ կարգի համար որակավորման մրցաշար: Սաներից 4-ը ստացել են 3-րդ կարգ:</p> <p>33. Կազմակերպվել է մարզամշակութային կենտրոնի ձյուդոյի սաների մասնակցությունը ՌԴ ԿԲՌ-ում կայացած 2008-2016թթ. ծնված աղջիկների և տղաների միջազգային բաց առաջնությանը: Կենտրոնի սան Գագիկ Մելիքյանը զբաղեցրել է 1-ին պատվավոր տեղը:</p> <p>34. Վարչական շրջանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոցում անցկացվել է մարզադպրոցի բաց առաջնության եզրափակիչ մրցաշարը:</p> <p>ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/60-1</p> <p>35. Կազմակերպվել է 2023թ. ընթացքում հանրապետական և միջազգային մրցումներում մրցանակային տեղեր զբաղեցրած մարզիկների պարզևատրումը՝ վարչական շրջանի ղեկավարի կողմից հանձնվել են պատվոգրեր և նվերներ:</p>	<p>08.12.2023-16.12.2023թթ.</p> <p>16.12.2023-17.12.2023թթ.</p> <p>18.12.2023-27.12.2023թթ.</p> <p>«ՎՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ 26.12.2023թ.</p>	
--	--	---	--	--



349.	Սոցիալական ապահովության ծրագրեր	<p>1. Սոցիալակապես անապահով բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում:</p> <p>2. Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն:</p> <p>3. Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն:</p> <p>4. Սոցիալապես անապահով անձանց պետական պատվերի շրջանակներում բժշկական օգնությունների՝ հետազոտությունների, բուժումների անվճար կազմակերպում:</p>	<p>1. Պետպատվերի շրջանակում ստացիոնար բուժում, հետազոտություն կամ վիրահատական միջամտություն է ստացել 17 քաղաքացի:</p> <p>2. «Հայկական Կարմիր Խաչի» ընկերության հետ համագործակցության արդյունքում Նուբարաշեն վարչական շրջանում սոցիալական աջակցության կարիք ունեցող, ռազմաճակատ մեկնած վիրավոր և զոհված զինծառայող ունեցող թվով 3 ընտանիքներին տրամադրվել է հիգիենայի պարագաներ, հագուստ, ծածկոց, խոհանոցային հավաքածու: Արցախից բռնի տեղահանված 103 ընտանիքների տրամադրվել է բնափրային փաթեթներ, հիգիենայի պարագաներ:</p> <p>3. «Բիզ ստեպ» ՍՊԸ-ի հետ համագործակցության արդյունքում պատերազմից տուժած, միաձնող ընտանիքների տրամադրվել է կոշիկ: ԱԻՆ-ի կողմից 9 միաձնող, սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների տրամադրվել է գուլպա:</p> <p>4. «Սատար» ՀԿ –ի հետ համագործակցության արդյունքում Արցախից բռնի տեղահանված 35 ընտանիքների տրամադրվել է հիգիենայի պարագաներ</p> <p>5. Երևանի քաղաքապետարանի կողմից կանանց միամսյակի կապակցությամբ սոցիալական աջակցության կարիք ունեցող պատերազմից տուժած անձանց տրամադրվել է թվով 1 55 ներկայացումների տոմս:</p> <p>6. Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից սոցիալական աջակցության կարիք</p>	<p>03.01.2023-06.12.2024թթ.</p> <p>03.02.2023-10.11.2023թթ.</p> <p>16.02.2023-24.02.2023թթ. 01.02.2023-31.03.2023թթ.</p> <p>03.10.2023-26.12.2023թթ.</p>	
------	---------------------------------	---	--	--	--

		<p>5. Համագործակցության շրջանակներում բնակչության զբաղվածության խթանում, մասնագիտացում, որակավորում:</p> <p>6. Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում երեխաների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման անհրաժեշտություն:</p>	<p>ունեցող 6 ընտանիքի տրամադրվել է հագուստ և կոշիկ:</p> <p>7. Սոցիալակապես անապահով բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի շրջանակներում, Նուբարաշեն վարչական շրջանի բազմազավակ, սոցիալական աջակցության կարիք ունեցող, պատերազմից տուժած թվով 50 ընտանիքների տրամադրվել է կենցաղային իրեր (արդուկ, թեյնիկ, հարիչ):</p> <p>8. Երևանի քաղաքապետարանի կողմից, Նուբարաշեն վարչական շրջանի բազմազավակ, սոցիալական աջակցության կարիք ունեցող, միաձնող պատերազմից տուժած թվով 16 ընտանիքի տրամադրվել է բնափրային փաթեթներ և հիգիենայի պարագաներ:</p> <p>9. Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի շրջանակներում թվով 2 սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների տան տանիքի վերանորոգման նպատակով տրամադրվել է շինանյութ:</p> <p>10. Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված Երևանյան ամառ ծրագրի շրջանակներում, սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների թվով 29 երեխաներ այցելել են Մաչանենց տուն և Սիթիզեն մասնագիտությունների քաղաք:</p> <p>11. Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի</p>	<p>06.03.2023-08.03.2023թթ.</p> <p>01.03.2023-15.06.2023թթ.</p> <p>ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/91-1 ԱՁ «Լուսինե Ղազարյան» 15.05.2023-05.06.2023թթ.</p> <p>03.01.2023-22.05.2023թթ. ԵՔ-ՔԱՃԱՊՁԲ-23/019-1</p> <p>«ՆԱՐՍԱՆ ՍՊԸ» 10.07.2023թ. ԵՔ-ԷԱՃՑԲ-23/83-1</p>	
--	--	--	--	--	--

